

NORWEGIAN MINISTRY OF FOREIGN AFFAIRS

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների
կիրառման նվազեցումը՝
եվրոպական ստանդարտների համաձայն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԿՐԿՆԱՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ

ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2014

PC-ART by Michael Mirijanyan

Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կիրառման նվազեցումը՝
եվրոպական ստանդարտների համաձայն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԿՐԿՆԱՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ

ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը պատրաստվել է Եվրոպայի Խորհրդի կողմից իրականացվող “Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կիրառման նվազեցումը՝ եվրոպական ստանդարտների համաձայն” ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Նորվեգիայի կառավարության կողմից՝ Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարության (ՆԱԳՆ) միջոցով:

Հետազոտության մեջ տեղ գտած կարծիքներն ու տեսակետները հեղինակներինն են, և ՆԱԳՆ կամ Եվրոպայի Խորհրդի պատասխանատվության շրջանակներից դուրս են:

ԵՐԵՎԱՆ 2014

Հետազոտությունն իրականացվել է
«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից՝
«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի հետ
համագործակցությամբ:

Աշխատանքային խումբ:

Արման Դանիելյան, խմբի ղեկավար
Աննա Մելիքյան, իրավաբան
Տաթևիկ Ղարիբյան, իրավաբան
Անի Վարդանյան, իրավաբան
Յուլիանա Մելքումյան, սոցիոլոգ
Հրանտ Ավանեսյան, հոգեբան
Սերգեյ Առաքելյան, քրեաբան
Մարիամ Սարգսյան, Հասմիկ Հարությունյան և **Հայկ Թադևոսյան,** հարցազրուցավարներ
Թագուհի Սուսլիյան, խմբագիր

ՔՀԻ իր խորին երախտագիտությունն է հայտնում միջազգային փորձագետ, դատական հոգեբան Քեթրին Քրիմերին,

և միջազգային փորձագետ, Գլազգոյի Կալեդոնիան համալսարանի դատական հոգեբանության ծրագրերի տնօրեն Էլիզաբեթ Գիլքրիսթին՝

խորհրդատվական բնույթի աջակցության, տրամադրած դիտարկումների և կարծիքների համար:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
Այգեստանի 11-րդ փողոց, 43 տուն
Երևան, 0025, ՀՀ
Հեռ.՝ +37410 574317
csi@csi.am
www.csi.am; www.hra.am

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հկ-ն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությանը և վերջինիս Այլընտրանքային պատիժների կատարման բաժնին՝ դատապարտված անձանց, ինչպես նաև համապատասխան աշխատակիցների հետ հարցազրույցների կազմակերպման հարցում նշանակալի աջակցության, ինչպես նաև ՔԿՀ-ների և Այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային ստորաբաժանումներ հետազոտության աշխատանքային խմբի ներկայացուցիչների մուտքն ապահովելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև ՀՀ ոստիկանությանը, ՀՀ գլխավոր դատախազությանն ու ՀՀ դատական դեպարտամենտին՝ փորձագետների հետ հարցազրույցների կազմակերպման հարցում աջակցության համար: Առանձին շնորհակալություն ենք հայտնում հետազոտության շրջանակներում հարցազրույցներին մասնակցած բոլոր փորձագետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 7

I.Հակիրճ ամփոփում 8

II.Ներածություն 11

2.1 Ընդհանուր տեղեկություններ 11

2.2 Նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործություններ 15

2.3 Նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների տեսակները 18

2.4 Կրկնահանցագործության միտումներն ըստ մարզերի 20

III.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 23

3.1 Հետազոտության նպատակը և խնդիրները 23

3.2 Տեղեկություններ հավաքագրելու մեթոդները և ընտրանքը 24

3.3 Ընտրանքը 26

IV. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 28

4.1 Հանցավորության և կրկնահանցագործության պատճառները և դրանց վրա ազդող գործոնները 28

4.2. Հանցավորության վրա ազդող գործոններն՝ ըստ փորձագետների 29

4.3 Կրկնահանցագործության նպաստող գործոններն՝ ըստ փորձագետների 32

4.4 Փորձագետների կողմից մատնանշված՝ կանանց և անչափահասներին բնորոշ առանձնահատկությունները 35

4.4.1 Անչափահասներին բնորոշ առանձնահատկությունները 35

4.4.2 Կանանց բնորոշ առանձնահատկությունները 36

4.5 Հանցագործություն կատարելուն նպաստող գործոններն՝ ըստ հարցված պատիժը կրող կամ կալանավորված անձանց 37

4.6 Կրկնահանցագործություն կատարելուն նպաստող գործոններն՝ ըստ հարցված պատիժը կրող կամ կալանավորված անձանց 38

4.7 Պատիժը կրող կամ կալանավորված անձանց հետ հարցազրույցների վերլուծություն 38

V.Պատժատեսակի ազդեցությունն իրավախախտների և կրկնահանցագործության վրա 48

5.1 Ընդհանուր տեղեկություններ 49

5.2 Ազատազրկում 50

5.2.1 Հարցված փորձագետների գնահատումը 50

5.2.2 Պատիժը կրող կամ կալանավորված անձանց հետ հարցազրույցների վերլուծություն 51

5.3 Այլընտրանքային պատժատեսակներ 54

5.3.1 Ընդհանուր տեղեկություններ 54

5.3.2 Այլընտրանքային պատժատեսակների ազդեցությունը՝ ըստ հարցված փորձագենտների գնահատման 59

5.3.3 Պատիժը կրող կամ կալանավորված անձանց հետ հարցազրույցների վերլուծություն 61

VI. Պատժի կրումից ազատելը և դրա ազդեցությունը կրկնահանցագործության վրա 62

6.1 Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը 62

6.1.1 Նախնական տեղեկություններ 62

6.1.2 Պայմանական վաղաժամկետ ազատման ազդեցությունը կրկնահանցագործության վրա՝ ըստ հարցված փորձագետների գնահատման 69

6.2 Համաներում 70

6.2.1 Նախնական տեղեկությունններ 70

6.2.2 Համաներման ազդեցությունը կրկնահանցագործության ռիսկերի վրա՝ ըստ հարցված փորձագետների գնահատման 73

VII. Պատիժը կրելու ընթացքում և ազատ արձակվելուց հետո աջակցությունը և կրկնահանցագործության կանխումը 74

7.1 Նախնական տեղեկություններ 74

7.1.1 Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ դատապարտյալների հետ 74

7.1.2 Դատապարտյալների գնահատումը և բնութագրումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացնելիս 77

7.2 Առկա աջակցության միջոցների գնահատումը՝ ըստ հարցված փորձագետների 78

7.3 Պատիժը կրող կամ կալանավորված անձնաց հետ հարցազրույցների վերլուծություն 80

VIII. Պրոբացիոն ծառայությունը՝որպես կրկնահանցագործությունը կանխելու միջոց 82

8.1 Նախնական տեղեկություններ 82

8.2 Պրոբացիոն ծառայության հնարավոր դերակատարությունը ռիսկերի կառավարման ոլորտում՝ ըստ հարցված փորձագետների գնահատման 84

8.3 Պատիժը կրող կամ կալանավորված անձանց հետ հարցազրույցների վերլուծություն 89

IX. Եզրակացություն 89

Հավելված 1. Պատիժը կրող հարցված անձանց վերաբերյալ տվյալներ 96

Հավելված 2. Փորձագիտական հարցազրույցի հարցաշար 98

Հավելված 3. Պատիժը կրող անձի հետ հարցազրույցի հարցաշար 100

Հապավումների ցանկ

ԱՊԿԲ –	Այլընտրանքային պատիժների կատարման բաժին
ԱՆ –	Արդարադատության նախարարություն
ՀԿ –	Հասարակական կազմակերպություն
ՀՀ –	Հայաստանի Հանրապետություն
ՔՀԻ –	Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
ՔԿՀ –	Քրեակատարողական հիմնարկ
ՔՕ –	Քրեական օրենսգիրք

I. Հակիրճ ամփոփում

Հայաստանն իրականացվող բարեփոխումների շրջանակներում պատրաստակամություն է հայտնել ստեղծել պատշաճ իրավական համակարգ: Այդ համակարգը պետք է ներառի քրեական արդարադատության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ միջոցառումներ, որոնք, ի թիվս այլ խնդիրների, պետք է նպատակադրվեն դատապարտված անձանց ուղղմանը և վերաինտեգրմանը, ինչպես նաև հանցագործությունների և կրկնահանցագործության կանխարգելմանը: Այս նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանում հանցավորության և կրկնահանցագործության պատճառները, տարբեր պատժատեսակների և միջոցների բացասական և դրական ազդեցությունը հանցանք կատարած անձանց կրկնահանցագործության վրա, ինչպես նաև՝ հանցանք կատարած անձանց կրկնահանցագործություն կատարելու կանխարգելման կամ ուղղման տարբեր մեթոդների և մոտեցումների արդյունավետությունը: ՀՀ-ում սահմանափակ է նաև օրենսդրությամբ նախատեսված ազատազրկման հետ չկապված պատիժների և միջոցների կիրառումը (այդ թվում՝ պայմանական վաղաժամկետ ազատելը և պատժի պայմանական չկիրառելը): Այսօր ՀՀ-ում սուր է այս ոլորտի վերաբերյալ վստահելի տեղեկատվության բացակայության խնդիրը, ինչը, սակայն, անհրաժեշտ է ինչպես հանրության լայն շերտերին, այնպես էլ որոշում կայացնողներին Պրոբացիոն ծառայության ստեղծման գործընթացի վերաբերյալ հնարավորինս համապարփակ և մատչելի տեղեկատվություն տրամադրելու համատեքստում:

2014 թվականի հունվար-մարտ ամիսներին «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի աջակցությամբ, իրականացրել է սոցիոլոգիական հետազոտություն, որի նպատակն էր պարզել ՀՀ-ում հանցագործություն կատարելու նախադրյալները և կրկնահանցագործության պատճառները: Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ կիրառվող պատիժների և միջոցների ազդեցությունը՝ կրկնահանցագործությունը կանխարգելելու տեսանկյունից: Մասնավորապես, գնահատվել է ազատազրկման և ազատազրկման հետ կապ չունեցող պատիժների և միջոցների, այդ թվում՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու և պայմանական վաղաժամկետ ազատման ազդեցությունները կրկնահանցագործությունը կանխարգելելու, ինչպես նաև հասարակությանը վերաինտեգրվելու տեսանկյունից: Ուսումնասիրվել է նաև մոտ ապագայում ներդրվող պրոբացիայի ծառայության հնարավոր դերը:

Հետազոտության իրականացման նպատակով հարցազրույցներ են անցկացվել 53 փորձագետների և 179 դատապարտված կամ նախկինում դատապարտված և

հետազոտության անցկացման պահին հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող ու անազատության մեջ գտնվող անձանց հետ: Վերլուծվել են նաև պաշտոնական վիճակագրական տվյալներ:

2013 թվականին արձանագրվել է 18-24 տարեկան անձանց կողմից կատարված հանցագործությունների աճ: Բավական մտահոգիչ է նաև կանանց կողմից կատարվող հանցագործությունների թվի աճը: Միևնույն ժամանակ, զգալիորեն նվազել է անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների թիվը: Պարզվել է նաև, որ չնայած նախորդ տարիներին Հայաստանում գրանցված հանցագործությունների թվի աճին, կրկնահանցագործության ցուցանիշը անշեղորեն նվազում է՝ կազմելով 2013 թվականին գրանցված հանցագործությունների 3,7%-ը, իսկ բացահայտվածների՝ 5,58%-ը: 2013 թվականին նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների 65%-ը կազմել են ոչ մեծ (50,22%) և միջին ծանրության (14,46%) հանցագործությունները:

Հետազոտության արդյունքում արձանագրվել են ՀՀ-ում կրկնահանցագործությանը նպաստող հետևյալ պատճառները և գործոնները. սոցիալական անապահովությունը, որը հանդես է գալիս այլ գործոնների հետ համակցությամբ, ընտանեկան ոչ բարենպաստ պայմանները, ՔԿՀ-ում և դրանից դուրս դատապարտյալի միջավայրն ու շրջապատը, այդ թվում՝ հասարակության մեջ հանցավոր գաղափարախոսության (ենթամշակույթի) ներթափանցումը և տարածումը, պետական և հասարակական մարմինների ոչ բավարար աջակցությունն իրավախախտ անձանց, մասնավորապես՝ ուսումնական ծրագրերի կազմակերպման և զբաղվածության ապահովման ուղղությամբ, ինչպես նաև հանցագործությունների և կրկնահանցագործությունների կանխարգելմանն ուղղված արդյունավետ միջոցառումների բացակայությունը: Բացի այդ, ընտանեկան վիճակը, անձնային որակները, հանցավոր ենթամշակույթում ներգրավվելը, հասարակության կողմից պիտակավորումը: Կարևոր դեր են խաղում թմրամոլությունն և խաղամոլությունը: Թեև ՀՀ-ում հասարակության կողմից դատվածություն ունեցող անձանց պիտակավորումը լուրջ բացասական գործոն չի հանդիսանում, այն փաստը, որ գործատուները խուսափում են նման անձանցից, կարող է կրկնահանցագործության նախապայման հանդիսանալ:

2013 թվականին դատարանների կողմից մեղավոր ճանաչված անձանց 78%-ի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է ազատազրկում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատազրկումը մարդու կյանքի բոլոր ոլորտներում բացասական ազդեցություն է ունենում: Այն ազդում է անձի և նրա ընտանիքի նյութական բարեկեցության և եկամտի վրա, նվազեցնում է աշխատանք ունենալու կամ պատիժը կրելուց հետո այն ձեռք բերելու հնարավորությունը, ինչպես ինչպես նաև բժշկական ոչ լիարժեք սպասարկման և

քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածության հետևանքով առողջական վիճակի վատթարացման պատճառ կարող է դառնալ: Բացի այդ, ազատազրկման վայրերում ավելի մեծ է շրջապատի և միջավայրի բացասական ազդեցությունը: Մտահոգություններ հնչեցին, որ ազատազրկումն ավելի շուտ նպաստում է կրկնահանցագործությանը, քան՝ կանխում այն, քանի որ պատիժը կրելու ընթացքում ազատազրկվածները միմյանցից շատ բան են սովորում, տեղի է ունենում հանցավոր փորձի փոխանակում (այսպես կոչված դևիանտ (շեղվող) վարք որդեգրելու ազդեցություն): ՀՀ-ի պայմաններում ազատազրկումը գլխավորապես ծառայում է անձին հասարակությունից մեկուսացնելու խնդրին, իսկ անձին ուղղելու ուղղությամբ արդյունավետ աշխատանքներ չեն իրականացվում: Կադրերի պակասը և համապատասխան մասնագիտական որակավորման հետ կապված խնդիրները, ՔԿՀ-ների գերբեռնվածության հետ մեկտեղ, հանգեցնում են նրան, որ դատապարտյալների հետ արդյունավետ աշխատանքներ չեն իրականացվում:

Մինչդեռ փորձը ցույց է տալիս, որ ազատազրկման հետ չկապված պատիժ կրելը ավելի մեղմ ազդեցություն է ունենում անձի և նրա ընկերների, հարազատների, հարևանների և ընտանիքի անդամների հետ շփման վրա: Այդ տեսակի պատժամիջոցները նպաստում են դատապարտված անձի ադեկվատ վերասոցիալականացմանը և կանխում են նրա ներգրավվելը հանցավոր ենթամշակույթի մեջ: Հարցազրույցների ընթացքում բազմիցս ընդգծվել է այլընտրանքային պատժատեսակների ավելի լայն կիրառման անհրաժեշտությունը, հատկապես առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, քանի որ դրանք դրական ազդեցություն են ունենում դաստիարակչական և նոր հանցագործությունների կանխարգելման տեսանկյունից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս այլընտրանքային պատիժ կրողների համար նախատեսված չեն սոցիալական աշխատողի և հոգեբանի աշխատանքներ, կարևորվեց նման մասնագետների աշխատանքը և նրանց ներգործությունը պատիժը կրող անձանց վրա: Այլընտրանքային պատժի կրումը պետք է ուղեկցվի դատապարտյալի հետ տարբեր մասնագետների, այդ թվում՝ հոգեբանի, սոցիալական աշխատողի, սոցիալական մանկավարժի, իրավաբանի, նպատակային աշխատանքներով: Կրկնահանցագործություն կատարելու ռիսկը բարձր է պատժի կրումից ազատվելուց հետո երեք տարվա ընթացքում:

Ընդգծվել է նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի ավելի հաճախակի կիրառման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով զանազան գործոններ: Պատժի և համապատասխան մարմինների աշխատանքի արդյունավետությունը կախված է անձի նկատմամբ փորձաշրջանի ընթացքում վերահսկողություն իրականացնելուն ուղղված աշխատանքներից:

Հետազոտությամբ հիմնավորվել է, որ մոտ ապագայում ստեղծվելիք պրոբացիայի ծառայությունը կարող է դրական ազդեցություն ունենալ կրկնահանցագործության կանխարգելման տեսանկյունից: Դատապարտյալի և նրա ընտանիքի հետ ավելի շատ աշխատանքներ պետք է իրականացվեն, ինչպես նաև համապատասխան աջակցություն պետք է ցուցաբերվի, այդ թվում՝ կրթության և զբաղվածության ապահովման ուղղությամբ:

II. Ներածություն

2.1 Ընդհանուր տեղեկություններ

ՀՀ պաշտոնական վիճակագրական տվյալների[1] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում հանրապետությունում գրանցված հանցավորության միտումներն անբարենպաստ են (տե՛ս *գծապատկեր 1*): Մասնավորապես, եթե 2004-2007 թվականներին գրանցված հանցագործությունների քանակն ընդհանուր առմամբ նվազել է, ապա 2007-2013 թվականներին ակնհայտ է դրանց անընդհատ աճի միտումը:

Գծապատկեր 1. ՀՀ-ում գրանցված հանցագործությունների թիվը



Գծապատկերից պարզ է դառնում, որ 2013 թվականի ընթացքում, 2012 թվականի համեմատությամբ, ՀՀ-ում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակն աճել է 16,2%-ով (18.333 դեպք՝ 2013-ին և 15.776՝ 2012-ին): Չի բացառվում, որ գրանցված հանցագործությունների թվաքանակի աճը վերջին տարիներին հանցագործությունների գրանցման հետ կապված աշխատանքների բարելավման արդյունք է, ինչն, իր հերթին, նպաստել է հանցավորության լատենտային (պաշտոնական վիճակագրությանն անհայտ մնացած) մասի նվազմանը:

[1] Վիճակագրական տվյալները տրամադրվել են ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից թիվ 6/15-1145 գրությամբ 2014 թ. մարտի 17-ին:

Համաձայն ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2013 թվականին բացահայտվել է գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակի 66%-ը (12.023 դեպք), մինչդեռ 2012 թվականին այդ ցուցանիշը եղել է 78% (գրանցված 15.776 դեպքից բացահայտվել է 12.264-ը), այսինքն՝ զգալիորեն նվազել է բացահայտված հանցագործությունների ցուցանիշը:

Աղյուսակ 1. 2013 թվականին ՀՀ-ում կատարված հանցագործությունները

ՀՀ մարզ	Պատասխանատվության ենթարկված անձանց ընդհանուր թիվը	ըստ տարիքային խմբերի					Իգա-կան սեռ	Նախկի-նում դատապարտված
		14-17	18-24	25-29	30-49	50 և բարձր		
Երևան	4658	173	922	814	1927	822	680	87
Արագածոտն	374	12	53	63	183	63	37	15
Արարատ	822	21	164	142	384	171	110	15
Արմավիր	926	25	159	151	405	186	87	13
Գեղարքունիք	754	18	96	97	316	227	137	9
Լոռի	927	29	173	139	394	192	114	60
Կոտայք	876	25	132	130	392	197	117	27
Շիրակ	901	17	130	152	394	208	179	47
Վայոց ձոր	164	8	27	26	65	38	24	5
Սյունիք	457	12	79	72	199	95	47	24
Տավուշ	431	10	61	74	197	89	47	23
Ընդամենը ՀՀ	11446	352	2009	1872	4903	2310	1613	327

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ վերջին տարիներին կանանց կողմից կատարվող հանցագործությունների աճ է նկատվում (տե՛ս *գծապատկեր 2*): Այսպես, 2013 թվականին քրեական պատասխանատվության ենթարկված կանանց թիվը կազմել է ՀՀ տարածքում բացահայտված հանցագործությունների 13,4%-ը (12.023 դեպքից 1613-ը), 2012 թվականին այդ ցուցանիշը եղել է 11,6% (12.264 դեպքից 1420-ը): Սույն հետազոտության շրջանակներում հնարավոր չի եղել բացահայտել կանանց կողմից կատարվող հանցագործությունների աճի իրական պատճառները, քանի որ հավաքագրված տեղեկությունները բավարար չէին օբյեկտիվ եզրահանգումների համար: Այնուամենայնիվ, նման միտումը կարող է պայմանավորված լինել ինչպես քաղաքականության փոփոխությամբ, այն է՝ կանանց քրեական պատասխանատվության ենթարկելը, կամ կանանց շրջանում հանցավորության աճով, այնպես էլ այս երկու գործոնների համադրությամբ:

Ինչ վերաբերում է անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների թվին, ապա վերջին երկու տարիների ընթացքում այդ ցուցանիշն էականորեն նվազել է՝ մոտ 100 դեպքով (տե՛ս *գծապատկեր 2)*: Դա պայմանավորված է իրավախախտ անչափահասների հետ աշխատող վերականգնողական կենտրոնների աշխատանքի արդյունավետությամբ, որտեղ անչափահասներն ուղղորդվում են ոստիկանության կողմից:

Գծապատկեր 2. ՀՀ-ում կանանց և անչափահասների կողմից կատարված հանցագործությունների դինամիկան



Ստորև ներկայացված *3-րդ գծապատկերը* արտացոլում է 2010-2013 թվականների ընթացքում տարիքային խմբերի կողմից կատարված հանցագործությունների պատկերը:

Գծապատկեր 3. ՀՀ-ում հանցագործություն կատարած անձանց տարիքային խմբերը



Թեև բացահայտված հանցագործությունների գրեթե կեսը կատարել են 30-49 տարեկան անձինք, իսկ վերջին տարիներին աճել է 18-24 տարեկան անձանց կողմից կատարվող հանցագործությունների թիվը, այնուամենայնիվ, նրանց կողմից կատարվող հանցագործությունների մասնաբաժինը ամենամեծը չէ: Ինչպես երևում է *4-րդ գծապատկերից,* ամենամեծ մասնաբաժինը 25-29 տարիքային խմբինն է՝ ըստ ՀՀ բնակչության հաշվով այդ տարիքային խմբի կատարված հանցագործությունների թվի[2]: Այսպես, 2013 թվականին ՀՀ-ում բնակվել է 25-29 տարեկան 103.416 անձ, և այդ տարիքային խմբի կողմից կատարված հանցագործությունների թիվը նույն ժամանակահատվածում կազմել է 1872 (1,81%): Միևնույն ժամանակահատվածում ՀՀ-ում բնակվող 288.035 30-49 տարիքային խմբի կողմից կատարված հանցագործությունների թիվը եղել է 4903 (1,70%):

Գծապատկեր 4. 2011-2013 թվականների ընթացքում ՀՀ բնակչության հաշվով հանցագործություն կատարած անձանց մասնաբաժինն ըստ տարիքային խմբերի



Ինչպես երևում է գծապատկեր 4-ից, հիրավի, աճ է արձանագրվել քրեական պատասխանատվության ենթարկված 18-24 տարիքային խմբի շրջանում, սակայն այդ ցուցանիշն ամենաբարձրը չէ:

[2] Պաշտոնական վիճակագրությունը հասանելի է www.armstat.am կայքում:

2.2 Նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործություններ

Կատարված և գրանցված հանցագործությունների ընդհանուր թվից մի մաս են կազմում նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունները: 2004 թվականից ի վեր արձանագրվել է շատ հետաքրքիր միտում՝ հանցագործությունների ընդհանուր թվի աճի պարագայում զգալիորեն նվազել է այն բացահայտված հանցագործությունների թիվը, որոնք կատարվել են նախկինում դատապարտված անձանց կողմից (տե՛ս *գծապատկեր 5)*:

Գծապատկեր 5. ՀՀ-ում կրկնահանցագործության դինամիկան



Մասնավորապես, եթե 2004 թվականին գրանցված հանցագործությունների կառուցվածքում նախկինում հանցանք կատարողների կողմից իրականացված հանցագործությունները կազմել են 18,6%, ապա 2005 թվականին՝ 17,6%, 2006 թվականին՝ 17,0%, 2007 թվականին՝ 14,7%, 2008 թվականին՝ 12,9%, 2009 թվականին՝ 11,3%, 2010 թվականին՝ 8,5%, 2011 թվականին՝ 8,7%, 2012 թվականին՝ 6,8%, իսկ 2013 թվականին՝ ընդամենը 3,7% (տե՛ս *գծապատկեր 6)*: Իսկ եթե վերլուծենք ոչ թե գրանցված, այլ բացահայտված հանցագործությունների և կրկնահանցագործությունների թիվը, ապա 2012 թվականին բացահայտված հանցագործությունների թվից նախկինում դատապարտված անձանց կողմից կատարվել է հանցագործությունների 8,78%-ը (12.264 դեպքից 1077-ը), իսկ 2013 թվականին այդ ցուցանիշը կազմել է 5,58% (12.023 դեպքից 671-ը): Հանցագործությունների ընդհանուր աճի համատեքստում նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների թվի նվազումը բավականին մտահոգիչ միտում է, քանզի նշանակում է, որ ամեն տարի հազարավոր նոր մարդիկ հանցագործություն են կատարում:

Գծապատկեր 6. 2004-2013 թվականների ընթացքում ՀՀ-ում գրանցված հանցագործություններում նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների մասնաբաժինը



Հատկանշական է, որ համաձայն ՀՀ ոստիկանության պաշտոնական տվյալների՝ ՀՀ-ում հանցագործությունների ընդհանուր թվաքանակի աճի պարագայում 2,39%-ով նվազել է քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը (2013 թվականին՝ 11.446, իսկ 2012 թվականին՝ 11.719 անձ) (տե՛ս *գծապատկեր 7):* Նման միտում արձանագրվել էր նաև 2012 թվականին՝ 2011 թվականի համեմատությամբ հանցագործությունների ընդհանուր թվաքանակի նվազմանը զուգընթաց 1,48%-ով նվազել է քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը:

Վերլուծելով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց ցուցանիշները, այդ թվում նաև՝ նախկինում դատապարտված անձանց մասնաբաժինը, ներառյալ անչափահասները, ստանում ենք հետևյալ պատկերը (տե՛ս *գծապատկեր 7)*՝

Գծապատկեր 7. 2010-2013 թվականների ընթացքում ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը



2013 թվականին նախկինում դատապարտված անձանց մասնաբաժինը քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թվի հաշվով կազմել է 2,9%:

Համեմատության կարգով նշենք, որ 2012 թվականին այն եղել է 3,8%, 2011 թվականին՝ 4,5%, իսկ 2010 թվականին՝ 4,9% (տե՛ս *գծապատկեր 8)*:

Գծապատկեր 8. 2010-2013 թվականների ընթացքում ՀՀ-ում նախկինում դատապարտված անձանց թիվը, ներառյալ անչափահասները



Ինչպես տեսնում ենք, վերջին երկու տարիների ընթացքում անչափահասների շրջանում կրկնահանցագործությունը կա՛մ բացակայում է (2012 թվական), կա՛մ աննշան է (2013 թվական՝ կազմելով նախկինում դատապարտված բոլոր անձանց կողմից կատարված հանցագործությունների 0,6%-ը): Այդ միտումը շատ դրական է և պայմանավորված է ոստիկանության և վերականգնողական կենտրոնների համատեղ արդյունավետ աշխատանքով:

Կրկնահանցագործության նվազումը կարող է ունենալ մի քանի բացատրություն: Նախ՝ վերջին տարիներին աճել է գրանցված հանցագործությունների թիվը, ինչը ՀՀ ոստիկանության՝ այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների բարելավման արդյունքն է: Սակայն դա չի նշանակում, որ ավելի շատ հանցագործություն է կատարվել, քանզի նախորդ տարիներին ավելի քիչ թվով հանցագործություն էր գրանցվում, և ավելի մեծ էր նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների մասնաբաժինը: Առաջարկվել են նաև այլ բացատրություններ, այդ թվում՝ հանցագործների միգրացիան, ինչպես նաև ոստիկանության աշխատանքների և պրակտիկայի բարելավումը:

Նշվել է, որ նախորդ տարիներին ոստիկանությունն ավելի հակված էր որևէ հանցագործություն կատարվելու դեպքում առաջին հերթին բերման ենթարկել նախկինում դատապարտված անձանց, փորձել ապացուցել նրանց մեղքը և ստիպել խոստովանել այն:

Փորձագետներից մեկի կարծիքով՝ ներկայումս ոստիկանությունը շահագրգռված չէ արձանագրել կրկնահանցագործության ցուցանիշների աճ, քանի որ այն կարող է բացասական կարծիք ձևավորել հանցագործությունների և, մասնավորապես, կրկնահանցագործությունների կանխարգելմանն ուղղված ոստիկանության աշխատանքների մասին:

Չնայած հանցագործությունների գրանցման ուղղությամբ աշխատանքները բավականին բարելավվել են, 2013 թվականին դրանց 34%-ը մնացել է չբացահայտված: Չի բացառվում, որ չբացահայտված հանցագործությունների մի մասը կատարվել է նախկինում դատապարտված անձանց կողմից, ովքեր ավելի են հմտացել, և ավելի դժվար է նրանց մեղքն ապացուցելը: Մյուս բացատրությունը կարող է լինել այն, որ նախկինում մի քանի անգամ դատապարտվածները պատժի կրումից գրեթե չեն ազատվում պայմանական վաղաժամկետ: Այդ եզրահանգումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ համաներումից հետո աճում է հանցավորության մակարդակը, քանի որ համաներումից օգտվում են նաև այդ խմբին պատկանող անձինք:

2.3 Նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների տեսակները

Վերջին տարիներին արձանագրվել է նախկինում դատապարտված անձանց կողմից կատարվող որոշ տեսակի հանցագործությունների աճ: Հատկանշական է, որ 2013 թվականին նախկինում դատապարտված անձանց կողմից կատարվել է 97 (14,46%) միջին ծանրության և 337 (50,22%) ոչ մեծ ծանրության հանցագործություն, ինչը կազմում է ՀՀ-ում նման տեսակի հանցագործությունների ընդհանուր թվի համապատասխանաբար 3,6%-ը և 4,3%-ը:

2013 թվականին նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների մեծ մասը սեփականության դեմ ուղղված հանցագործություններ են, այդ թվում՝ գողություն (ՀՀ ՔՕ 177-րդ հոդված)՝ կատարված բոլոր հանցագործությունների 49,5%-ը: Երկրորդ տեղում են թմրամիջոցների պահման կամ շրջանառության հետ կապված հանցագործությունները (ՀՀ ՔՕ 266-րդ և 268-րդ հոդվածներով նախատեսված արարքները)՝ 18,7%, երրորդ տեղում է ծեծը (ՀՀ ՔՕ 188-րդ հոդված)՝ 8%:

Իսկ եթե տարանջատենք վերը նշված հանցատեսակներն ըստ ծանրության, ստացվում է, որ նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքում առաջին տեղում գողությունն է (ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 1-ին մաս)՝ կատարված բոլոր հանցագործությունների 19,5%-ը և ոչ մեծ ծանրության բոլոր հանցագործությունների 39%-ը, ինչպես նաև խարդախությունը (ՀՀ ՔՕ 178-րդ հոդվածի 1-ին մաս)՝ 3,3% և ծեծը՝ 8%: Միջին ծանրության հանցագործությունների շարքում ամենամեծը նույնպես գողության մասնաբաժին է (ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 2-րդ մաս)՝ կատարված հանցագործությունների 7%-ը և կատարված միջին ծանրության բոլոր հանցագործությունների գրեթե կեսն, ինչպես նաև թմրամիջոցների պահման կամ

շրջանառության հետ կապված հանցագործությունները (ՀՀ ՔՕ 268-րդ հոդվածի 2-րդ մաս)՝ 2%-ը (տե՛ս *գծապատկեր 9)*:

Գծապատկեր 9. 2013 թվականին ՀՀ-ում նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործություններն՝ ըստ տեսակների



Հատկանշական է, որ 2013 թվականին նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված սովորական գողությունների (ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 1-ին մաս) ցուցանիշը նվազել է, իսկ բնակարան մուտք գործելու միջոցով գողությունների (ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետ) ցուցանիշը, որը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, աճել է (տե՛ս *գծապատկեր 10)*: 2011-2012 թվականներին 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գողությունների թվի զգալի աճը կարող է բացատրվել 2011 թվականի մայիսին հանրապետությունում հայտարարված համաներումը կիրառելու փաստով, որից օգտվել է նաև այդ հոդվածով դատապարտված անձանց մեծ մասը, քանի որ այն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին:

Գծապատկեր 10. 2010-2013 թվականների ընթացքում ՀՀ-ում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները



Թեև նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված թմրամիջոցների շրջանառության հետ կապված ոչ մեծ և միջին ծանրության

հանցագործությունների թիվն աճել էր 2011-2012 թվականներին, այն կրկին նվազել է 2013 թվականին: Սակայն այդ տեսակի ծանր հանցագործությունների թիվն աճել է, մասնավորապես, անշեղորեն աճում է 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների թիվը (տե՛ս *գծապատկեր 11):* Այս միտումը մտահոգության տեղիք է տալիս: Քանի որ 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, միտումն արձանագրում է, որ ավելի հաճախ կատարվում են այդ տեսակի ծանր հանցագործություններ: Նշենք, որ 266-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև 268-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արարքները ոչ մեծ ծանրության հանցագործություններ են, իսկ 268-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը՝ միջին ծանրության:

Գծապատկեր 11. 2010-2013 թվականների ընթացքում ՀՀ-ում թմրամիջոցների շրջանառության հետ կապված հանցագործությունները



2.4 Կրկնահանցագործության միտումներն ըստ մարզերի

2013 թվականին բացահայտված հանցագործությունների մեծ մասը՝ 46%-ը, կատարվել է Երևանում: Երկրորդ տեղը զբաղեցնում է Արմավիրը, որտեղ կատարվել է բացահայտված հանցագործությունների 7,8%-ը: Հատկանշական է, որ նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված բոլոր հանցագործությունների 38%-ը տեղի է ունեցել Երևանում, 15,2%-ը՝ Կոտայքում, 11,5%-ը՝ Լոռիում, 10,6%-ը՝ Շիրակում, իսկ 5,1%-ը՝ Արմավիրում (տե՛ս *գծապատկեր 12):*

Գծապատկեր 12. 2013 թվականի ՀՀ-ում կրկնահանցագործությունն՝ ըստ մարզերի



2010-2013 թվականների ընթացքում մարզերում նախկինում քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թվաքանակի վերլուծությունը ցույց է տվել, որ գրեթե 1/3-ը Երևանից է (տե՛ս *գծապատկեր 13):* Սակայն, եթե այդ ցուցանիշները վերլուծվեն ելնելով բնակչության թվաքանակից, ապա պատկերը կփոխվի: Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2013 թվականին ՀՀ մշտական բնակչության թիվը կազմել է 3026879 մարդ[3]: 2013 թվականին 327 մարդ (10.8 մարդ 100 000 բնակչի հաշվով) ենթարկվել է քրեական պատասխանատվության: Եթե այս ցուցանիշը բաշխենք ըստ մարզերի, ստացվում է, որ Երևան քաղաքում այն կազմում է 8.2 մարդ 100 000 բնակչի հաշվով, Արագածոտնի մարզում՝ 11.3, Արարատում՝ 5.7, Արմավիրում՝ 4.9, Գեղարքունիքում՝ 3.8, Լոռիում՝ 25.6, Կոտայքում՝ 10.6, Շիրակում՝ 18.7, Սյունիքում՝ 16.9, Վայոց ձորում՝ 9.6, Տավուշում՝ 17.9: Ինչպես երևում է, ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Լոռիում, որը գրեթե երկուսուկես անգամ բարձր է, քան ՀՀ-ի միջին ցուցանիշը:

[3] Տե՛ս www.armstat.am

Գծապատկեր 13. 2010-2013 թվականների ընթացքում ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթարկված՝ նախկինում դատապարտված անձանց թիվը (100%) ըստ մարզերի



	2010	2011	2012	2013
Երևան	42.00%	34.00%	31.70%	26.60%
Արարատ	5.90%	7.10%	3.60%	4.60%
Արմավիր	6.90%	4.90%	4.30%	4.00%
Արագածոտն	3.30%	3.60%	3.40%	4.60%
Կոտայք	8.70%	10.30%	11.80%	8.30%
Լոռի	10.90%	13.10%	13.60%	18.30%
Գեղարքունիք	3.50%	2.80%	3.90%	2.80%
Շիրակ	9.50%	13.90%	16.60%	14.40%
Սյունիք	2.30%	4.90%	4.80%	7.30%
Վայոց ձոր	2.20%	1.90%	3.20%	1.50%
Տավուշ	3.20%	3.40%	2.90%	7.00%

Ինչպես երևում է գծապատկերից, 2013 թվականին Երևանում նախկինում դատապարտված անձանց թիվը, ովքեր ենթարկվել են քրեական պատասխանատվության, նվազել է, իսկ Սյունիքում և Տավուշում՝ աճել:

Սակայն, եթե վերլուծենք մարզերում կրկնահանցագործության միտումներն ըստ հանցատեսակի, ապա ակնհայտ է, որ կրկնահանցագործությունների մեծ մասը կազմում են գողությունները: ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կազմել է նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված բոլոր հանցագործությունների 19,5%-ը: Նման արարքների մեծ մասը՝ 30,5%-ը, կատարվել է Կոտայքում, իսկ 29%-ը՝ Երևանում: 2013 թվականին կատարված հանցագործությունների վերլուծությունն ըստ մարզերի ցույց է տալիս, որ Արմավիրում և Կոտայքում ավելացել են նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված գողություններն, ընդ որում՝ Արմավիրում դրանց թիվը 2-ից աճել է 11-ի, իսկ Կոտայքում՝ 16-ից ընդհուպ 40, մինչդեռ Երևանում նման

հանցագործությունների թիվը նվազել՝ 2011 թվականին կատարված 58 դեպքի համեմատ նախ աճ է գրանցվել 2012 թվականին՝ կազմելով 166 դեպք, իսկ 2013 թվականին այդ ցուցանիշը կտրուկ նվազել է՝ կազմելով 38 դեպք:

Հատկանշական է, որ 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքների (նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների 7%) թիվը Երևանում նույնպես նվազել է ՝ 2012 թվականին 89 գրանցված դեպքից 2013 թվականին հասնելով 10-ի: Իսկ Արմավիրում ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների 11-ից 9-ը կատարվել է նախկինում դատապարտված անձանց կողմից:

ՀՀ ՔՕ 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի կատարված հանցագործությունները կազմել են նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված բոլոր հանցագործությունների 7,6%-ը: Նրանց զգալի մասը՝ 41%-ը, բաժին է ընկնում Շիրակի մարզին, 17,6%-ը՝ Երևանին ու 19,6%-ը՝ Լոռու մարզին:

2013 թվականին քրեական պատասխանատվության ենթարկված՝ նախկինում դատապարտված անձանց 7,6%-ը կատարել է 118-րդ հոդվածով նախատեսված արարք՝ ծեծ, որից 20%-ը կատարվել է Կոտայքում, 18%-ը՝ Լոռիում, իսկ 16%-ը՝ Երևանում:

III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հետազոտության նպատակը և խնդիրները

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություն կատարած անձանց նկատմամբ կիրառված պատժատեսակի ազդեցությունը՝ նրանց կողմից կրկնահանցագործությունը կանխարգելելու տեսանկյունից: Հանցագործությունների այս երկու խմբի ընտրությունը պայմանավորված է հիմնականում նրանով, որ ՀՀ քրեական օրենսգիրքը[4] հնարավորություն է տալիս այդ տեսակի հանցագործություններ կատարելու դեպքում նշանակել և՛ ազատազրկում, և՛ ազատազրկման հետ կապ չունեցող այլ պատժատեսակ, ի տարբերություն ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների, երբ օրենքը նախատեսում է միայն ազատազրկում:

Հետազոտության նախանշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր պարզել.

[4] ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 19: Ընդունվել է 2003 թ. ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թ. օգոստոսի 1-ին:

- տարբեր պատժամիջոցների դրական և բացասական ազդեցությունը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց վրա,
- տարբեր պատժամիջոցների դրական և բացասական ազդեցությունը ազատազրկման հետ չկապված (այդ թվում՝ պայմանական վաղաժամկետ ազատված կամ պատիժը պայմանականորեն չկիրառված դեպքերը) պատիժ կրող անձանց վրա,
- ազատազրկման ձևով պատժի ազդեցությունը կրկնահանցագործության վրա,
- ազատազրկման հետ չկապված պատիժների և միջոցների ազդեցությունը կրկնահանցագործության կանխարգելման վրա,
- կրկնահանցագործության պատճառները,
- պրոբացիայի ծառայության հնարավոր դերը կրկնահանցագործության կանխարգելման գործում,
- կրկնահանցագործության ռիսկերի գնահատում իրականացնել,
- պատիժը կրող անձանց կարիքները՝ հասարակության մեջ վերաինտեգրվելու տեսանկյունից:

Հետազոտության ընթացքում հավաքված տվյալներն օգտագործվելու են ռիսկերի գնահատման գործիք պատրաստելու համար, որը կկիրառվի առաջիկայում ստեղծվելիք Պրոբացիոն ծառայության կողմից: Հետազոտության արդյունքներն, ինչպես նաև հանցավորությանը և կրկնահանցագործությանը նպաստող բացահայտված գործոնները կկիրառվեն ռիսկերի կառավարման և գնահատման աշխատանքներում:

3.2 Տեղեկություններ հավաքագրելու մեթոդները և ընտրանքը

Վերը նշված նպատակներն իրագործելու համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- **կիսաստանդարտացված հարցազրույցներ.**

Այս մեթոդը կիրառվել է գնահատելու տարբեր պատժամիջոցների ազդեցությունն այն անձանց վրա, ովքեր՝

- ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով պատիժ են կրում,
- նախնական կալանքում են գտնվում,
- ազատազրկման հետ չկապված (այդ թվում՝ պայմանական վաղաժամկետ ազատված կամ պատիժը պայմանականորեն չկիրառված դեպքերը) պատիժ են կրում:

Կիսաստանդարտացված հարցազրույցների միջոցով հնարավոր է դարձել հավաքագրել և վերլուծել պատիժը կրելուց հետո դատապարտված անձանց փորձի և կրկնահանցագործությանը նպաստող գործոնների վերաբերյալ նրանց կարծիքները, կրկնահանցագործության միտումները, պայմանական վաղաժամկետ և համաներման արդյունքում ազատվածների շրջանում կրկնահանցագործության առանձնահատկություններն, ինչպես նաև՝ մինչև նոր հանցագործություն կատարելը կիրառված պատժամիջոցների տեսակները և տևողությունը:

- **Փորձագիտական հարցազրույցներ**

Փորձագիտական հարցազրույցների միջոցով հնարավոր է դարձել հավաքագրել և վերլուծել փորձագետների կարծիքները կրկնահանցագործություն կատարելու տեսանկյունից տարբեր պատժամիջոցների ազդեցության վերաբերյալ, ազատազրկման հետ կապված և այլընտրանքային պատժամիջոցների կիրառման մոտեցումների վերաբերյալ, ինչպես նաև պրոբացիայի ծառայության ներդրման և գործարկման հետ կապված տեսակետները և առաջարկությունները: Հարցազրույցներն անցկացվել են հետևյալ մասնագետների հետ (տե՛ս *աղյուսակ 2*)՝

- դատավորներ,
- փաստաբաններ,
- դատախազներ,
- ոստիկանության աշխատակիցներ,
- քրեակատարողական հիմնարկների (ՔԿՀ) աշխատակիցներ,
- ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժինների աշխատակիցներ (ԱՊԿԲ),
- պայմանական վաղաժամկետ ազատման անկախ հանձնաժողովի անդամներ,
- ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Հարցված 53 փորձագետներից 7-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին, մյուսները՝ արական: Հարցված բոլոր փորձագետները 30 տարեկանից բարձր էին: Հարցված բոլոր փորձագետների մասնագիտական փորձը միջինում 17 տարի էր, իսկ նրանցից ամենաքիչ մասնագիտական փորձ ունեցողն արդեն 3 տարի ներգրավված էր այս ոլորտում: Փորձագիտական հարցազրույցներ անցկացվել են վերը նշված մասնագետների հետ՝ ձնագնդի մեթոդի ընտրանքի ձևավորման հիման վրա:

Աղյուսակ 2. Հարցված փորձագետները

Դատավորներ	փորձագիտական հարցազրույց	5
Փաստաբաններ	փորձագիտական հարցազրույց	5
ՔԿՀ աշխատակիցներ	փորձագիտական հարցազրույց	14
ԱՊԿԲ աշխատակիցներ	փորձագիտական հարցազրույց	6
Դատախազներ	փորձագիտական հարցազրույց	2
Պայմանական վաղաժամկետ ազատման անկախ հանձնաժողովի անդամներ	փորձագիտական հարցազրույց	3
Ոստիկանության աշխատակիցներ	փորձագիտական հարցազրույց	12
ՀԿ-ների ներկայացուցիչներ	փորձագիտական հարցազրույց	6
Ընդամենը փորձագիտական հարցազրույցներ		**53**

3.3 Ընտրանքը

Հետազոտության շրջանակում հարցազրույց էանցկացվել **131**՝ այդ պահին դիտավորությամբ միջին կամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու համար ազատազրկման և ազատազրկման հետ չկապված պատիժ կրող, ինչպես նաև նախկինում դատապարտված անձանց և **28**՝ նոր հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձանց հետ (տե՛ս *աղյուսակ 3*): Պատիժը կրող կամ կալանավորված անձանց մասնակցությունը հարցազրույցներին եղել է բացառապես իրենց համաձայնությամբ:

Կիսաստանդարտացված հարցազրույցներ են անցկացվել այն դատապարտյալների հետ, ովքեր միջին կամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու համար պատիժ էին կրում «Կոշ» և «Սևան» ՔԿՀ-ներում: Ընդհանուր **37** դատապարտյալ էր ընտրվել պատահական ընտրանքի սկզբունքով:

Հարցազրույցներ են անցկացվել նաև «Աբովյան» ՔԿՀ-ում պատիժ կրող ընդհանուր թվով **14** կին և անչափահաս դատապարտյալների հետ՝ կիրառելով պատահական ընտրանքի սկզբունքը:

Կիսաստանդարտացված հարցազրույցներ են անցկացվել նաև «Նուբարաշեն», «Արթիկ» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում՝ ընդհանուր թվով **28** նախկինում դատապարտված և հարցազրույց անցկացնելու պահին կալանավորված անձանց հետ՝ կրկին պատահական ընտրանքի սկզբունքով:

Կիսաստանդարտացված հարցազրույցներ են անցկացվել նաև Երևանում, Շիրակի, Կոտայքի, Արարատի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում այլընտրանքային պատիժ կրող **80** անձանց հետ. Երևան քաղաքում հարցմանը մասնակցել է **26** անձ, Շիրակի մարզում՝ **15**, Արարատի մարզում՝ **10**, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում՝ **9-ական** անձ, իսկ Լոռիում՝ **11**:

Հարցազրույցներն անցկացվել են ՀՀ տարածքում գտնվող 6 ՔԿՀ-ներում, ինչպես նաև ԱՊԿԲ Երևան քաղաքի և 5 մարզերի տարածքային ստորաբաժանումներում (տե՛ս *աղյուսակ 3*):

Աղյուսակ 3. Հարցազրույցների անցկացման վայրը

Հարցազրույցների անցկացման վայրը	Հարցվածներ (թիվ)	Հարցվածներ (%)
«Աբովյան» ՔԿՀ	14	9
«Սևան» ՔԿՀ	13	8
«Վանաձոր» ՔԿՀ	10	6
«Արթիկ» ՔԿՀ	7	4
«Կոշ» ՔԿՀ	24	15
«Նուբարաշեն» ՔԿՀ	11	7
Շիրակի ԱՊԿԲ	15	9
Երևանի ԱՊԿԲ	26	16
Արարատի ԱՊԿԲ	10	6
Կոտայքի ԱՊԿԲ	9	6
Գեղարքունիքի ԱՊԿԲ	9	6
Լոռու ԱՊԿԲ	11	7
Ընդամենը	**159**	**100**

Աղյուսակ 4. Տվյալներ հավաքագրելու մեթոդները և ընտրանքը

Հարցվածներ	Տվյալներ հավաքագրելու մեթոդը	Թիվը
Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով պատիժ կրող անձինք, ներառյալ՝ կանայք և անչափահասներ	կիսաստանդարտացված հարցազրույց	51
Նախնական կալանքում գտնվող անձինք	կիսաստանդարտացված հարցազրույց	28
Ազատազրկման հետ չկապված պատիժ կրող անձինք	կիսաստանդարտացված հարցազրույց	80
Ընդամենը կիսաստանդարտացված հարցազրույցներ		**159**

Հարցվածների սեռի և տարիքի մասին լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են Հավելված 1-ում (տե՛ս *աղյուսակներ 28-29*):

Հաշվի առնելով հետազոտության նպատակները՝ զեկույցում վերլուծված և ներկայացված են տվյալներ նախկինում դատվածություն ունեցող անձանց վերաբերյալ: Ելնելով հետազոտության խնդիրներից՝ հարցազրույցների ընթացքում հավաքված տեղեկությունները վերլուծելիս շեշտը դրվել է մեկից ավելի դատվածություն ունեցող անձանցից ստացված տվյալների վերլուծության վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում դատապարտյալների, ինչպես նաև՝ քրեական պատասխանատվության ենթարկված անձանց գերակշռող մեծամասնությունն արական սեռի ներկայացուցիչներ են, սույն հետազոտության շրջանակներում հիմնականում ուսումնասիրվել են նրանց կողմից

հանցագործություն և կրկնահանցագործություն կատարելուն նպաստող գործոնները: Այնուամենայնիվ, այն դեպքում, եթե բացահայտվել են կանանց կամ անչափահասներին բնորոշ առանձնահատկություններ, դա առանձին նշվել է: Սույն հետազոտությունը չի պարունակում մանրամասն տվյալներ կանանց և անչափահասների կողմից հանցագործություն կատարելուն նպաստող գործոնների վերաբերյալ, քանի որ հետազոտության նպատակների համար հարցման ենթակա կանանց և անչափահասների թիվը բավական չի եղել՝ օբյեկտիվ և ներկայացուցչական ընտրանք կատարելու և ստացված տեղեկությունները վերլուծելու համար:

Հետազոտության ընտրանքում հիմնականում ընդգրկվել են անձինք, որոնք դատապարտվել են երկու (54,72%) և ավելի, ընդհուպ 13 անգամ (*տե՛ս աղյուսակ 5*):

Աղյուսակ 5. Որերո՞րդ անգամ եք դատապարտվել.

Պատասխան	Հարցվածներ (թիվ)	Հարցվածներ (%)
Առաջին	17	10,69
Երկրորդ	87	54,72
Երրորդ	21	13,21
Չորրորդ	18	11,32
Հինգերորդ	7	4,40
Վեցերորդ	2	1,26
Յոթերորդ	4	2,52
Իններորդ	1	0,63
Տասներորդ	1	0,63
Տասներեքերորդ	1	0,63
Ընդամենը	**159**	**100**

Պատիժը կրող 159 հարցված անձանց 88,7%-ն արական սեռի ներկայացուցիչներ էին, իսկ 11,3%-ն՝ իգական: Հարցվածների 51,4%-ն ամուսնացած էր, 33,8%-ը՝ ամուրի, 12%-ը՝ ամուսնալուծված, և 2,8%-ը՝ այրի: Հարցվածների մասին լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են Հավելված 1-ում:

IV. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.1 Հանցավորության և կրկնահանցագործության պատճառները և դրանց վրա ազդող գործոնները

Սույն բաժնում ներկայացված են հանցավորությանը և կրկնահանցագործությանը նպաստող գործոնների մասին հարցված փորձագետների հնչեցրած կարծիքները: Բացի այդ, այս բաժինը պարունակում է սույն հետազոտության շրջանակներում հարցված՝ պատիժը կրող անձանց՝ հանցավոր վարքագիծ դրսևորելուն նպաստող գործոնների վերաբերյալ կարծիքների որակական և քանակական վերլուծություններ:

4.2. Հանցավորության վրա ազդող գործոններն՝ ըստ փորձագետների

Հետազոտության շրջանակներում անցկացված հարցազրույցների մասնակից փորձագետներն առանձնացրեցին հետևյալ գործոններ, որոնք, ըստ նրանց, նպաստում են ՀՀ-ում հանցավորությանը.

- *Աղքատություն*, որոշ դեպքերում՝ բացարձակ աղքատություն, մասնավորապես սեփականության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում:

Հարցված փորձագետների կարծիքով՝ սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակի հետևանքով ստեղծվել է հասարակական լայն խավերի սոցիալական անպաշտպանվածություն, անընդհատ աճող գործազրկություն, բնակչության արտահայտված շերտավորում: Ըստ փորձագիտական հարցազրույցների՝ ՀՀ-ում ավելացել են կրկնահանցագործությունները գողություն, կողոպուտ և խարդախություն կատարելու միջոցով: Դա են փաստում նաև վիճակագրական տվյալները (տե՛ս «*Ներածություն» բաժինը*): Նախկինում դատվածություն չունեցող անձանց կողմից կատարված հանցագործությունների թվի աճը, փորձագետների կարծիքով, պայմանավորված է նրանով, որ հասարակության լայն շերտերը գոյատևելու և նվազագույն կենսական կարիքներն ապահովելու միջոցներ չունեն: Մի օրինակ բերվեց, որ անձը առաջին անգամ կատարել էր հանցագործություն՝ գողություն, վաճառել էր գողոնը իր հիվանդ երեխայի համար դեղորայք գնելու համար: Այնուհետև նա կամավոր ներկայացել էր ոստիկանություն՝ մեղայականով: Այլ օրինակներ բերվեցին, թե ինչպես են մարզերում ապրող անձինք փայտ չունենալու պատճառով ապօրինի ծառահատում իրականացրել՝ տունը ջեռուցելու համար, կամ արգելված ձկնորսությամբ են զբաղվել՝ ընտանիքի ապրուստն ապահովելու համար:

Տարբեր հետազոտություններում նշված այն փաստը, որ աղքատությունը հանցավորությանը և կրկնահանցագործությանը նպաստող ռիսկային գործոն է, հաստատվում է նաև սույն հետազոտությամբ:

- *Մասնագիտական որակավորման/կրթության և հմտությունների բացակայությունը.*

Այս գործոնը մատնանշվել է մի քանի փորձագետների կողմից: Նրանց կարծիքով՝ կրթության, այդ թվում նաև՝ մասնագիտական կրթության բացակայությունը բարձրացնում է հանցագործություն կատարելու ռիսկը, մանավանդ եթե այն ուղեկցվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են, օրինակ, հակահասարակական վարք կամ աղքատություն: Խորը տնտեսական ճգնաժամի առկայության և գործազրկության բարձր մակարդակի պայմաններում այն անձինք, ովքեր չունեն համապատասխան կրթություն և մասնագիտական փորձ, անմրցունակ են դառնում աշխատանքային շուկայում և հայտնվում անբարենպաստ

իրավիճակում: Փորձագետներն ընդգծել են, որ նման իրավիճակն, ուղեկցվելով աղքատության և կենսական կարիքները հոգալու անհրաժեշտությամբ, կարող է դրդել անձանց հանցավոր գործունեության:

- *Հակահասարակական վարքն ու արժեհամակարգը և սոցիալական միջավայրը ու շրջապատը.*

Միջավայրն ու շրջապատը ՔԿՀ-ում և դրանից դուրս պարունակում են ներթափանցելու և հանցավոր գաղափարախոսությունընտարածելու տարրեր (դնիանտ (շեղվող) վարք որդեգրելու ազդեցություն): Խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված «գողական» ենթամշակույթն էական փոխակերպումների է ենթարկվել մեր օրերում՝ ներթափանցելով հասարակության լայն շերտեր և ընդգրկելով ոչ միայն հանցավոր աշխարհին հատուկ բարքեր: Մասնավորապես փաստվել է, որ այս ենթամշակույթի տարրերն առկա են թե՛ բանակում, թե՛ դպրոցում և թե՛ քաղաքացիական կյանքում, այդ իսկ պատճառով հասարակության կողմից բացասական վերաբերմունքի չեն արժանանում: Դեռ ավելին, նշվել է, որ հեռուստաընկերությունները և ԶԼՄ-ներն, ընդհանուր առմամբ, նպաստում են հասարակության կողմից հանցավոր ենթամշակույթի ընդունմանն ու նույնիսկ տարածմանը[5]: Շատերը, մասնավորապես երիտասարդներն, ում համար քրեական հեղինակությունը կարևոր է, մուտք են գործում ՔԿՀ արդեն իսկ սիրահարված «գողական» օրենքներին: Օրենքի գերակայության համակարգի թուլության և պետական մարմինների և արդարադատության համակարգի նկատմամբ հասարակության կողմից վստահության պակասի պայմաններում այս գործոնն ավելի լուրջ դեր է խաղում:

- *Ընտանիքը.*

Ըստ փորձագետների՝ հակահասարակական կամ հանցավոր վարքի դրսևորման պրակտիկան ընտանիքում նույնպես կարևոր է: Օրինակներ բերվեցին, թե ինչպես է հանցագործություն կատարել աղջիկը, որի մայրը պատիժ էր կրում ՔԿՀ-ում, կամ թե ինչպես է հանցագործություն կատարել մի քանի անգամ դատված հայր ունեցող տղան:

- *Անձնային որակները.*

Հարցված փորձագետների մեծամասնության կարծիքով՝ անձնային որակները կարևոր դեր են խաղում. որքան անձը տարիքով մեծ է, այնքան դժվար է այդ որակները փոփոխության ենթարկելը: Փորձագետները նշել են, որ որոշ անձինք օժտված են այնպիսի խառնվածքով, որը բարձրացնում է հանցագործություն կատարելու ռիսկն, օրինակ՝ բռնկվող խառնվածքը: Նման խառնվածքը և այլ

[5] Այստեղ խոսքը ՀՀ-ում նկարահանված հեռուստասերիալների բացասական ազդեցության մասին է:

գործոնների համակցությունը կարող են ազդել հանցագործություն կատարելու ռիսկի աճի վրա: Ահա այս համատեքստում էլ կարևորվում է շրջապատի և ընտանիքի դերը ռիսկային գործոնների խորացման կամ դրանց չեզոքացման գործում: Օրինակներ բերվեցին առ այն, որ երբ անձն իր խառնվածքով հակվածություն ունի հանցագործություն կատարելուն և չի ցանկանում փոխվել, նրա հետ անցկացվող աշխատանքներն անարդյունավետ են: Միևնույն ժամանակ արձանագրվել են նաև դեպքեր, երբ նույնիսկ սպանություն կատարած անձն ազատազրկման վայրից դուրս գալուց հետո աշխատանքի է ընդունվել, իսկ երբ մեկ տարի անց տնօրենը իմացել է նրա՝նախկինում դատված լինելու մասին, աշխատանքից չի ազատել՝ հաշվի առնելով այդ մեկ տարվա ընթացքում նրա դրսևորած դրական վարքը: Նշվեց, որ սթրեսային իրավիճակին, ինչպիսին հանդիսանում է ազատազրկումը, մարդիկ տարբեր կերպ են արձագանքում: Փորձագետների պնդմամբ՝ մի դեպքում հնարավոր է հասնել նպատակին առաջին իսկ անգամից, անգամ պատիժը պայմանականորեն չկիրառելով, իսկ մյուս դեպքում նման միջոցը արդյունավետ չի լինի՝ հաշվի առնելով անձնային որակները: Այս դեպքում անձի մոտ կարող է անպատժելիության զգացում ձևավորվել, և կրկնահանցագործության ռիսկը կարող է աճել:

Այնուամենայնիվ, ըստ որոշ փորձագետների, նման մոտեցումը հակասում է Վերագրման տեսությանը (Attribution theory) և ավելի շուտ արտացոլում է այդ տեսության մի ենթաբաղադրիչը՝ Վերագրման հիմնարար սխալը (Fundamental attribution error), համաձայն որի ենթադրվում է, որ մարդկանց գործողությունները և խոսքերն արտացոլում են իրենց, իրենց վերաբերմունքը, կամ այլ ներքին, այլ ոչ թե արտաքին կամ իրավիճակային գործոններ:

- *<u>Թմրամոլությունն ու խաղամոլությունը.</u>*

Փորձագետները մտավախություն են հայտնել, որ թմրամիջոցներ օգտագործողների թվաքանակի աճը կրկնահանցագործությունների լուրջ պատճառ կարող է հանդիսանալ: Կարևոր է նշել, որ թմրամիջոցների շրջանառության հետ կապված հանցագործությունները որոշ դեպքերում զուգորդվում են սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կատարման հետ, ենթադրաբար, թմրամիջոց օգտագործելը շարունակելու համար:

- *<u>Հանցագործությունների և կրկնահանցագործությունների կանխարգելման ուղղությամբ բավարար չափով միջոցառումներ չիրականացնելը.</u>*

Նշվել է, որ իրավապահ և պատասխանատու այլ մարմինների կողմից դատապարտյալների ուղղման և նրանց վերասոցիալականացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները բավարար և արդյունավետ չեն:

4.3 Կրկնահանցագործության նպաստող գործոններն՝ ըստ փորձագետների

Կրկնահանցագործության հիմնական պատճառները համընկնում են ընդհանուր հանցավորության պատճառների հետ, սակայն կրկնահանցագործությունն ունի նաև առանձնահատկություններ:

- *Աղքատությունը.*

Սոցիալական ծանր վիճակն առանձին չի հանդիսանում կրկնահանցագործության վճռորոշ գործոն. այն, որպես կանոն, համակցվում է այլ գործոնների հետ, ինպիսիք են ընտանիքի հետ թույլ կապն, աշխատանքի կամ մասնագիտական որակավորման բացակայությունը (տե՛ս ստորև): Արձանագրվել են նաև դեպքեր, երբ աղքատության և սոցիալական ծառայությունների համակարգի բացակայության արդյունքում անձը հանցագործություն է կատարել, որպեսզի, հայտնվելով քրեակատարողական հիմնարկում, ապրի պետության հաշվին և այդպիսով թեթևացնի իր ընտանիքի բեռը:

- *Մասնագիտական որակավորման և կրթության բացակայությունը և անձի անմրցունակությունն աշխատանքային շուկայում.*

Հարցված փորձագետների մեծամասնությունը համակարծիք է, որ նախկինում հանցագործություն կատարած անձանց վերասոցիալականացման թերի կազմակերպումը և իրականացումը, այդ թվում նաև ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ուղղությամբ, նրանց կենսական խնդիրների նկատմամբ անուշադրությունը և անտարբերությունը և, դրանով պայմանավորված, հասարակությունից նրանց հոգեբանական օտարացման խորացումը նպաստում են կրկնահանցագործության ռիսկի աճին:

Երկարատև՝ 5-ից ավելի տարի ազատազրկման մեջ գտնվելով մարդը կորցնում է իր մասնագիտական ունակությունները և գիտելիքներն ու ազատության մեջ այլևս չի կարողանում ապահովել իր ապրուստը, բարեկեցությունը և ստիպված է կրկին դիմել հանցագործությանը: Պատիժը կրելու ընթացքում զբաղվածության և/կամ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների բացակայությունը նույնպես բարձրացնում են կրկնահանցագործության ռիսկը:

- *Հանցավոր ենթամշակույթի ազդեցությունը*

Փորձագետները նշել են, որ եթե պատիժը կրելու ընթացքում և այն կրելուց հետո անձը շարունակում է առաջնորդվել քրեական ենթամշակույթին բնորոշ կանոններով և չգրված օրենքներով, կրկնահանցագործության ռիսկը աճում է: Կարծիք է հնչել, որ, հայտնվելով ազատազրկման վայրում, անձն ընկնում են մի միջավայր, որը ոչ միայն չի նպաստում ուղղմանը, այլ նույնիսկ ավելի է խորացնում հանցագործություն կատարելու ցանկությունն ու

հնարավորությունները: Նշվել է, որ կալանավայրում գտնվելու ընթացքում ոմանք հեշտությամբ ընդունում են այդ օրենքները, եթե ունեն հակում և հանցավոր աշխարհի հետ կապեր: Նրանց պարագայում դուրս գալուց հետո կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը ավելի բարձր է: Որոշ դեպքերում այդ հանցագործությունները մշակվում են դեռևս կալանավայրում: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ կրկնահանցագործություն կատարած մի խումբ անձինք իրենց համար այդ կյանքն են ընտրել և, հավատարիմ իրենց այդ ընտրությանը, պարբերաբար հանցագործություններ են կատարում և վերադառնում քրեակատարողական հիմնարկ:

Ազատազրկման պայմաններում ավելի ուժեղ է նաև միջավայրի բացասական ազդեցությունը: Փորձագետների կողմից մտավախություն է արտահայտվել առ այն, որ ազատազրկումն ավելի շատ է նպաստում կրկնահանցագործության աճին. ազատազրկման վայրում շատ բան են սովորում՝ փաստելով, որ միջավայրի ճնշումը միշտ առկա է: Ազատվելուց հետո, դատապարտյալի անձնային որակներից կախված, նա, կա՛մ շարունակում է պահպանել հանցավոր ենթամշակույթին բնորոշ կանոնները, կա՛մ հրաժարվում է դրանցից: Փորձագետները կրկնահանցագործության ռիսկը բարձր են գնահատել առաջին խմբին պատկանող նախկին դատապարտյալների մոտ:

- *<u>Ընտանեկան պայմանները և կրկնահանցագործությունը.</u>*

Հարցազրույցների ընթացքում փորձագետներն ընգծել են ընտանեկան կարգավիճակի և ընտանիքում հարաբերությունների որակի կարևորությունն անձի հետագա ճակատագրի տեսանկյունից: Կարևոր է՝ ամուսնացա՞ծ է անձը, թե՞ ոչ, ունի, արդյո՞ք, երեխաներ, ի՞նչ հարաբերությունների մեջ է իր միջուկային ընտանիքի անդամների և մտերիմ ազգականների հետ, մանավանդ պատիժը կրելու ընթացքում և այն կրելուց հետո: Նշվեց, որ նոր ընտանիք ստեղծելն, անգամ ազատազրկման հետ կապված պատիժը կրելու ընթացքում, շատ կարևոր է և պետք է խրախուսվի, քանի որ ընտանիքի և երեխաների առկայությունը զսպում է կրկնահանցագործությունը: Ըստ փորձագետների, պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի կողմից ընտանիք կազմելը փաստում է կյանքը փոխելու վերջինիս պատրաստակամությունը:

Որքան ընտանեկան հարաբերություններն ավելի ջերմ և ամուր են, այնքան անձն ավելի հեշտությամբ է վերաինտեգրվում հասարակությանը, ինչն, իր հերթին, զսպում է կրկնահանցագործության հավանականությունը: Կարծիք կար, որ *մարդը կարող է ուղղվել երկու ձևով. կա՛մ դառնալ դեպի Աստված, կա՛մ ընտանիքի միջոցով:*

Հետազոտությունը ցույց է տվել, որ բոլոր դեպքերում ազատազրկումից հետո հարաբերությունները փոխվում են: Վերադառնալով ընտանիք՝ մարդը

երկրորդային սթրես է ապրում. նրան թվում է, թե ընտանիքը փոխվել է, մինչդեռ ինքն է փոխվել: Իսկ դա կարող է հանգեցնել կրկնահանցագործության:

Միևնույն ժամանակ փորձագետները նշվել են, որ ընտանիքն, այլ գործոնների համատեքստում, կարող է ունենալ նաև բացասական ազդեցություն՝ բարձրացնելով կրկնահանցագործության ռիսկը: Նման իրավիճակ կարող է ստեղծվել այն դեպքում, երբ անձը պատիժը կրելուց հետո ազատվում է, հանդիսանում է ընտանիքի միակ աշխատողը, իսկ ընտանիքը գտնվում է ծանր սոցիալական վիճակում: Եթե այդ անձը չի կարողանում օրինական եկամտի աղբյուր գտնել, դա կարող է բերել կրկնահանցագործության:

- <u>Հասարակության վերաբերմունքը (*պիտակավորում*).</u>

Հարցազրույցների ընթացքում տեսակետներ են հնչել առ այն, որ հաճախ առաջին ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո անձը չի կարողանում աղապտացվել հասարակությանը: Մի դեպքում պատճառը հենց ինքն է, մյուս դեպքում՝ սոցիումը, որը չի ընդունում նրան:. Անդրադառնալով իրավախախտների հանդեպ հասարակության վերաբերմունքին՝ հարցված փորձագետների մեծամասնությունը նշել է, որ ՀՀ-ում հասարակության կողմից պիտակավորման խնդիրն այնքան էլ սուր չէ: Այն սոցիալական շերտերում, որտեղ բարձր է անհանդուրժողականությունն իրավախախտում կատարած անձանց հանդեպ, հանցանք կատարողները քիչ են, իսկ այն սոցիալական շերտերը, «որտեղից հանցագործները դուրս են գալիս և ուր վերադառնում են» պատիժը կրելուց հետո, պիտակավորումն այդքան էլ խիստ չէ:

Փորձագետների պնդմամբ՝ պիտակավորման խնդիրն առավել արդիական է դառնում զբաղվածության համատեքստում. երբ գործատուն տեղեկանում է, որ անձը նախկինում հանցագործություն է կատարել, դժվարանում է զբաղվածության ապահովումն, այնինչ դա հանդիսանում է կրկնահանցագործությունը կանխելու կարևորագույն նախապայման: Խուսափելով հասարակության կարծրատիպային վերաբերմունքից՝ նման անձինք թաքցնում են իրենց անցյալը, հատկապես պետական մարմինների հետ հարաբերություններում: Սակայն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են շինարարությունը, վարորդի աշխատանքը և այլն, նախկինում դատապարտվածները համեմատաբար հեշտությամբ են աշխատանք գտնում և խտրական վերաբերմունքի չեն արժանանում:

4.4 Փորձագետների կողմից մատնանշված՝ կանանց և անչափահասներին բնորոշ առանձնահատկությունները

4.4.1 Անչափահասներին բնորոշ առանձնահատկությունները

Ընտանիքի ազդեցությունը.

Ընտանիքն առավել կարևոր գործոն է անչափահասների պարագայում: Անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքի կազմը, ծնողների զբաղվածությունն ու ընտանիքի կենսամակարդակը: Երեխայի նկատմամբ ծնողների կողմից պատշաճ ուշադրության բացակայությունը նպաստում է անչափահասների կողմից հանցագործություն և կրկնահանցագործություն կատարելու ռիսկի աճին:

Շրջապատի բացասական ազդեցությունը և հանցավոր ենթամշակույթին հետևելը.

Փորձագետները նշել են, որ տեղի է ունենում դեռահասների սոցիալականացումը հանցավոր ենթամշակույթում: Ըստ նրանց, միջավայրը և շրջապատն առավել ազդեցիկ գործոն են անչափահասների պարագայում: Միջավայրի բացասական ազդեցությունը տեղի է ունենում ինչպես ՔԿՀ-ում, երբ իրավախախտն անչափահաս տարիքում դատապարտվում է ազատազրկման և ստիպված է լինում շփվել արդեն դատվածություն ունեցող անձանց հետ, այնպես էլ ՔԿՀ-ից դուրս, եթե անչափահասի շրջապատում կան հանցավոր անցյալ կամ հանցածին մտածելակերպ ունեցող անձինք:

Հանցավոր ենթամշակույթի տարածման առումով նույնպես առավել խոցելի խավն անչափահասներն են: Ընդգծվել է այն հանգամանքը, որ եթե նախկինում «գողական» մտածելակերպը ձևավորվում էր ՔԿՀ-ում, ապա այսօր անչափահասը ՔԿՀ է մտնում այդ մտածելակերպով և փորձում է «գողական» լինել: Անչափահասները «գողական» օրենքները համարում են միակ ճշմարտությունը, և երբ 18 տարին լրանալուց հետո տեղափոխվում են չափահասների ՔԿՀ-ներ, հակասության են հանդիպում ու շատ հաճախ չեն կարողանում ինտեգրվել նոր միջավայրին: Անչափահասներն ավելի խիստ են վերաբերվում այդ օրենքների պահպանմանը, և այս համատեքստում կարևոր է նրանց նկատմամբ այլ վերաբերմունք և հատուկ մոտեցում ցուցաբերել: Փորձագետները փաստել են, որ այս առումով տղաներն առավել խոցելի են անչափահաս տարիքում:

Նշվել է, որ անչափահասները չեն կարողանում դիմադրել հասակակիցների բացասական ազդեցությանը, քանի որ հակադիր դիրքորոշումը կարող է ընկալվել որպես թուլության նշան: Արդյունքում նրանք միանում են իրենց՝ հանցավոր վարք և գործողություններ կատարող հասակակիցներին: Հաճախ նրանք անգամ չեն էլ հասկանում տարբերությունը հակահասարակական վարքի և հանցավոր վարքի միջև:

Ընդգծվել է մեկ այլ հանգամանք ևս: Հաճախ վաղաժամկետ ազատվելու ժամանակ վերաբերմունքն անչափահաս և չափահաս դատապարտյալների հանդեպ նույն է լինում: Մինչդեռ շատ կարևոր է անչափահասին հնարավորինս մանրամասնորեն բացատրել, պարզաբանել, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելը նրա պատժի մի մասն է կազմում: Կարևոր է նաև, որ շարունակական վերահսկողություն իրականացվի պատասխանատու մարմինների, այդ թվում՝ դպրոցի և այլ հասարակական ինստիտուտների կողմից:

4.4.2 Կանանց բնորոշ առանձնահատկությունները

Հանցավոր վարքագծի ձևավորման տարիքը.

Հետազոտությունն իրականացնելու ընթացքում ազատազրկման ձևով պատիժ կրող իգական սեռի անչափահաս չի արձանագրվել: Հարցվածների՝ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին տվյալների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի ուշ են կատարում առաջին հանցագործությունը: Այդպես, հարցված տղամարդկանց 23%-ն առաջին հանցագործությունը կատարել է մինչև 18 տարին լրանալը, իսկ բոլոր հարցված կանայք առաջին հանցագործությունը կատարել են 25-ից բարձր տարիքում:

Ինչպես երևում է աղյուսակ 7 և 8-ից, հանցագործությունը խմբակային կատարելու ցուցանիշները կանանց և տղամարդկանց շրջանում տարբերեն: Եթե առաջին հանցագործության դեպքում հարցված տղամարդկանց 28,8%-ն է այն խմբակային կատարել, ապա կանանց՝ 18,8%-ը: Երկրորդ հանցագործության դեպքում և՛ տղամարդկանց, և՛ կանանց մոտ այդ ցուցանիշը նվազում է՝ կազմելով համապատասխանաբար 19,3% և 12,5% (տե՛ս *աղյուսակներ 7-8*):

Ընտանեկան հարաբերությունների ազդեցությունը.

Ազատազրկումը տարբեր կերպ է անդրադառնում կանանց և տղամարդկանց վրա: Կանայք համբերատար սպասում են իրենց ազատազրկված ամուսիններին, մինչդեռ ազատազրկված կնոջ հարաբերություններն իր ընտանիքի հետ հաճախ խզվում են: Հարցված կանանց 9,1%-ը նշել է, որ ընտանիք չունի և հետևաբար կապ չի պահպանում ո՛չ հեռախոսով, ո՛չ այցելությունների միջոցով: Հետաքրքիր է, որ հարցված կանանց 5,6%-ը նշել է, որ առաջին հանցագործությունը կատարել է հանուն սիրո կամ կարոտից դրդված:

Հանցավոր ենթամշակույթի ազդեցությունը.

Ի տարբերություն տղամարդկանց, կանանց պարագայում հանցավոր ենթամշակույթ ասվածն այլ բնույթ ունի, նման հասկացություն չկա, ավելի շուտ լիդերության խնդիր է:

4.5 Հանցագործություն կատարելուն նպաստող գործոններն՝ ըստ հարցված պատիժը կրող կամ կալանավորված անձանց

Հանցագործության և կրկնահանցագործության պատճառները քննարկելիս անհրաժեշտ է հղում կատարել նաև դատապարտյալների պատասխաններին: Հարցվածները նշել են ամենատարբեր պատճառներ՝ նյութական դժվարություններից և վրեժ լուծելու ցանկությունից մինչև մոլորություն, խաղամոլություն, շրջապատի ազդեցություն և հասարակության վերաբերմունք: Հարցվածներից ոմանք որպես հանցագործություն կատարելու պատճառ նշել են սերը:

- *Աղքատություն.*

Հարցվածների մեծամասնությունը որպես հանցագործությունը կատարելու պատճառ մատնանշել է այն հանգամանքը, որ ի վիճակի չէ հոգալ իր և իր ընտանիքների տարրական կենսական կարիքները: Հարցվածներից մեկը նշել է, որ գողություն է կատարել իր երեխայի ուսման վարձը վճարելու համար, իսկ մյուսը՝ որ նա ապրում է պետության այն շրջանում, որտեղ ընտանիքի գոյությունը պահպանելու միակ միջոց հանդիսացող ձկնորսությունն արգելված է:

- *Միջավայրն ու շրջապատը ՔԿՀ-ում և դրանից դուրս.*

Մյուսների պնդմամբ՝ հանցավոր արարք կատարելու պատճառ է հանդիսացել շրջապատի ազդեցությունը: Նրանք թեև խոստովանել են, որ դա երեխայություն և հիմարամտություն է, այնուամենայնիվ չէին կարող դիմադրել ճնշմանը: Իսկ հարցվածներից մի քանիսը թեև նշել են, որ առաջին հանցագործությունը կատարել են շրջապատի ազդեցության ներքո, սակայն չեն գիտակցել, որ իրենց արարքը հանցագործություն է, օրինակ, աղջիկ փախցնելը:

Շրջապատի ազդեցության մակարդակն արձանագրող հետազոտության արդյունքները վկայում են, որ առաջին հանցագործությունն ավելի հաճախ է կատարվում խմբակային, քան հաջորդները:

- *Խառնվածքը.*

Որպես առաջին հանցագործություն ծեծի ենթարկելու կամ խուլիգանության համար դատապարտված անձանց մեծամասնությունը նշել է, որ հանցագործությունը կռվի արդյունք է եղել: Խառնվածքի պատճառով նրանք չէին կարող չկատարել այդ արարքը: Միաժամանակ նրանց մի մասը նշել է, որ չի գիտակցել, որ հանցագործություն է կատարում:

- *Թմրամոլությունն ու խաղամոլությունը.*

Հարցվածների մի մասը նշել է, որ նրանց կողմից առաջին հանցագործություն կատարելու պատճառն եղել է թմրամոլությունը: Մի քանի մասնակից էլ պատասխանել է, որ խաղամոլության պատճառով պարտքեր ունեին, իսկ ընտանիքները դադարել էին աջակցություն ցույց տալ, և նրանք դիմել են հանցագործությանը:

- *Պատիժը կրելու ընթացքում և դրանից հետո հանցագործության կանխարգելման, ինչպես նաև անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելուն ուղղված միջոցառումների բացակայությունը.*

Այս խնդիրն ավելի մանրամասն կներկայացվի ստորև: Այնուամենայնիվ, հարկ է ընգծել, որ աշխատանքի, կրթության և հանգիստը կազմակերպելու հնարավորությունների բացակայությունը փորձագետների կողմից նշվել է որպես կրկնահանցագործության ռիսկի աճին նպաստող գործոն:

4.6 Կրկնահանցագործություն կատարելուն նպաստող գործոններն՝ ըստ հարցված պատիժը կրող կամ կալանավորված անձանց

Հատկանշական է, որ ըստ հարցվածների, շրջապատի ազդեցությունն ավելի մեծ է եղել ոչ թե առաջին հանցագործություն կատարելու, այլ հանցագործություններ կատարելու գործընթացում ներգրավվածությունը շարունակելու համատեքստում: Միևնույն ժամանակ հարցվածների մի մասը, ովքեր առաջին անգամ դատապարտվել են խմբակային հանցագործություն կատարելու համար, երկրորդ անգամ արդեն դատապարտվել են հանցագործությունը միայնակ կատարելու համար: Նրանց մի մասը նշել է, որ նրանք ավելի վստահ էին, որ կարող են հանցագործությունը միայնակ կատարել, իսկ մյուսները որպես պատճառ նշել են հանցակցի հավանական սխալի պատճառով քրեական պատասխանատվության ենթարկվելու ռիսկը նվազեցնելու ձգտումը:

4.7 Պատիժը կրող կամ կալանավորված անձանց հետ հարցազրույցների վերլուծություն

Ազատազրկված, ինչպես նաև ազատազրկման հետ չկապված պատիժ կրող անձանց հետ անցկացված հարցազրույցների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց մեծ մասը նյութական դժվարությունը և աղքատությունը համարում են առաջին հանցագործություն (29.8%) կամ կրկին հանցագործություն կատարելու (31.9%) հիմնական պատճառ: Երկրորդ տեղում է հանցագործություն չկատարելու մասին պատասխանը. այդպես են պատասխանել առաջին հանցագործություն

կատարածների 19.1%-ը և երկրորդ հանցագործություն կատարածքների 18.5%-ը: Հատկանշական է, որ այդ ցուցանիշի տատանումը շատ աննշան է երկրորդ հանցագործության պարագայում (տե՛ս *աղյուսակ 6*): Հաջորդ տեղում է զայրույթից ելնելով կամ վրեժ խնդիր լինելու պատճառով հանցագործություն կատարելու մասին պատասխանը: Նման պատասխան են տվել հարցվածների համապատասխանաբար 14.9% և 12.6%-ը:

Հատկանշական է, որ ի տարբերություն առաջին երեք տեղում հայտնված պատասխանների, որոնց դեպքում նրանք այդ տեղն են զբաղեցրել և՛ որպես առաջին հանցանքը կատարելուն դրդող պատճառ, և՛ որպես կրկին հանցագործություն կատարելուն նպաստող գործոն, չորրորդ տեղում որպես առաջին հանցանքը կատարելուն դրդող պատճառ հարցվածների 12%-ը նշել է այն հանգամանքը, որ չի հասկացել, որ հանցանք է գործում: Այս պատճառը որպես կրկին հանցագործություն կատարելու պատճառ հինգերորդ տեղում է (9.6%), իսկ չորրորդ տեղում է շրջապատի ազդեցությունը (12.6%), որը զբաղեցնում է հինգերորդ տեղը որպես առաջին հանցագործություն կատարելուն դրդող պատճառ (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Ի՞նչն է ձեզ դրդել հանցավոր արարք կատարելուն

Հանցանք կատարելու դրդապատճառները	Առաջին անգամ (%)	Երկրորդ անգամ (%)
Նյութական դժվարությունները	29,8	31,9
Զայրույթը, վրեժ լուծելու ցանկությունը	14,9	12,6
Չգիտակցելը, չհասկանալը, խաբվելը, մարդկանց չճանաչելը	12,0	9,6
Շրջապատը	9,9	12,6
Հասարակության վերաբերմունքը	1,4	1,5
Խաղաթղթեր խաղալը	0,7	0,7
Սերը, կարոտը	1,4	1,5
Գայթակղվելը	2,1	2,2
Աշխատանքի բնույթը	1,4	0,7
Դժբախտ պատահար է եղել	2,8	2,2
Հավատի բացակայությունը	0,7	0,7
Դժվարանում եմ պատասխանել	8,5	8,9
Ես հանցանք չեմ կատարել	19,1	18,5

Ինչպես երևում է, պատճառներից միայն երկուսի դեպքում (բացառությամբ «դժվարանում եմ պատասխանել») է ակնհայտ աճ տեղի ունենում երկրորդ հանցագործությունը կատարելու պարագայում, այն է՝ շրջապատի ազդեցությունը (9.9%-ից 12.6%) և նյութական դժվարությունները (29.8%-ից 31.9%):

Միջավայրի ուժեղ ազդեցության մասին են վկայում նաև հարցման արդյունքներն առ այն, որ առաջին անգամ կատարված հանցագործությունն ավելի հաճախ է լինում խմբակային, քան հաջորդները. եթե առաջին անգամ խմբակային հանցագործություն կատարել է նախկինում դատվածություն ունեցող հարցվածների 27,7%-ը (39 մարդ), ապա երկրորդ անգամ՝ արդեն 18,5%-ը (25 մարդ): Հանցագործությունից հանցագործություն փոխվում է նաև հարցվածների դերը խմբակային հանցագործությունների համատեքստում. եթե առաջին անգամ որպես կազմակերպիչ հանդես են եկել 39 հարցվածներից 4-ը, ապա երկրորդ անգամ՝ 25-ից 7-ը: Առկա է նաև այլ բացատրություն. նախկինում դատապարտված անձինք, տեղյակ լինելով, որ մի խումբ անձանց կողմից հանցագործություն կատարելու դեպքում պատիժն ավելի խիստ է, նախընտրում են մեղքն իրենց վրա վերցնել (տե՛ս *աղյուսակ 7*):

Աղյուսակ 7. Ձեր կողմից կատարված հանցանքը եղե՞լ է խմբակային (առաջին անգամ)

Առաջին անգամ	Հարցվածների սեռը		
	Արական (%)	Իգական (%)	Ընդամենը (%)
Այո	28,8	18,8	27,7
Ոչ	69,6	81,2	70,9
Նշման բացակայություն	1,6	0,0	1,4
Ընդամենը	**100**	**100**	**100**

Աղյուսակ 8. Ձեր կողմից կատարված հանցանքը եղե՞լ է խմբակային (երկրորդ անգամ)

Երկրորդ անգամ	Հարցվածների սեռը		
	Արական (%)	Իգական (%)	Ընդամենը (%)
Այո	19,3	12,5	18,5
Ոչ	80,7	87,5	81,5
Ընդամենը	**100**	**100**	**100**

Շրջապատի և հասակակիցների ազդեցության մասին խոսելիս նշվել է ***հակահասարակական և հանցավոր վարք դրսևորող միջավայր ներգրավվելու*** հանգամանքը: Հարցվածների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրորդ հանցագործություն կատարելու դեպքում շրջապատի ազդեցությունն ավելի ուժեղ է: Շրջապատի ազդեցության մասին խոսելիս հարկ է նշել, որ հարցված անձինք այն մատնանշել են որպես իրենց կողմից հանցագործություն կատարելուն դրդող գործոն: Ընդ որում, երկրորդ հանցագործությունը կատարելու դեպքում շրջապատի բացասական ազդեցությունն ավելի մեծ է: Այսպես, հարցված տղամարդկանց 10,0%-ը և կանանց 5,6%-ն է առաջին անգամ հանցագործություն կատարել շրջապատի ազդեցության ներքո, մինչդեռ երկրորդ անգամ՝ տղամարդկանց 12,2%-ը և կանանց 11,8%-ը: Հարցվածներից մի քանիսը նշել են, որ իրենք մեկ անգամ ընտրել են այսպես կոչված «գողական» կյանքը և սկսել են այդ ենթամշակույթին բնորոշ օրենքներով և կանոններով ապրել ու չեն ցանկանում որևէ բան փոխել, քանի որ դա իրենց ինքնությունն է:

Ինչպես արդեն նշվել է, շրջապատի ազդեցությունն որպես հանցագործություն կատարելու գործոն մատնանշել են առաջին անգամ հանցագործություն կատարած հարցվածների 9.9%-ը և կրկին հանցագործություն կատարած հարցվածների 12.6%-ը:

Ստորև բերված տվյալները վկայում են մի կողմից դատապարտյալների վրա **«գողական» օրենքների ներգործության** ուժգնության, իսկ մյուս կողմից՝ պետական օրենքների նկատմամբ վերաբերմունքի մասին (տե՛ս *աղյուսակ 9*): Հանցավոր աշխարի չգրված օրենքները թույլատրում են ապրել և գործել իրենց չափանիշների և կենսակերպի համաձայն, պետական համակարգից դուրս:

Աղյուսակ 9. Ինչպե՞ս կգնահատեք ձեր վերաբերմունքը

Պատասխան	Պետական օրենքների նկատմամբ (%)	«Գողական» օրենքների նկատմամբ (%)
Լիովին ընդունում եմ	31,0	15,5
Ավելի շուտ ընդունում եմ	12,0	14,8
Ե՛վ ընդունում եմ, և՛ չեմ ընդունում	20,4	4,9
Ավելի շուտ չեմ ընդունում	5,6	3,5
Բոլորովին չեմ ընդունում	23,2	56,3
Դժվարանում եմ պատասխանել	7,7	4,9

Սակայն պատկերը փոխվում է, երբ տարանջատում ենք ազատազրկված և այլընտրանքային պատժատեսակներ կրող անձանց (տե՛ս *աղյուսակներ 10 և 11*): Եթե վերջիններիս ճնշող մեծամասնությունն, այն է՝ 79,1%-ը, պատասխանել է, որ չի առաջնորդվում «գողական» օրենքներով, ապա ազատազրկվածների 45,4%-ը լիովին կամ ավելի շուտ ընդունում է այդ օրենքները: Պետական օրենքների նկատմամբ իրենց վերաբերմունքի մասին խոսելիս ազատազրկվածների ընդամենը 21,4%-ն էնշել, որ ընդունում է կամ ավելի շուտ ընդունում է այդ օրենքները, մինչդեռ 36%-ը բոլորովին չի ընդունում: Այլընտրանքային պատիժ կրողների 67,2%-ն է լիովին կամ ավելի շուտ ընդունում օրենքները և ընդամենը 9%-ը բոլորովին չի ընդունում: Այս ցուցանիշները ազատազրկման վայրերում գտնվող անձանց վրա «գողական» ենթամշակույթի ազդեցության վառ վկայությունն են:

Աղյուսակ 10. Ինչպե՞ս կգնահատեք ձեր վերաբերմունքը պետական օրենքների նկատմամբ

Պատասխան	Ազատազրկվածներ (%)	Այլընտրանքային պատիժ կրողներ (%)	Ընդամենը (%)
Լիովին ընդունում եմ	14,7	49,3	31,0
Ավելի շուտ ընդունում եմ	6,7	17,9	12,0
Ե՛վ ընդունում եմ, և՛ չեմ ընդունում	18,7	22,4	20,4
Ավելի շուտ չեմ ընդունում	10,7	0,0	5,6
Բոլորովին չեմ ընդունում	36,0	9,0	23,2
Դժվարանում եմ պատասխանել	13,3	1,5	7,7
Ընդամենը	**100**	**100**	**100**

Աղյուսակ 11. Ինչպե՞ս կգնահատեք ձեր վերաբերմունքը «զողական» օրենքների նկատմամբ

Պատասխան	Ազատազրկվածներ (%)	Այլընտրանքային պատիժ կրողներ (%)	Ընդամենը (%)
Լիովին ընդունում եմ	22,7	7,5	15,5
Ավելի շուտ ընդունում եմ	22,7	6,0	14,8
Ե՛վ ընդունում եմ, և՛ չեմ ընդունում	6,7	3,0	4,9
Ավելի շուտ չեմ ընդունում	6,7	0,0	3,5
Բոլորովին չեմ ընդունում	36,0	79,1	56,3
Դժվարանում եմ պատասխանել	5,3	4,5	4,9
Ընդամենը	**100**	**100**	**100**

Անբարենպաստ ընտանեկան պայմանները նշվել են և՝ որպես հանցագործություն կատարելուն, և՝ որպես կրկին հանցագործություն կատարելուն նպաստող գործոն:

Այս համատեքստում կարևոր է փաստել, որ հարցվածների 4,9%-ը իրենց հարաբերություններն ընտանիքի անդամների հետ գնահատել է վատ, իսկ 4,2%-ը պատասխանել է, որ ընտանիք չունի (*տե՛ս աղյուսակ 12*): Երկրորդ խմբին պատկանող դատապարտյալներն ընտանիք չունենալու պատճառ նշել են կա՛մ ընտանիք կազմելու հնարավորության բացակայությունը, քանի որ դատապարտվել են դեռևս երիտասարդ տարիքում և շարունակել են դատապարտվել, կա՛մ ամուսնալուծությունը՝ երկարատև ազատազրկման դատապարտվելուց հետո:

Աղյուսակ 12. Ինչպե՞ս կգնահատեք ընտանիքի անդամների հետ ձեր հարաբերությունները

Գնահատական	Հարցվածներ (%)
Լավ	57,7
Նորմալ	28,9
Վատ	4,9
Ընտանիք չունեմ	4,2
Պատասխան չկա	4,2
Ընդամենը	**100**

Հատկանշական է, որ հարցվածների 58% ընտանիքի հետ հարաբերությունները գնահատել է որպես լավ: Սույն հետազոտության շրջանակներում դատապարտյալների ընտանիքի անդամների հետ հարցազրույցներ նախատեսված չեն եղել, հետևաբար, հնարավոր չի եղել ճշտել, թե, արդյոք, ընտանիքի անդամները հարաբերությունները նույն կերպ են գնահատում:

Բացատրելով ընտանիքի հետ վատ հարաբերությունները՝ հարցվածները նշել են հետևյալ պատճառները.

- ամուսնալուծություն,
- վեճեր,

- ընտանիքի անդամները մենակ են մնացել, իրենց լքված են զգում,
- ընտանիքի անդամներն ապրում են արտերկրում, անգամ չգիտեն, որ հարցվածն ազատազրկված է,
- ընտանիքը մեղադրում է դատապարտյալին անընդհատ նյութական աջակցություն պահանջելու մեջ:

Միևնույն ժամանակ թեև հարցված ազատազրկվածներն ավելի հաճախ շփվում են ընտանիքի անդամների հետ հեռախոսով, քան այցելությունների ժամանակ, 17,3%-ի հավաստմամբ՝ իրենք հեռախոսով երբեք չեն շփվում ընտանիքի անդամների հետ, իսկ 18,7%-ն այցելություններ չի ունենում (տե՛ս *աղյուսակ 13*):

Աղյուսակ 13. Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս և որքա՞ն հաճախ եք շփվում ձեր ընտանիքի անդամների հետ

Պատասխան	Հեռախոսով (%)	Այցելությունների ժամանակ (%)
Հաճախ	61,3	32,0
Հազվադեպ	20,0	48,0
Երբեք	17,3	18,7
Ընտանիք չունեմ	1,3	1,3
Ընդամենը	**100**	**100**

Հարցվածների 28,9%-ը նշել է, որ ընտանիքի անդամներից բացի ոչ մեկի հետ չի շփվում: Այս ցուցանիշը խոսում է այն մասին, որ ռեադապտացիայի համար անհրաժեշտ դրական սոցիալական կապերը բացակայում են: Մյուսները շփվում են և՛ ազգականների, և՛ ընկերների հետ, իսկ նրանց 10,5%-ը նշել է, որ բոլորի հետ շփվում է (*տե՛ս գծապատկեր 14*): Վերջին պատասխանը հիմնականում տվել են ազատազրկման հետ չկապված պատիժ կրողները:

Գծապատկեր 14. Բացի ընտանիքի անդամներից, ո՞ւմ հետ եք շփվում



Հատկանշական է, որ ազատազրկման ձևով պատիժ կրող հարցվածների 61,8%-ը (ընդ որում՝ հարցված տղամարդկանց 66,7%, իսկ կանանց՝ 36,4%-ը) նշել է, որ ընտանիքի անդամները նյութապես աջակցում են իրենց: Այլընտրանքային պատիժ կրող անձանց մոտ այդ ցուցանիշն այլ է: Նրանց ընդամենը 34,3%-ն է, որ նյութական աջակցություն է ստանում ընտանիքի անդամներից, ընդ որում՝ հարցված տղամարդկանց 32,3%, իսկ կանանց՝ 60%-ը (տե՛ս *գծապատկեր 15*):

Գծապատկեր 15. Ընտանիքի կողմից նյութական աջակցություն



Հարցված անձանց զգալի մասը դեռևս **անչափահաս տարիքից հակահասարակական կամ հանցավոր վարք դրսևորելու փորձ** է ունեցել: Այս առումով հատկանշական է, որ անչափահաս տարիքում ոստիկանությունում հաշվառված է եղել հարցվածների 19,7%-ը, այդ թվում՝ 4,9%-ը գողության և 4,9%-ը խուլիգանության համար (*տե՛ս աղյուսակ 14*):

Աղյուսակ 14. Ի՞նչ պատճառով եք հաշվառված եղել ոստիկանությունում անչափահաս տարիքում

Պատասխան	Հարցվածներ (%)
Գողություն	4,9
Խուլիգանություն	4,9
Վարքային խնդիրներ	1,4
Կռիվ	1,4
Հանցագործություն, դանակահարություն	1,4
Ավազակային հարձակում	0,7
Դժվարանում եմ պատասխանել	4,9
Ընդամենը	19,7

Իսկ առաջին հանցանքն անչափահաս տարիքում կատարել է հարցվածների 20,4%-ը (*տե՛ս գծապատկեր 16*):

Գծապատկեր 16. Ո՞ր տարիքում եք կատարել առաջին հանցանքը



Առաջին դատավճիռն անչափահաս տարիքում կայացվել է հարցվածների 17,6%-ի հանդեպ (*տե՛ս գծապատկեր 17*):

Գծապատկեր 17. Ո՞ր տարիքում է ձեր նկատմամբ կայացվել առաջին դատավճիռը



Աշխատանքի և կրթություն ստանալու հնարավորությունների բացակայությունն ընդգծվել է որպես առաջին հանցագործություն, և կրկին հանցագործություն կատարելու կարևոր պատճառներից մեկը:

Կրկնահանցագործություն կատարած անձանց հետ հարցումները հստակ միտում են արձանագրում. եթե առաջին դատապարտումից առաջ գործազուրկ էր հարցվածների 26,1%-ը, ապա հարցմանը մասնակցելու պահին գործազուրկ էր

հարցվածների 57,7%-ը, այդ թվում այլընտրանքային պատիժ կրողները (տե՛ս *աղյուսակ 15*):

Աղյուսակ 15. Հարցվածի զբաղվածությունը

Զբաղվածություն	Մինչև առաջին դատապարտումը (%)	Առաջին դատապարտումից հետո (%)	Այժմ (%)
Աշակերտ	8,5	2,1	0,7
Ուսանող	3,5	1,4	0,7
Գործազուրկ	26,1	31,0	57,7
Թոշակառու	1,4	1,4	6,3
Պետական հիմնարկության աշխատակից	9,9	7,0	2,8
Մասնավոր կազմակերպության աշխատակից	16,2	19,7	9,2
Անհատ ձեռներեց	26,8	25,4	14,1
Զինծառայող	6,3	7,0	0,7
Պատասխան չկա	1,4	4,9	7,7
Ընդամենը	**100**	**100**	**100**

Հատկանշական է, որ հարցվածների 38%-ը նշել է, որ թեև մասնագիտություն ունի, սակայն այն եկամտաբեր չէ, 14,8%-ը նշել է, որ մասնագիտություն չունի և չի էլ ուզում ձեռք բերել, 10,6%-ը մասնագիտություն չունի, բայց ուզում է ձեռք բերել (տե՛ս *աղյուսակ 16*):

Աղյուսակ 16. Ձեր մասնագիտությունը

Պատասխան	Հարցվածներ (%)
Չունեմ մասնագիտություն և չեմ ուզում ձեռք բերել	14,8
Չունեմ մասնագիտություն, բայց ուզում եմ ձեռք բերել	10,6
Ունեմ եկամտաբեր մասնագիտություն	31,0
Ունեմ մասնագիտություն, որը եկամտաբեր չէ	38,0
Ունեմ մի քանի մասնագիտություն	3,5
Ուսանող եմ	0,7
Դժվարանում եմ պատասխանել	1,4
Ընդամենը	**100**

Քննարկվել է նաև կրթության մակարդակի ազդեցությունը: Մասնավորապես ընդգծվել է, որ կրթության բացակայությունը նախկինում դատապարտված անձանց աշխատանքային շուկայում դարձնում է էլ ավելի անմրցունակ: Հարցվածների 16,9%-ն ունի բարձրագույն կրթություն, իսկ 29,6%-ն՝ անավարտ միջնակարգ (տե՛ս *աղյուսակ 17*): Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ բնակչության 9%-ն ունի հիմնական կրթություն, 40%-ը՝ միջնակարգ, 20%-ը՝ բարձրագույն, 15%-ը՝ միջին մասնագիտական:

Աղյուսակ 17. Հարցվածի կրթությունը

Կրթությունը	Հարցվածներ (%)
Անավարտ միջնակարգ	29,6
Միջնակարգ	42,3
Միջին մասնագիտական	9,9
Թերի բարձրագույն	1,4
Բարձրագույն	16,9
Ընդամենը	**100**

Դատապարտված անձանց վերաբերմունքն իրենց կատարած հանցանքին նրանց հետ անցկացվող ուղղման աշխատանքների արդյունավետության գրավականներից մեկն է: Այս համատեքստում հետաքրքիր են նաև հարցվածների պատասխանները: Նրանց մեծ մասն, այն է՝ առաջին անգամ հանցագործություն կատարածների 61,3%-ը և երկրորդ անգամ հանցագործություն կատարածների 62,7%-ը, նշել է, որ զղջում է կատարվածի համար և այլևս նման քայլի չի դիմի (տե՛ս *աղյուսակ 18*): Հատկանշական է, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հանցագործության դեպքում ընկալումը գրեթե նույնն է: Ցուցանիշները տարբերվում են միայն երկու պատասխանի դեպքում. հանցագործության համար նշանակված պատիժը չափազանց խիստ է գնահատել երկրորդ հանցագործության դեպքում հարցվածների 4,5%-ը, ինչը գրեթե կրկնակի ավելի է առաջին հանցագործության 2,8%-ից: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ եթե առաջին հանցագործության նկատմամբ իրենց ընկալումը չի կարողացել նկարագրել հարցվածների գրեթե 5%-ը, ապա երկրորդ հանցագործության դեպքում այդ թիվը էականորեն ցածր է՝ 1,4% (Տե՛ս *աղյուսակ 18*):

Աղյուսակ 18. Ինչպե՞ս եք հիմա գնահատում կատարվածը

Պատասխան	Առաջին անգամ (%)	Երկրորդ անգամ (%)
Ես նորից նույն կերպ կվարվեի, դա անհրաժեշտ էր	15,5	14,2
Թեև կատարած արարքս բացասական էր, սակայն պատիժը չափազանց խիստ էր	2,8	4,5
Զղջում եմ կատարածիս համար, այլևս երբևէ նման քայլի չեմ դիմի	61,3	62,7
Գլխիս սարքել են	9,2	9,7
Չեմ հասկացել, որ հանցանք եմ գործում	4,9	5,2
Չեմ զղջում, բայց նման բան այլևս չեմ անի	1,4	1,5
Դեպքը դժբախտ պատահարի արդյունք է	0,7	0,7
Դժվարանում եմ պատասխանել	4,8	1,4
Ընդամենը	**100**	**100**

Ամփոփելով փորձագետների պատասխանները՝ կարելի է եզրակացնել, որ կենսական կարիքները և հանցածին գործոնները, այդ թվում աղքատությունը, մասնագիտական որակավորման/կրթության կամ հմտությունների

բացակայությունը, հակահասարակական վարք դրսևորելը, շրջապատը և միջավայրը, ընտանեկան վիճակը, անձնային որակները և խառնվածքը, թմրամոլությունը և խաղամոլությունը նպաստում են առաջին հանցանք կատարելուն: Թեև նշվել է, որ առաջին հանցագործություն և կրկին հանցագործություն կատարելուն նպաստող գործոնները հիմնականում նույնն են, այնուամենայնիվ, կրկնահանցագործության նպաստող գործոններից փորձագետները առանձնացրել են հետևյալները. աղքատություն, մասնագիտական որակավորման և կրթության բացակայություն, ինչը, հաշվի առնելով դատվածության առկայությունն, այդ անձանց դարձնում է անմրցունակ աշխատանքային շուկայում, անձնային որակներ, հանցավոր ենթամշակույթ, անբարենպաստ ընտանեկան վիճակ, ինչպես նաև որոշ չափով՝ հասարակության վերաբերմունք և պիտակավորում: Փորձագետներն ընդգծել են նաև հանցագործությունների և կրկնահանցագործության կանխարգելմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև պատիժը կրելու ընթացքում և դրանից հետո աջակցության բացակայությունը:

Պատիժ կրողները հանցագործությանը նպաստող գործոններից նշել են նյութական դժվարությունները և աղքատությունը, ինչպես նաև աշխատանքի ընդունվելու հնարավորության բացակայությունը, խառնվածքի առանձնահատկություններն, արարքի նշանակության և վտանգավորության չգիտակցումը, շրջապատի ազդեցությունը, թմրամոլությունն ու խաղամոլությունն, ինչպես նաև հասարակության վերաբերմունքը: Իսկ կրկնահանցագործությանը նպաստող գործոններից նրանք առանձնացրել են աղքատությունն, աշխատանքի և կրթություն ստանալու հնարավորությունների բացակայությունը, գողական օրենքներին հետևելը, շրջապատի ազդեցությունը, ինչպես նաև խառնվածքը:

V. Պատժատեսակի ազդեցությունն իրավախախտների և կրկնահանցագործության վրա

Այս գլխում ներկայացվում է և՛ ազատազրկման, և՛ ազատազրկման հետ չկապված պատիժների ազդեցությունը: Վերլուծվում են կրկնահանցագործության ռիսկի տեսանկյունից տարբեր պատժատեսակների ազդեցության, հանցանք կատարած անձանց վերասոցիալականացման և հասարակության մեջ վերաինտեգրվելու հնարավորությունների վերաբերյալ փորձագետների կարծիքները: Ներկայացվում է նաև պատիժը կրող հարցված անձանց կարծիքը՝ իրենց կյանքի վրա տարբեր պատժատեսակների ազդեցության վերաբերյալ:

5.1 Ընդհանուր տեղեկություններ

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են և՛ ազատազրկման, և՛ ազատազրկման հետ չկապված պատժատեսակների ազդեցությունը դատապարտված անձանց վրա:

Համաձայն պաշտոնական վիճակագրության՝ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանները 2013 թվականին քննել են 4039 քրեական գործ, որից 3204 գործով (79,3%) վճիռ են կայացրել[6]: Ներգրավված ամբաստանյալներից 3829 անձ (ամբաստանյալների 98,3%-ը) մեղավոր է ճանաչվել և դատապարտվել, մինչդեռ լրիվ արդարացվել է միայն 65 ամբաստանյալ (1,7%), իսկ 31 անձ (0,8%) արդարացվել է մասնակի. համեմատության կարգով նշենք, որ 2012 թվականին այդ թվերը կազմել են համապատասխանաբար 4099, 57 և 27 (տե՛ս *գծապատկեր 18*):

Գծապատկեր 18. Մեղադրական և արդարացման վճիռներ



Հատկանշական է, որ 2013 թվականին դատապարտվածներից ազատազրկման է դատապարտվել 2997 անձ (78,4%): Ընդ որում, բոլոր 3829 մեղավոր ճանաչվածներից ռեալ ազատազրկում է կրել 2179 անձ (57%), իսկ 818 անձանց նկատմամբ (21,4%) պատիժը պայմանականորեն չի կիրառվել: 2012 թվականին դատապարտված 4099 անձանցից ազատազրկման է դատապարտվել 2995 (72,1%) անձ: Բոլոր դատապարտվածներից 2193 անձ (53,5%) ռեալ պատիժ է կրել ազատազրկման ձևով, իսկ 762 անձի նկատմամբ (18,6%) պատիժը պայմանականորեն չի կիրառվել (տե՛ս *գծապատկեր 19*):

[6] Տվյալները հասանելի են www.court.am կայքում:

Գծապատկեր 19. Մեղադրական վճիռներ



5.2 Ազատազրկում

5.2.1 Հարցված փորձագետների գնահատումը

Փորձագետների արծիքով, թեև ազատազրկումը պետք է լինի համաչափ կատարված հանցավոր արարքին, սակայն երկարաժամկետ ազատազրկումը միանշանակ բացասական ազդեցություն ունի և չի նպաստում ուղղմանը: Ազատազրկումը բացասաբար է ազդում 1) և՛ մարդու առողջության, 2) և՛ անձնային որակների, 3) և՛ հասարակությանն ինտեգրվելու հնարավորությունների ուաշխատանքային շուկայում մրցունակ լինելու տեսանկյուններից: Կարծիք կար, որ ազատազրկումը որքան քիչ, այնքան լավ, որ առավել արդյունավետ է 1-5 տարի ժամկետով ազատազրկումը:

Ըստ փորձագետների առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի դեպքում ազատազրկում կիրառելը նպատակահարմար չէ, քանի որ ազատազրկման դատապարտվելով՝ անձը ստիպված է կրել հանցագործի պիտակը, ինչը կարող է հանգեցնել հանցավոր հակումների ավելացմանը, քանի որ ազատազրկման վայրերում դատապարտյալները նաև «փորձի փոխանակում» են իրականացնում: Ազատազրկման պայմաններում ավելի ուժեղ է նաև միջավայրի բացասական ազդեցությունը: Մտավախություն է արտահայտվել առ այն, որ ազատազրկումը ավելի շատ է նպաստում կրկնահանցագործության աճին. ազատազրկման վայրում շատ բան են սովորում:

Տարբեր պատժամիջոցների մասին խոսելիս բոլորը համակարծիք էին, որ պատժի խստության աստիճանը չի նվազեցնում կրկնահանցագործության հնարավորությունը: Ընդգծվել է իրավախախտ անձին ճանաչելու

անհրաժեշտությունը պատժի համաչափությունն ապահովելու համատեքստում, քանի որ, մի դեպքում, ներելով է կարելի արդյունքի հասնել, իսկ մյուս դեպքում՝ այլընտրանքային պատիժ կիրառելով: Համոզմունք կար, որ կախված անձի խառնվածքից՝ նույն արարքի համար տարբեր պատժատեսակներ պետք է կիրառել, իսկ արդյունավետության համար անհրաժեշտ է, որ քննիչին ու դատավորին զուգահեռ աշխատեն նաև հոգեբանն ու սոցիալական աշխատողը:

Հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկների ներկայիս հնարավորությունները և ՀՀ-ում առկա պայմաններն՝ արձանագրվել է, որ արդյունքում ազատազրկումը միայն մեկ նպատակի է ծառայում, այն է՝ անձին հասարակությունից մեկուսացնելուն, այն դեպքում, երբ հասարակությունից մեկուսացնելը պետք է պատժի նպատակների իրականացման նախապայման հանդիսանա: Ազատազրկումը, բոլոր դեպքերում, կարող է առավել ազդեցիկ լինել, եթե այն իրականացնի ոչ միայն մարդուն զուտ մեկուսացնելու գործառույթ, այլև ուղեկցվի անձի ուղղման աշխատանքներով:

5.2.2 Պատիժը կրող կամ կալանավորված անձանց հետ հարցազրույցների վերլուծություն

Արդյունքների համաձայն՝ առաջին անգամ դատապարտվելու դեպքում հարցվածների 52,8%-ի նկատմամբ կիրառվել է ազատազրկում որոշակի ժամկետով: Երկրորդ անգամ այդ պատժամիջոցն ավելի հաճախ է կիրառվել՝ 57,5% (տե՛ս *աղյուսակ 19*):

Աղյուսակ 19. Ի՞նչ պատիժ եք կրում հիմա և ի՞նչ պատիժ եք կրել նախկինում

Պատժատեսակը	Առաջին անգամ (%)	Երկրորդ անգամ (%)
Ազատազրկում որոշակի ժամկետով[7]	52,8	57,7
Ազատազրկում, պատիժը պայմանականորեն չի կիրառվել	23,2	22,5
Տուգանք	12,0	9,9
Ազատվել եմ համաներմամբ դատարանի դահլիճից	6,3	0,7
Գործը կարճվել է	1,4	3,5
Տեղափոխվել է կարգապահական գումարտակ	1,4	0,7
Դժվարանում եմ պատասխանել	2,8	0,7
Ընդամենը	**100**	**100**

[7] Այն 4 հարցվածները, ում հանդեպ առաջին անգամ կիրառվել է կալանքը՝ որպես պատիժ, նույնպես ընդգրկված են պատասխանի այս տարբերակում:

Նման օրինաչափություն է արձանագրվել նաև խափանման միջոց ընտրելու դեպքում. յուրաքանչյուր հաջորդ անգամ կիրառվում է համեմատաբար ավելի խիստ խափանման միջոց (տե՛ս *աղյուսակ 20*):

Աղյուսակ 20. Խափանման ի՞նչ միջոցներ են կիրառվել ձեր նկատմամբ

Խափանման միջոց	Առաջին անգամ (%)	Երկրորդ անգամ (%)
Կալանավորում	45,1	57,0
Գրավ	-	0,7
Ստորագրություն չհեռանալու մասին	47,9	31,7
Հանձնվել եմ հսկողության	2,8	2,8
Դժվարանում եմ պատասխանել	4,2	7,8
Ընդամենը	**100**	**100**

Համաձայն ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2013 թվականին պատժից ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում ազատվածների 1%-ը կրկին հանցագործություն է կատարել: Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականին այդ թիվը եղել է 4%: Հարցվածների առաջին և երկրորդ դատավճիռների միջև ընկած ժամանակահատվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ դեպքերի մեծամասնությունում երկրորդ հանցագործությունը կատարվել է առաջին անգամ պատիժը կրելուց հետո երեք տարվա ընթացքում (տե՛ս *աղյուսակ 21*):

Աղյուսակ 21. Դատավճիռների միջև ընկած ժամանակահատվածը

Առաջին պատժատեսակը	Երկրորդ անգամ դատապարտվել է առաջին պատիժը կրելուց հետո	
	0-3 տարվա ընթացքում (%)	3 տարի հետո կամ ավելի ուշ (%)
Ազատազրկում	63,5	24,3
Պատիժը պայմանականորեն չի կիրառվել	51,7	27,6
Տուգանք	56,2	25,0
Ազատվել է համաներմամբ	77,8	22,2
Գործը կարճվել է	50,0	50,0

Ինչպես երևում է *21-րդ աղյուսակից*, հարցված դատապարտյալների՝ համաներմամբ ազատվածների 77,8%-ը նոր հանցագործություն է կատարել և դատապարտվել ազատվելուց 0-3 տարվա ընթացքում: Ազատազրկման ձևով պատիժ կրածների պարագայում այդ ցուցանիշը փոքր-ինչ ցածր է՝ 63,5%, իսկ ազատազրկման հետ չկապված պատիժ կրողների մոտ այն կազմում է 50%-ից փոքր-ինչ ավել:

Հարցումների ընթացքում կարծիք է հնչել, որ սովորաբար հաջորդ հանցագործությունն ավելի ծանր է լինում: Սակայն այդ եզրահանգումը չի ապացուցվել հարցումների ընթացքում: Այսպես, հարցվածների 51%-ը երկրորդ

անգամ կատարել է նույն կամ նույն ծանրության հանցագործություն, 32%-ը՝ ավելի ծանր, իսկ 17%-ը՝ ավելի թեթև:

Ազատազրկումը և դրա ազդեցությունը դիտարկելիս կարևոր է հաշվի առնել նաև դատապարտյալների գնահատականը: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են հարցված դատապարտյալների կարծիքներն առաջին ազատազրկումից հետո իրենց կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ (տե՛ս *աղյուսակ 22*):

Աղյուսակ 22. Ինչպե՞ս է փոխվել ձեր կյանքը առաջին ազատազրկումից հետո

	Դեպի լավը (%)	Չի փոխվել (%)	Դեպի վատը (%)
Ընտանիքի անդամների հետ հարաբերությունները	13,4	64,6	22,0
Ազգականների հետ հարաբերությունները	4,9	73,2	22,0
Հարևանների հետ հարաբերությունները	9,9	70,4	19,8
Ընկերների հետ հարաբերությունները	6,2	71,6	22,2
Նյութական բարեկեցությունը	7,4	37,0	55,6
Եկամուտը	4,9	42,0	53,1
Բնակարանային պայմանները	3,8	76,2	20,0
Աշխատանքը	6,2	46,2	47,5
Առողջական վիճակը	3,8	51,2	45,0

Ներկայացված տվյալները փաստում են ազատազրկման էական ազդեցությունը հարցվածների կյանքի բոլոր ոլորտների վրա և որ այդ ազդեցությունը հիմնականում բացասական է: Եթե ընտանիքի, ընկերների, ազգականների և հարևանների հետ հարաբերությունները վատացել են 20% և ավելի հարցվածների դեպքում, ապա նյութական բարեկեցության և եկամտի վրա բացասական ազդեցությունը կազմել է համապատասխանաբար 55,6% և 53,1%: Այս ցուցանիշը բավական բարձր է նաև այն պատճառով, որ հարցված տղամարդկանցից շատերը ընտանիքի միակ աշխատողն են, և նրանց ազատազրկումից ընտանիքի եկամուտն էականորեն նվազում է: Ավելին, պատիժը կրելու ընթացքում նրանցից շատերը ընտանիքի կողմից ստանում են հանձնուքներ և չեն օգտվում ՔԿՀ-ի կողմից տրամադրվող սննդից, ինչը բավականին ծախսատար է ընտանիքի համար: Հարցվածների գրեթե կեսը՝ 47,5%-ը, նշել է, որ առաջին անգամ ազատազրկվելու հետևանքով իրենք կորցրել են աշխատանքը, իսկ ազատ արձակվելուց հետո դժվարություններ են ունեցել աշխատանք փնտրելիս: Միևնույն ժամանակ, շատերն աշխատանք չեն ունեցել արդեն մինչև ազատազրկվելը: Առողջական վիճակի վատթարացումը ՔԿՀ-ում գտնվելու հետևանքով նույնպես մտահոգիչ է: Այս առումով կարևորվել են ՔԿՀ-ների գերբեռնվածության և առկա բժշկական ծառայության անբավարար լինելու խնդիրները:

Անհանգստացնող է այն հանգամանքը, որ հանցագործություն կատարած անձը պատիժն ընկալում է ոչ թե որպես ուղղվելու, այլ զուտ իրեն հասարակությունից մեկուսացնելու միջոց: Իրավախախտները հաճախ օգտագործում են «*Ինձ փակեցին*» արտահայտությունը: Արձանագրվել է, որ առաջին հանցագործության դեպքում պատիժը ավելի արդյունավետ է:

5.3 Այլընտրանքային պատժատեսակներ

5.3.1 Ընդհանուր տեղեկություններ

Համաձայն ՀՀ ՔՕ 49-րդ հոդվածի՝ ՀՀ-ում կիրառելի են հետևյալ՝ ազատազրկման հետ չկապված, այլընտրանքային պատժատեսակները՝

1) տուգանքը.

2) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը.

3) հանրային աշխատանքները.

4) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը.

4.1) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը.

5) գույքի բռնագրավումը:

Ընդ որում, եթե տուգանքը, հանրային աշխատանքները և զինվորական ծառայության մեջ սահմանափակումը կիրառվում են միայն որպես հիմնական պատիժներ, ապա որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ պատիժ, իսկ հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, ինչպես նաև գույքի բռնագրավումը՝ միայն որպես լրացուցիչ պատիժներ:

ՀՀ-ում այլընտրանքային պատիժների կատարումն ապահովում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումները (այսուհետ՝ բաժանմունքներ), որոնց գործունեության կարգը՝ ըստ պատիժների տեսակների, սահմանվում է ՀՀ կառավարության 2006 թ. N 1561-Ն որոշումով:

Բաժանմունքները ապահովում են հետևյալ պատիժների կատարումը.

- տուգանք,
- որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել,
- հանրային աշխատանքներ,

- պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալների նկատմամբ վերահսկողություն,
- պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ վերահսկողություն,
- հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ վերահսկողություն, որոնց նկատմամբ կիրառվել է պատժի կրման հետաձգում:

Անկախ տեսակից, պատիժների կատարումն ապահովում են դատապարտված անձանց բնակության վայրի բաժանմունքները: Բնակության վայր չունեցող, օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսացող դատապարտյալների պատիժների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են տվյալ գործով դատավճիռ կամ որոշում կայացրած առաջին ատյանի դատարանի դատական տարածքի բաժանմունքները: Պատիժն ամբողջությամբ կրելուց հետո բաժանմունքի ծառայողը դատապարտյալի պահանջով նրան տալիս է պատժից ազատելու մասին սահմանված ձևի տեղեկանք և այդ մասին հայտնում ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային բաժանմունք:

Ստորև ներկայացվում են բաժանմունքների գործունեության կարգի մանրամասները՝ ըստ պատժի տեսակների:

Տուգանք

Բաժանմունքը դատական ակտն և այն ուժի մեջ մտնելու մասին որոշումը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում լրացնում է դատապարտյալի հաշվառման քարտ:

Որպեսզի տուգանքի վճարման պարտականությունը կատարված համարվի, դատապարտյալը պարտավոր է տուգանքի վճարման անդորրագիրը 7-օրյա ժամկետում ներկայացնել համապատասխան բաժանմունք, հակառակ պարագայում բաժանմունքի պետը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին:

Այն դեպքերում, երբ առկա է տուգանքը տարաժամկետելու կամ հետաձգելու մասին դատարանի որոշում, դատապարտյալը պարտավոր է յուրաքանչյուր անգամ դատարանի կողմից սահմանված ժամկետներում և չափով վճարված տուգանքի անդորրագիրը 7-օրյա ժամկետում ներկայացնել բաժանմունք, հակառակ պարագայում բաժանմունքի պետը միջնորդում է դատարանին տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին՝ հաշվի առնելով տուգանքի վճարված մասը:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը

Բաժանմունք ներկայանալիս դատապարտյալին նախ պարզաբանվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժը կրելու կարգը: Եթե դատապարտյալը 7-օրյա ժամկետում չի ներկայանում բաժանմունք, նրան ուղարկվում է բաժանմունք ներկայանալու մասին ծանուցագիր:

Այս պատժատեսակի կատարումն ապահովելու համար բաժանմունքը համապատասխան դատավճռի կամ որոշման պատճենն ուղարկում է դատապարտյալի աշխատավայրի վարչակազմին, իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին և ծանուցում պատժի կատարման մասին: Հաշվառման ներկայանալուց հետո դատապարտյալից պահանջում են զբաղեցրած պաշտոնի մասին յուրաքանչյուր ամիս աշխատավայրից ներկայացնել տեղեկանք, իսկ նոր աշխատանքի անցնելուց հետո՝ 5-օրյա ժամկետում տեղեկանք բերել աշխատավայրից զբաղեցրած նոր պաշտոնի մասին: Դատապարտյալի նոր աշխատավայրից տեղեկանք ստանալուց 3 օրվա ընթացքում բաժանմունքի ծառայողը դատապարտյալի աշխատավայրի վարչակազմին է ուղարկում դատարանի դատավճռի կամ որոշման պատճենը և ծանուցում պատժի կատարման մասին: Աշխատանք չունենալու դեպքում դատապարտյալը պետք է յուրաքանչյուր ամիս այդ մասին իր ստորագրությամբ գրավոր հայտարարություն ներկայացնի բաժանմունք:

Բաժանմունքի ծառայողները կարող են այցելել դատապարտյալի աշխատավայր՝ դատավճռի պահանջների կատարման մասին վարչակազմից պարզաբանումներ ստանալու նպատակով: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց ծառայողների, առևտրային կամ այլ կազմակերպությունների կողմից դատարանի որոշման պահանջները չպահպանելու դեպքում, բաժանմունքն այդ մասին տեղեկացնում է իրավասու մարմիններին:

Հանրային աշխատանքներ

Դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 7 օրվա ընթացքում դատապարտյալը պարտավոր է ներկայանալ բաժանմունք հաշվառման, որտեղ նրան պարզաբանվում է հանրային աշխատանքների ձևով պատիժը կրելու կարգն ու պայմանները, դրանք խախտելու համար սահմանված պատասխանատվությունը, ինչպես նաև դատապարտյալի իրավունքները և

պարտականությունները: Բաժանմունք չներկայանալու դեպքում դատապարտյալին ուղարկվում է ծանուցագիր:

Բաժանմունքի ծառայողը ծանուցագիր է ուղարկում դատապարտյալին, որով վերջինիս պարտավորեցնում է ժամանակացույցն ստանալուց հետո ներկայանալ աշխատավայրի վարչակազմ: Դատապարտյալները հանրային աշխատանքների ձևով նշանակված պատիժը կատարում են դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Դատապարտյալին կարող է հնարավորություն տրվել ընտրություն կատարել հանրային աշխատանքների կատարման վայրերի միջև: Հանրային աշխատանքների կատարման վայրը նշանակելիս հաշվի են առնվում դատապարտյալի բնակության վայրը և մասնագիտությունը:

Եթե լրանում է դատապարտյալի կենսաթոշակային տարիքը, եթե նա ճանաչվում է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ հիվանդանում է պատիժը կրելուն խոչընդոտող այլ ծանր հիվանդությամբ, բաժանմունքի պետը միջնորդում է դատարանին տվյալ անձին ազատել պատիժը կրելուց: Իսկ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի հղիության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքը ստանձնելու դեպքերում բաժանմունքի պետը դատարանին միջնորդում է հետաձգել պատժի կրումը:

Դատապարտյալի կողմից պատիժը կրելու կարգն ու պայմանները խախտելու դեպքում դատապարտյալին ծանուցագրով հրավիրում են բաժանմունք՝ պարզելու խախտման պատճառը: Պատիժը կրելու կարգի ու պայմանների խախտում են համարվում հետևյալ արարքները՝

- բաժանմունքի ծանուցագիրն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում աշխատավայր չներկայանալը.
- ծանուցվելու դեպքում առանց հարգելի պատճառների սահմանված ժամկետում բաժանմունք չներկայանալը:

Հարգելի պատճառների բացակայության դեպքում դատապարտյալը գրավոր կերպով նախազգուշացվում է հանրային աշխատանքները այլ պատժատեսակով փոխարինելու հարցով դատարան դիմելու հնարավորության մասին: Պատիժը կրելուց չարամտորեն խուսափելու դեպքում բաժանմունքի պետը խախտումը հայտնաբերելուց հետո 15 օրվա ընթացքում միջնորդում է դատարանին հանրային աշխատանքները օրենքով սահմանված կարգով այլ պատժատեսակով փոխարինելու մասին՝ այս մասին տեղեկացնելով նաև դատապարտյալին և նրա

աշխատավայրի վարչակազմին: Դատապարտյալը համարվում է պատիժը կրելուց չարամտորեն խուսափող, եթե՝

- մեկ ամսվա ընթացքում կատարել է հանրային աշխատաժամերի հաշվառման քարտով նախատեսված աշխատանքների իննսուն տոկոսից պակաս հանրային աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի.

- հանրային աշխատանքների կատարման ժամանակ մեկ ամսվա ընթացքում երկուսից ավելի անգամ կոպտորեն խախտել է աշխատանքային կարգապահության կանոնները.

- ծանուցվելու դեպքում երկու և ավելի անգամ անընդմեջ կամ օրենքով նախատեսված դեպքում չի ներկայացել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանում:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալների նկատմամբ վերահսկողություն և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ վերահսկողությունը

Բաժանմունք ներկայանալիս դատապարտյալը լրացնում է հաշվառման քարտ, նրան պարզաբանվում են իր իրավունքները և պարտականությունները, դրանք խախտելու համար սահմանված պատասխանատվությունը, ինչպես նաև հաշվառման ներկայանալու օրվանից սկսած առնվազն ամիսը մեկ անգամ բաժանմունք ներկայանալու պարտականությունը: 7-օրյա ժամկետում բաժանմունք չներկայանալու դեպքում դատապարտյալին ծանուցագիր է ուղարկվում:

Եթե դատարանի որոշմամբ դատապարտյալի վրա պարտականություն է դրվել բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, թունամոլությունից կամ վեներական հիվանդություններից, բաժանմունքը հաղորդում է ուղարկում առողջապահության համապատասխան մարմիններ:

Բաժանմունքի ծառայողները կարող են այցելել համապատասխան հաստատություններ ՝ վարչակազմից պարզաբանումներ ստանալու դատավճռի պահանջների կատարման մասին: Բաժանմունքի աշխատակիցները իրավունք ունեն ցանկացած ժամանակ այցելել նաև դատապարտյալի բնակության կամ աշխատանքի վայր, ինչպես նաև պահանջել ամիսը մեկ անգամ բաժանմունք

ներկայացնել դատարանի կողմից սահմանված բուժումները անցնելու մասին համապատասխան հաստատությունների կողմից տրված տեղեկանքներ:

Եթե պատիժը կրելու ընթացքում դատապարտյալը խուսափում է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումից կամ վարչական իրավախախտում է կատարում, ապա բաժանմունքը նրան գրավոր նախազգուշացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հնարավորության մասին: Եթե պատիժը կրելու ընթացքում դատապարտյալը պարբերաբար կամ չարամտորեն խուսափում է դատարանի կողմից սահմանված իր պարտականությունները կատարելուց կամ վերահսկողությունից, ինչպես նաև երկու և ավելի անգամ չի ներկայանում բաժանմունք, բաժանմունքի ղեկավարը միջնորդում է դատարանին պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին:

Պարտականությունները պարբերաբար չկատարել է համարվում դատապարտյալի կողմից մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ արգելված գործողություններ կատարելը կամ պարտականությունները չկատարելը կամ իր վրա դատավճռով դրված պարտականությունները 30 օրից ավելի չկատարելը: Անձը համարվում է վերահսկողությունից խուսափող, եթե նրա գտնվելու վայրը չի բացահայտվում 30 օրվա ընթացքում: Վերոնշված խախտումները թույլ տալու, ինչպես նաև սահմանված կարգով ծանուցվելուց հետո բաժանմունք չներկայանալու դեպքում դատապարտյալը հրավիրվում է բաժանմունք՝ պարզելու համար խախտման պատճառը:

Եթե բաժանմունքը գտնում է, որ անհրաժեշտ է ուժեղացնել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը, բաժանմունքի պետը միջնորդություն է ներկայացնում դատարան նրա վրա լրացուցիչ պարտականություններ կամ սահմանափակումներ դնելու կապակցությամբ:

5.3.2 Այլընտրանքային պատժատեսակների ազդեցությունը՝ ըստ հարցված փորձագետների գնահատման

Ըստ փորձագիտական հարցազրույցների վերլուծության՝ այլընտրանքային պատիժների կիրառությունն անհրաժեշտ է ընդլայնել, մանավանդ առաջին անգամ հանցագործություն կատարելու դեպքում, քանի որ դրանք դրական ազդեցություն ունեն թե՛ դաստիարակչական, թե՛ զսպող առումներով: Այս պատժամիջոցը նույնպես պետք է զուգորդվի իրավախախտի հետ տարբեր ոլորտի մասնագետների (հոգեբան, սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ, իրավաբան և այլն) նպատակային աշխատանքով:

Այս պատժամիջոցը միաժամանակ նպաստում է ադեկվատ սոցիալականացմանը՝ կանխելով դատապարտված անձի ինտեգրվելը «գողական» ենթամշակույթին: Նշվեց կարծիք, որ դատապարտյալները պայքարում են այլընտրանքային պատժի նշանակման համար ու այդ ժամանակահատվածում իրենց բավականին զուսպ են պահում: Մյուս կողմից՝ նաև այլընտրանքային պատժատեսակ կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք ամբաստանյալը կարո՞ղ է այդ պատիժը կատարել, ո՞ր պատժատեսակն է նրա դեպքում ավելի նախընտրելի, ո՞րը ավելի արդյունավետ կլինի:

Սակայն այլընտրանքային պատժատեսակների կիրառումն այլ խնդիրներ էլ ունի: Մտահոգություն հայտնվեց առ այն, որ տուգանքը որպես պատիժ նշանակելու հետ կապված առկա է նաև կրկնահանցագործությանը նպաստելու ռիսկ: Խոսքը այն դեպքերի մասին է, երբ դատարանը տուգանք է նշանակում, իսկ դատապարտված անձն ի վիճակի չի լինում այն վճարելու: Նման դեպքերում անձը դիմում է նոր հանցագործության ՝ տուգանքը վճարելու համար:

Հանրային աշխատանքներ նշանակելու դեպքում նույնպես առկա է խնդիր: Նման պատժի դատապարտված անձը հանրային աշխատանքներ կատարելու ընթացքում հնարավորություն չունի այլ փոխհատուցվող աշխատանք կատարելու և գումար վաստակելու, որպեսզի կարողանա հոգալ իր և իր ընտանիքի կարիքները: Արդյունքում՝ անձը և իր ընտանիքը նույնպես հայտնվում են ծանր սոցիալական վիճակում, և մեծանում է կրկնահանցագործության ռիսկը:

Փորձագիտական հարցազրույցների վերլուծության համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը կարելի է ավելի հաճախ կիրառել՝ հաշվի առնելով տարբեր հանգամանքներ, օրինակ՝ ընտանիքի առկայությունը: Իսկ ինչ վերաբերում է կրկնահանցագործության կանխարգելման համատեքստում այս միջոցի ներգործությանը, ապա դա անհատական բնույթ է կրում:

Այս դեպքում ևս այն անհրաժեշտ է համակցել անձի հետ կատարվող աշխատանքներին, որոնք ուղղված կլինեն կատարված արարքի վտանգավորության, պատժի նպատակների պարզաբանմանը, կընդգրկեն կրթական և զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրեր: Պետք է բացատրել նաև փորձաշրջանի ընթացքում սահմանված կանոնների խախտման հնարավոր բացասական հետևանքները: Այլապես տվյալ պատժամիջոցը կարող է նպաստել անձի մեջ անպատժելիության հոգեբանական զգացման ձևավորմանը: Օրինակ բերվեց, որ մի անչափահասի նկատմամբ առաջին անգամ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ու նրա մոտ ձևավորվել է տպավորություն, որ իր կատարած արարքը վտանգավոր չէ, քանի որ ինքը դրա համար չի ազատազրկվել: Արդյունքում՝ նա կրկին հանցագործություն է կատարել:

5.3.3 Պատիժը կրող կամ կալանավորված անձանց հետ հարցազրույցների վերլուծություն

Տուգանքի դատապարտված անձինք նշեցին, որ տուգանք վճարելը էականորեն ազդել է իրենց և իրենց ընտանիքների բարեկեցության վրա: Իսկ նրանց մի մասը կարողացել է տուգանքը վճարել ընտանիքի անդամների օգնությամբ: Նման դեպքում պատիժը չի ծառայում իր նպատակին:

Բողոքներ հայտնեցին նաև այդ պատժատեսակին դատապարտված հարցված անձինք: Հանրային աշխատանքների դատապարտված անձինք բողոքներ հնչեցրեցին առ այն, որ այդ պատժատեսակը կրելու ընթացքում իրենք զրկվում են վարձատրվող աշխատանք ունենալու հնարավորությունից Մեկ այլ խնդիր է այն հանգամանքը, որ ոչ բոլոր անձինք են համաձայնում կատարել հանրային աշխատանք՝ այն իրենց համար ոչ վայել համարելով:

Պատժի տեսակի, մասնավորապես, ազատազրկման ազդեցությունը սոցիալական կապերի, նյութական բարեկեցության, առողջության և այլ գործոնների վրա ավելի ակնհայտ է ազատազրկման հետ չկապված պատժի ենթարկված անձանց պատասխաններից (տե՛ս *աղյուսակ 23*):

Աղյուսակ 23. Ինչպե՞ս է փոխվել ձեր կյանքն առաջին դատապարտումից հետո (հարցվել են մասնակիցներ, ում առաջին պատիժն ազատազրկումը չէր)

	Դեպի լավը (%)	Չի փոխվել (%)	Դեպի վատը (%)
Ընտանիքի անդամների հետ հարաբերությունները	4,1	82,4	13,5
Ազգականների հետ հարաբերությունները	2,7	90,5	6,8
Հարևանների հետ հարաբերությունները	2,7	89,2	8,1
Ընկերների հետ հարաբերությունները	1,4	93,2	5,4
Նյութական բարեկեցությունը	0,0	56,8	43,2
Եկամուտը	0,0	62,2	37,8
Բնակարանային պայմանները	0,0	89,2	10,8
Աշխատանքը	0,0	64,9	35,1
Առողջական վիճակը	0,0	75,7	24,3

23-րդ աղյուսակում բերված տվյալներն արձանագրում են, որ անգամ ազատազրկման հետ չկապված պատժատեսակների կիրառումից հետո դատապարտյալների կյանքում տեղի են ունենում հիմնականում բացասական փոփոխություններ, հատկապես դա վերաբերում է նյութական բարեկեցությանը, եկամտին, բնակարանային պայմաններին և աշխատանքին: Պատիժը բացասաբար է անդրադառնում նաև առողջական վիճակի վրա: Սակայն, ամեն դեպքում, անգամ այդ ցուցանիշներն ավելի ցածր են, քան ազատազրկման դեպքում: Ավելի փոքր է բացասական ազդեցությունն ընկերների, ազգականների և հարևանների հետ հարաբերությունների վրա: Իսկ ընտանիքի անդամների հետ հարաբերությունների վրա թեև պատիժը բացասական ազդեցություն է ունեցել հարցվածների 13,5%

դեպքում, այնուամենայնիվ հարաբերությունները չեն փոխվել այլընտրանքային պատիժ կրող հարցվածների գերակշիռ մասի դեպքում:

VI. Պատժի կրումից ազատելը և դրա ազդեցությունը կրկնահանցագործության վրա

Այս գլխում կներկայացվի պատժի կրումից ազատելու տարբեր տեսակների, ներառյալ՝ պայմանական վաղաժամկետ ազատման և համաներման ազդեցությունը կրկնահանցագործության ռիսկի վրա:

6.1 Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը

6.1.1 Նախնական տեղեկություններ

Դեռևս 2012 թվականին ՔՀԻ-ն իրականացրել է հետազոտություն և ներկայացրել է զեկույց ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման խնդրի վերաբերյալ: Թեև սույն հետազոտության շրջանակներում նպատակ չի դրվում խորապես ուսումնասիրել ՀՀ-ում գործող պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը[8], այնուամենայնիվ հարկավոր է հակիրճ ներկայացնել պայմանական վաղաժամկետ ազատման ոլորտում տիրող իրավիճակը և առկա խնդիրները, որոնք նույնպես ազդում են կրկնահանցագործության վրա:

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պատժի մասը: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը:

[8] Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-116-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ նախագահի 2006 թ. հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրի, ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման, ՀՀ արդարադատության նախարարի 2005 թ. սեպտեմբերի 8-ի թիվ ՔՀ-46-Ն հրամանի դրույթների համաձայն:

ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման որոշումը կայացվում է հետևյալ երեք հանրային մարմինների մասնակցությամբ՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմ, անկախ հանձնաժողով[9] և դատարան:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալի կողմից պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը կրելու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը: ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման հիման վրա հաստատվում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից քննարկման կարգը:

Դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելու համար պարտադիր են հետևյալ պայմանները՝

ա) դատապարտյալի՝ օրենքով սահմանված պատժի նվազագույն ժամկետը կրելը,

բ) դատապարտյալի գրավոր համաձայնությունը,

գ) դատապարտյալի դրական բնութագիրը,

դ) տույժ չունենալը[10]:

Այս հարցի քննարկումը տեղի է ունենում դատապարտյալի ներկայությամբ՝ նրա ցանկությամբ: Որոշումը ընդունելիս նաև հաշվի են առնվում դատապարտյալի հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, ուղղման միջոցների ներգործության արդյունքները[11]: Դատապարտյալի հետ քրեակատարողական հիմնարկում կատարվող աշխատանքները պետք է պատրաստեն նրան ազատվելուն և դրանից հետո հասարակության մեջ օրինապահ կյանք վարելուն: Այդ աշխատանքները պետք է մշակվեն հատուկ մասնագետների կողմից, լինեն անհատական, ստանդարտացված և չափելի: Եթե

[9] Անկախ հանձնաժողովները բաղկացած են ութ անդամից, մեծ մաս են կազմում տարբեր գերատեսչությունների՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, ՀՀ նախագահի աշխատակազմի, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ներկայացուցիչները: Նաև ներառվում են մեկական Հանրային խորհրդի անդամ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից և Երևանի պետական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնից ներկայացուցիչ:

[10] ՀՀ արդարադատության նախարարի 2005 թ. սեպտեմբերի 8-ի թիվ ՔՀ-46-Ն հրամանի 5-րդ կետ:

[11] Նույն տեղում, կետ 6:

աշխատանքների արդյունքները չափելի չեն, ապա հնարավոր չի լինի դրանք օգտագործել՝ դատապարտյալի վարքագիծը գնահատելու համար:

Յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ խմբի ղեկավարը կազմում է բնութագիր[12]՝ հաշվի առնելով տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների (անվտանգության, նյութատեխնիկական աջացության, բժշկական) կողմից տրված եզրակացությունները[13]: Բնութագիրը պետք է ներառի դատապարտյալի՝ պատիժը կրելու ժամանակահատվածում կատարված գնահատումների արդյունքները, ինչպես նաև ընդհանուր տեղեկատվություն դատապարտյալի մասին. ազատազրկման մեջ գտնվելու ժամանակահատվածում իրավական պահանջներին դատապարտյալի ենթակայությունը (տույժի և խրախուսանքի միջոցների առկայությունը), ինչպես նաև կրթական, մշակութային, սպորտային և այլ ծրագրերին ու միջոցառումներին նրա մասնակցությունը, վարձատրվող կամ չվարձատրվող աշխատանքներին ներգրավվածությունը, դատապարտյալի կողմից հանցագործությամբ տուժողին պատճառված վնասի հատուցումը, ընտանիքի հետ կապը և փոխհարաբերությունները, դատապարտյալի խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը, առողջական վիճակը, աշխատունակությունը, հաշմանդամությունը: Պետք է նաև ներկայացվի դատապարտյալի վարքի, բնավորության, խառնվածքի, հոգեբանական առանձնահատկությունների և դրանց դինամիկայի վերաբերյալ հոգեբանական եզրակացություն, ինչպես նաև պատիժը կրելուց ազատվելուց հետո դատապարտյալի սոցիալական ապահովության. բնակարանային, աշխատանքային, նյութակենցաղային պայմանների, կենսական ծրագրերի վերաբերյալ սոցիալական եզրակացություն:

Եթե միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը ընդունել է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ որոշում, վարչական հանձնաժողովի նախագահը որոշումը եռօրյա ժամկետում ուղարկում է անկախ հանձնաժողովին՝ կցելով դատապարտյալի վերաբերյալ բնութագիրը[14]:

Այնուհետև, անկախ հանձնաժողովը քննարկում է ներկայացված միջնորդագիրը և կա՛մ հավանության է արժանացնում, կա՛մ մերժում: Անկախ հանձնաժողովի որոշումները չեն պարունակում որոշումը կայացնելու հիմնավորում:

---

[12] ՀՀ արդարադատության նախարարի N44-Ն հրամանի 7-րդ գլուխ, կետ 48:
[13] Նույն տեղում, կետ 11:
[14] ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման 12-րդ կետ:

Հանձնաժողովի կողմից կայացված ըստ էության որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Բացառապես անկախ հանձնաժողովի հավանությունը ստանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը 5-օրյա ժամկետում միջնորդագիր է ներկայացնում դատարան՝ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ : Միջնորդագրում, ի թիվս այլ տվյալների, նշվում են դատապարտյալի *դատվածությունների առկայությունը կամ բացակայությունը, նախկինում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման մասին,* ինչպես նաև տեղեկություններ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի, ուղղված լինելու հանգամանքի վերաբերյալ[15]:

Ստորև ներկայացված *գծապատկեր 20-ը* ցույց է տալիս քրեակատարողական վարչության վարչական հանձնաժողովների կողմից անկախ հանձնաժողովներին ներկայացված դատապարտյալների տոկոսների և դատարանի որոշմամբ ազատվածների տոկոսների դինամիկան:

Գծապատկեր 20. Պայմանական վաղաժամկետ ազատման տոկոսային հարաբերությունը



Ինչպես տեսնում ենք *գծապատկեր 20-ում,* եթե 2006 թվականին վարչական հանձնաժողովների կողմից ներկայացված անձանցից 85%-ը հավանության է արժանացել անկախ հանձնաժողովի կողմից, իսկ նրանցից 22%-ը՝ ազատվել դատարանի կողմից, ապա այդ ցուցանիշը աստիճանաբար նվազել է և 2013 թ.՝

[15] ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշման, 14-րդ կետ:

կազմելով համապատասխանաբար 18% ու 5%[16]: Այսինքն՝ վերջին երկու տարում պայմանական վաղաժամկետ ազատման ենթակա դատապարտյալների ընդամենը 5%-ն է ազատվել:

Գծապատկեր 20-ից հստակ երևում է, որ վարչական հանձնաժողովների կողմից անկախ հանձնաժողովին ներկայացված դատապարտյալների թիվը անշեղորեն նվազում է: Ենթադրաբար, դրա պատճառն այն է, որ վարչական հանձնաժողովներն իրենց որոշումներում առաջնորդվում են անկախ հանձնաժողովի «չափանիշներով» և չեն ներկայացնում դատապարտյալների այն կատեգորիաներին, որոնք, որպես կանոն, մերժվում են անկախ հանձնաժողովների կողմից: Չնայած այսպիսի «զտմանը», անկախ հանձնաժողովը հիմնականում հավանություն է տալիս իրեն ներկայացված դատապարտյալների մոտ 30 տոկոսին[17] (տե՛ս *գծապատկեր 21*):

Գծապատկեր 21. Դատարանի կողմից բավարարված պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ միջնորդությունները՝ անկախ հանձնաժողովի հավանությանը արժանացած միջնորդությունների թվից



Վարչական հանձնաժողովի կողմից անկախ հանձնաժողովի քննարկման ներկայացված միջնորդագրերի վերաբերյալ առկա վիճակագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում ներկայացվում են միջին ծանրության հանցագործություն կատարելու համար դատապարտված անձինք: Օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ վարչական հանձնաժողովի կողմից 2013 թվականին

[16] Տվյալները 2013 թ. դեկտեմբերի դրությամբ են:
[17] Հաշվի է առնված, որ դատարանների բացասական որոշումները հազվադեպ են և էական ազդեցություն չունեն վիճակագրության վրա:

կայացվել է պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ 171 որոշում[18], որից անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել է 58 միջնորդագիր, որոնցից 33-ը՝ միջին ծանրության, 21-ը՝ ծանր, 1-ը՝ առանձնապես ծանր, 3-ը՝ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց վերաբերյալ: Միևնույն ժամանակ վարչական հանձնաժողովը չի ներկայացրել 41 միջին ծանրության, 50 ծանր, 17 առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձանց վերաբերյալ միջնորդագրերը: Իր հերթին, անկախ հանձնաժողովը 58 դեպքերից հավանության է արժանացրել ընդամենը 24-ը, այդ թվում՝ 12 միջին ծանրության, 8 ծանր և 1 առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց միջնորդագրերը և մերժել 21 միջին ծանրության և 12 ծանր: Դատարանը, իր հերթին, 24 գործից (ներառյալ ոչ մեծ ծանրության 3 դեպք) դրական լուծում է տվել 16 դեպքում, որից 1-ը ոչ մեծ ծանրության է, 6-ը՝ միջին ծանրության, 8-ը՝ ծանր և 1-ը՝ առանձնապես ծանր, իսկ մերժել է 4 միջին ծանրության և 1 ծանր հանցագործության համար դատապարտված անձանց վերաբերյալ միջնորդագրերը: Իսկ 3 գործ հետ են պահանջվել, քանի որ նրանց նկատմամբ կիրառվել է համաներում: Փաստորեն, վարչական հանձնաժողովի ներկայացրած միջին ծանրության հանցագործությունների 33 դեպքերից ազատ են արձակվեն ընդամենը 6-ը, իսկ 3 ոչ մեծ ծանրության դեպքից՝ 1-ը (տե՛ս *գծապատկեր 22*):

Գծապատկեր 22. 2013 թվականին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման դեպքեր



[18] Տեղեկությունները տրամադրվել են «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կողմից N 13-54 գրությամբ առ 2013 թվականի դեկտեմբերի 10:

Ինչպես տեսնում ենք *գծապատկեր* 22-ից, վարչական հանձնաժողովի ներկայացրած ծանր հանցագործությունների 38%-ը և առանձնապես ծանր հանցագործությունների 100%-ը (միակ դեպքը) հաստատվել է և՛ անկախ հանձնաժողովի, և՛ դատարանի կողմից: Իսկ միջին ծանրության հանցագործությունների միայն 18%-ն է ազատվում դատարանի կողմից (միջնորդությունների 1/3-ը մերժվել է անկախ հանձնաժողովի կողմից, իսկ վերջինիս ներկայացված դեպքերից կեսը մերժվել է դատարանի կողմից):

Հատկանշական է, որ 2013 թվականի ընթացքում «Վանաձոր» ՔԿՀ-ում պատիժ կրող դատապարտյալներին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի շուրջ կայացվել է 143 որոշում, որից ազատելու կամ ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ կայացվել է ընդամենը 14 որոշում, որից ոչ մեծ ծանրության հանցագործության վերաբերյալ 1 միջնորդագիր, միջին ծանրության՝ 6 միջնորդագիր, ծանր՝ 7[19]: Անկախ հանձնաժողովին չներկայացնելու մասին 129 որոշումներից 1-ը վերաբերել է ոչ մեծ ծանրության, 21-ը՝ միջին ծանրության, 56-ը՝ ծանր, իսկ 51-ը՝ առանձնապես ծանր հանցագործություն կատարելուն:

Իսկ անկախ հանձնաժողովը, իր հերթին, հավանություն չի տվել ներկայացված 14 միջնորդագրերից 9-ին, որից 3-ը՝ միջին ծանրության, իսկ 6-ը՝ ծանր հանցագործության համար: Համապատասխանաբար, անկախ հանձնաժողովը հավանության է արժանացրել միջնորդությունները հետևյալ կերպ. 1-ը՝ ոչ մեծ ծանրության, 3-ը՝ միջին ծանրության, իսկ 1-ը՝ ծանր հանցագործության համար: Իսկ դատարանը բոլոր 3 միջին ծանրության համար դատապարտված անձանց վերաբերյալ միջնորդագրերը մերժել է, ազատ արձակելով միայն 2 անձ՝ 1-ը ոչ մեծ ծանրության և 1-ը ծանր հանցագործություն կատարելու համար (տե՛ս *գծապատկեր 23*):

[19] Տեղեկությունները տրամադրվել են «Վանաձոր» ՔԿՀ-ի կողմից թիվ E40/20 3119 գրությամբ առ 2013 թվականի դեկտեմբերի 24:

Գծապատկեր 23. 2013 թվականին «Վանաձոր» ՔԿՀ-ից պայմանական վաղաժամկետ ազատվածների թիվը



Ինչպես վկայում են վերը նշված երկու գծապատկերները, պրակտիկայում դատարանները համաձայնում են անկախ հանձնաժողովի հետ ոչ մեծ ծանրության, ծանր և առանձնապես ծանրհանցագործություն կատարած անձանց վերաբերյալ, իսկ հակառակ կարծիք ունեն միջին ծանրության հանցագործությունների դեպքում:

«Սևան» և «Կոշ» ՔԿՀ-ներում ըստ հանցագործությունների ծանրության աստիճանի հաշվառում կա՛մ չի պահպանվել, կա՛մ չի իրականացվում:

6.1.2 Պայմանական վաղաժամկետ ազատման ազդեցությունը կրկնահանցագործության վրա՝ ըստ հարցված փորձագետների գնահատման

Համաձայն փորձագետների՝ պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորության միջոցով կարելի է ազդել դատապարտյալի վարքագծի վրա: Չնայած հնչեցված այն կարծիքին, որ ծանր հանցագործության համար ազատազրկված անձանց պայմանական ազատվելը քիչ հավանական է, առկա տվյալները այդ մասին չեն վկայում:

Նշվեց, որ այնպիսի միջոցի կիրառումը ինչպիսին պայմանական վաղաժամկետ ազատումն է, առավել արդյունավետ կլինի, եթե հստակ սահմանվեն չափորոշիչները, և անհատական մոտեցում կիրառվի այն անձանց նկատմամբ, ովքեր հատուցել են հանցագործությամբ պատճառված վնասը և զղջում են կատարված արարքի համար:

Բացի այդ, պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորությունը դաստիարակչական դեր է կատարում, քանի որ վաղաժամկետ ազատման ներկայացվելու համար դատապարտյալը պետք է գործող տույժ չունենա: Նշվեց, որ հատկապես արդյունավետ է պայմանական վաղաժամկետ ազատման կիրառումը առաջին դատվածության դեպքում: Այս պարագայում այն միանշանակ նպաստում է կրկնահանցագործությունների կանխարգելմանը, մինչդեռ երկրորդ կամ ավելի դատվածությունների ժամանակ արդյունավետությունը կախված է անձի առանձնահատկություններից:

Պայմանական վաղաժամկետ ազատումը ունի նաև որոշակի հոգեբանական ազդեցություն. ազատվելուց հետո անձը կաշկանդված է հանցագործություն կատարելու առումով, քանի որ դժվարությամբ վաստակած ազատությունը չի ցանկանում կորցնել: Իր դերն է խաղում նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակահատվածում նոր հանցագործություն կատարելու դեպքում պատժի չկրած մասը կգումարվի նոր պատժի ժամկետին: Դա էլ է զսպող գործոն:

Կարծիք հնչեց, որ «դատապարտյալի ուղղում» տերմինի փոխարեն ավելի ճիշտ կլինի օգտագործել «կրկնահանցագործության ռիսկ» եզրը, որը պայմանական վաղաժամկետ ազատման տեսանկյունից չափելի է: Սակայն միևնույն ժամանակ առկա է խնդիր, որ այսօրվա պայմաններում նման գնահատում չի իրականացվում: Որպես հնարավոր լուծում առաջարկ հնչեց, որ ստեղծվելիք պրոբացիայի ծառայության աշխատակիցները հնարավորություն ունենան կազմելու նկարագրական զեկույց, որում արտացոլված կլինեն դատապարտյալի վերաբերյալ տեղեկություններ, որոնք թույլ կտան իրականացնել կրկնահանցագործության ռիսկի գնահատումը: Կարևորվեց, որ ռիսկերի գնահատման գործիքը, որի հիման վրա կպատրաստվի այդ զեկույցը, չլինի հիմնված բալային համակարգի վրա, քանի որ որոշակի վերջնական միավորը հնարավորություն չի տալիս ստանալ բազմակողմանի և օբյեկտիվ պատկեր և ճիշտ գնահատել դատապարտյալի՝ վաղաժամկետ ազատվելուց հետո կրկին հանցագործություն կատարելու ռիսկը:

6.2 Համաներում

6.2.1 Նախնական տեղեկություններ

Ելնելով վերոշարադրյալից, կարևոր է վերլուծել կրկնահանցագործության ցուցանիշների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված վիճակագրական տվյալները: Համաձայն ոստիկանության՝ 2013 թվականին նախկինում դատվածություն ունեցող 327 անձանց թվից նախորդ պատժից ազատվել են համաներմամբ՝ 3, մինչդեռ ոչ ոք պայմանականորեն ազատված չի եղել: Համեմատության համար նշենք, որ կրկնահանցագործություն կատարած վաղաժամկետ ազատվածների թիվը գնալով նվազել է՝ 2010 թվականին այն եղել է

6, 2011 թվականին՝ 2, իսկ 2012 թվականին՝ 1: Նույն ժամանակահատվածում համաներմամբ ազատվածների թիվը կտրուկ ելևէջներ է ունեցել. 2010 թվականին՝ 5, 2011 թվականին՝ 10, 2012 թվականին՝ 5: Ինչպես արդեն նշվեց, համաներմամբ ազատված հարցվածների գրեթե 80%-ը նոր հանցագործություն է կատարել ազատվելուց հետո 3 տարվա ընթացքում:

Միևնույն ժամանակ 2014 թվականի մարտի 10-ի դրությամբ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 2013 թվականի հոկտեմբերի 3-ից ի վեր համաներմամբ ազատված 206 անձանցից 9 անձ (ազատվածների 4%-ը) մեղադրվել է նոր հանցագործություն կատարելու մեջ և կրկին հայտնվել այդ ՔԿՀ-ում:

Համաձայն ՀՀ ԱՆ տեղեկատվության՝ ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին»[20] որոշման ընդունմամբ մասամբ լուծվեց քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման հիմնախնդիրը: Այսպես՝ 2013 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվում էր 4686 կալանավորված անձ և դատապարտյալ, դա այն դեպքում, երբ ամբողջ հիմնարկների ընդհանուր լրակազմը (մարդկանց պահելու կարողությունը) 4395 է: Իսկ 2013 թ. համաներման կիրառմամբ 2014 թ. հունվարի 10-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներից ազատ է արձակվել 875 անձ (706 դատապարտյալ և 169 կալանավորված անձ): Համաներման կիրառման արդյունքում 1212 ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձ ազատվել է պատիժը հետագա կրելուց, իսկ 148 անձի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը համաներման ակտով սահմանված համապատասխան չափով կրճատվել է:

Վերջին տասնամյակում ընթացքում ՀՀ-ում մի քանի անգամ հայտարարվել է համաներում: Վերջին երկու համաներում հայտարարելու մասին որոշումները ընդունվել են համապատասխանաբար 2011 և 2013 թվականներին:

2013 թվականին հայտարարված համաներման համաձայն ազատ են արձակվել ազատազրկման հետ կապված և չկապված պատիժ կրող հետևյալ կատեգորիայի անձինք.

1) ում նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է.

2) ում նկատմամբ նշանակվել է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ.

[20] ՀՀ ԱԺ որոշումը ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին, ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 3-ին:

3) ում նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

Պատժից ազատվել են նաև այն անձինք, ում նկատմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկում է նշանակվել, մասնավորապես՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները, 60 տարին լրացած անձինք, մարտական գործողությունների մասնակիցներ, որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հղի կանայք կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք: Հատկանշական է, որ այս դրույթը տարածվել է միայն այն մինչև 18 տարին լրանալը հանցագործություն կատարած անձանց վրա, որոնք նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն:

Համաներման տեքստում առանձին տեղ են գտել կրկին հանցագործություն կատարած կամ կրկին հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձանց վերաբերյալ դրույթները: Այսպես, համաներումը չի տարածվել հետևյալ անձանց նկատմամբ. ովքեր պատիժը կրելու ընթացքում չարամտորեն խախտել են սահմանված կարգը, ում պատիժը վերջին տաս տարվա ընթացքում կրճատվել կամ հանվել է նախագահի կողմից շնորհված ներման կամ Ազգային ժողովի կողմից ընդունված համաներման հիմքով, ինչպես նաև նրանք, ովքեր քրեական հետապնդման չեն ենթարկվել կամ ում նկատմամաբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է համաներման որոշման հիմքով և կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Համաներման որոշումը կիրառելի չի եղել նաև այն անձանց նկատմամբ ովքեր մեղադրվում են, կարող են մեղադրվել կամ դատապարտվել են պատիժը կրելու, նախնական կալանքի կամ փորձաշրջանի ընթացքում (ինչպես պայմանական վաղաժամկետ ազատման, այնպես էլ ազատազրկման հետ կապված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում) կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, ինչպես նաև հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում:

Ինչպես տեսնում ենք, կրկնահանցագործություն կատարելը և նախկին հանցագործության համար նշանակված պատիժը մեծ դեր են խաղացել՝ պատժի հետագա կրումից ազատելու հարցում:

6.2.2 Համաներման ազդեցությունը կրկնահանցագործության ռիսկերի վրա՝ ըստ հարցված փորձագետների գնահատման

Հաճախ նշվել է, որ համաներման հիմքով ազատվելու դեպքում, ի տարբերություն պայմանական վաղաժամկետ ազատվելուն, անձը ազատությունը չի վաստակում և չի գնահատում դրա արժեքը, ինչը նպաստում է անպատժելիության մթնոլորտի ստեղծմանը: Համաներմամբ ազատվածները ավելի շատ են կատարում կրկնահանցագործություն, քան վաղաժամկետ ազատվածները: Համաներումից հետո աճում է հանցագործության տոկոսը: Համաներմամբ ազատվածներից շատերը վերադառնում են ՔԿՀ (փորձագետների գնահատմամբ՝ ընդհուպ մինչև 80%-ը): Հարցված փորձագետներից մեկը նկարագրեց համաներմամաբ ազատումը որպես մի իրավիճակ, որտեղ պետությունը հանցանք կատարան անձին ասում է գնա տուն, բայց չի ասու, որ նման բան չխետք է կրկնվի:

Համաներումը և ներումը լծակներ են, որոնք կարելի է օգտագործել մարդուն դրական ուղու վրա դնելու համար: Ինչպես համաներման դեպքում, այնպես էլ ներման դեպքում, փորձագետների կարծիքով, մարդը պետք է պարտավորություն ունենա իրեն շնորհված ներման դիմաց: Ընդգծվեց, որ ներված անձի հետ պետք է անհատական աշխատանքներ տարվեն՝ հաշվի առնելով նրա խառնվածքը, բնավորությունը, մտածողությունը և այլն, որը սակայն ներկայումս օրենքով նախատեսված չէ: Նման մարդկանց անձնային որակներն են ավելի շատ նպաստում կրկին հանցագործություն կատարելուն, և ոչ ներումը, որպես այդպիսին:

Նկար 1. Պատժատեսակի ազդեցությունը

VII. Պատիժը կրելու ընթացքում և ազատ արձակվելուց հետո աջակցությունը և կրկնահանցագործության կանխումը

Այս գլխում կներկայացվի պատիժը կրելու ընթացքում դատապարտյալներին և ազատազրկման հետ չկապված պատիժ կրող անձանց տրամադրվող աջակցության տեսակները, ինչպես նաև այն միջոցները, որ պետք է ապահովվեն ազատ արձակվելուց հետո կամ փորձաշրջանի ընթացքում:

7.1 Նախնական տեղեկություններ

7.1.1 Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ դատապարտյալների հետ

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. մայիսի 30-ի N44-Ն հրամանի՝ դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացվում են քրեակատարողական ծառայության մարմիններում և հիմնարկներում դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների կողմից: Դատապարտյալների ընդգրկումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներին իրականացվում է կամավոր հիմունքներով:

Դատապարտյալների հետ իրականացվող այդ տեսակի աշխատանքները որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման ժամանակ կազմակերպվում են երեք փուլով՝

1) նախնական,

2) ընթացիկ,

3) ավարտական[21]:

Նախնական փուլը սկսվում է դատապարտյալի՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու պահից և ավարտվում է կարանտինային բաժանմունքից տեղափոխվելով: Այս փուլում աշխատանքները[22] ներառում են՝

1) դատապարտյալին իր իրավունքների և պարտականությունների, քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը.

2) դատապարտյալին պատժի կրմանը նախապատրաստելուն ուղղված հոգեբանական աշխատանքներ իրականացնելը.

[21] ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. մայիսի 30-ի N44-Ն հրամանի 5-րդ գլխի 40-րդ կետ:
[22] Նույն տեղում, կետ 41:

3) դատապարտյալի՝ կարանտինային բաժանմունքում տեղավորվելուց հետո նյութակենցաղային անհրաժեշտ պայմաններով, սննդով, անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ պայմաններով, բժշկական սպասարկմամբ ապահովելուն հետևելը, այդ պայմանների բարելավման ուղղությամբ քրեակատարողական հիմնարկի մյուս ստորաբաժանումների հետ համատեղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը:

Ընթացիկ փուլում աշխատանքները[23] ներառում են ՝

1) դատապարտյալի կարիքները, սոցիալական և հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելն ու գնահատելը.

2) ընդունելություններ կազմակերպելը՝ քննարկելու դատապարտյալին հուզող խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը,

3) դատապարտյալի՝ արտաքին աշխարհի հետ կապ ստեղծելուն, պահպանելուն և զարգացնելուն աջակցելը.

4) դատապարտյալին քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ իրավունքներից օգտվելու վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն տրամադրելը.

5) տույժի ենթարկված դատապարտյալի հետ անհատական աշխատանքներ անցկացնելը, որոնք ներառում են խախտման պատճառները բացահայտելը, հետագայում խախտումները բացառելու նպատակով խորհրդատվություն տրամադրելը.

6) դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու կամ շարունակելու ուղղությամբ միջոցառումներ նախաձեռնելը: Դատապարտյալի աշխատանքային զբաղվածությանը նպաստելը, ինչպես նաև դատապարտյալների ազատ ժամանակն արդյունավետ տնօրինելու նպատակով մշակութային, մարզական, ինչպես նաև հոգևոր-կրոնական միջոցառումներ կազմակերպելուն աջակցելը:

Ավարտական փուլը սկսվում է դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հնարավոր ժամկետից կամ պատիժը լրիվ կրելու ժամկետից երեք ամիս առաջ և ավարտվում է պատժի կրումից ազատվելով:

Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն ավարտական փուլում[24] ներառում են՝

[23] ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. մայիսի 30-ի N44-Ն հրամանի կետ 42:
[24] Նույն տեղում, կետ 43:

1) դատապարտյալին ազատման նախապատրաստելու ծրագիր կազմելը և ծրագրով նախատեսված կազմակերպչական բնույթի միջոցառումների կատարումն ապահովելը: Ազատման նախապատրաստելու ծրագրում ընդգրկված են հետևյալ հիմնահարցերը՝

ա. առողջության պահպանումը և անձնական հիգիենան, համաճարակների կանխումը, հնարավոր սթրեսային իրավիճակներին դիմակայելը, մարդու իմունային անբավարարության վիրուսի կանխարգելումը, ֆիզիկական պատրաստականությունը, միջանձնային հաղորդակցման հմտությունների ուսուցանումը,

բ. զբաղվածությունը,

գ. տեղեկատվությունը տեղական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ,

դ.անձնական զարգացումը, ամուսնության, ընտանիքի, երեխաների դաստիարակության հետ կապված և այլ հմտություններ, որոնք կօգնեն նրան պատժից ազատվելուց հետո կազմակերպելու իր կյանքը,

ե. պատժից ազատվելուց հետո հնարավոր դժվարությունների մասին տեղեկացնելը և դրանց նախապատրաստելը:

Դատապարտյալներին խորհրդատվություն է տրամադրվում դատվածության բացասական սոցիալական հետևանքների, այդ թվում՝ ազատվելուց հետո նրա նկատմամբ համայնքի կողմից հնարավոր անվստահության, անտարբերության, աշխատանքի տեղավորման հարցում գործատուի, տարբեր կազմակերպությունների կողմից նախկին ազատազրկվածների նկատմամբ հնարավոր խտրական վերաբերմունքի վերաբերյալ: Աշխատանքներ են կատարվում՝

1) ուժեղացնելու նրա կամային հատկանիշները, ձևավորելու վերոնշյալ բարդությունները հաղթահարելու պատրաստակամություն և վստահություն.

2) դատապարտյալին աշխատանքային, սոցիալ-կենցաղային ապահովման հարցերում օժանդակելը, ինչպես նաև պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի՝ հասարակությանը վերաինտեգրվելու, նրան շրջապատող միջավայրի հետ փոխհարաբերությունների բարելավման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելը.

3) դատապարտյալին նախկին բնակության վայրում հաշվառելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելը:

ՔԿՀ սոցիալ-հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների գործառույթները չեն ենթադրում դատապարտյալի հետ

որևէ աշխատանք քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո: Միևնույն ժամանակ գոյություն չունի ազատ արձակվելուց հետո դատապարտյալի վերաինտեգրմանն ուղղված աշխատանքներն իրականացնող որևէ կառույց: Իսկ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից սահմանված փորձաշրջանն անցնելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքերում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացումը պարտադիր է[25]:

7.1.2 Դատապարտյալների գնահատումը և բնութագրումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն իրականացնելիս

ՔԿՀ աշխատանքի արդյունավետությունը կապվում է այնտեղ աշխատող մասնագետների հետ, բայց պետական ցածր աշխատավարձը սահմանափակում է լուրջ մասնագետներ ներգրավելու հնարավորությունները:

ՀՀ արդարադատության նախարարի N44-Ն հրամանի 7-րդ գլխի 45-րդ կետի համաձայն՝ դատապարտյալի հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները պետք է սկսել դատապարտյալի ախտորոշումից, որի նպատակն է բացահայտել վերջինիս բացասական վարքի դրդապատճառները, քրեածին վարքի դրդող գործոնները, ռիսկայնության և բռնության հակումների կամ այլ առանձնահատուկ հատկանիշների առկայությունը, սոցիալական պահանջմունքները և անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

Ախտորոշման արդյունքում սահմանվում են չափանիշներ, որոնց հիման վրա որոշվում է դատապարտյալի՝ բռնության հակումների և ռիսկայնության աստիճանը, հոգեկան հիվանդության նախանշանները, ինքնասպանության և ինքնավնասման հակումները, թմրամոլության և այլ կախվածությունների առկայությունը: Այն դեպքերում, երբ դատապարտյալի մոտ առկա է սահմանված ցուցանիշից բարձր ցուցանիշ, նրա հետ իրականացվում են համապատասխան աշխատանքներ: Ախտորոշման հիման վրա կազմվում է դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիր[26]:

Բացի այդ, պատիժը կրելու ընթացքում պարբերաբար պետք է կատարվի դատապարտյալի գնահատում: Գնահատումները ներառում են տեղեկություններ դատապարտյալի հետ կատարված աշխատանքների ընթացքի, դատապարտյալի վարքի փոփոխության մասին, մասնավորապես գնահատվում է դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ, դրա ռիսկայնության աստիճանը, դատապարտյալի կարգապահությունը, մասնակցությունը կրթական,

[25] ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. մայիսի 30-ի N44-Ն հրամանի կետ 51:
[26] ՀՀ արդարադատության նախարարի N44-Ն հրամանի 7-րդ գլուխ, կետ 45:

մշակութային և այլ ծրագրերին, ներգրավվածությունն աշխատանքին, ինչպես նաև ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները:

7.2 Առկա աջակցության միջոցների գնահատումը՝ ըստ հարցված փորձագետների

Իրավախախտի ուղղման համատեքստում ազատազրկման արդյունավետության և ազատազրկված անձի վրա ՔԿՀ ներգործության վերաբերյալ շատ հակասական կարծիքներ հնչեցին: Մի կողմից, անձի ուղղումը կապվում է իր իսկ դիրքորոշման հետ: Այս առումով ամենավտանգավոր զանգվածը կազմում են այն դատապարտյալները, ովքեր հարմարվում են ՔԿՀ միջավայրին, պայմաններին, կարգին, նիստուկացին և ձգտում են վերադառնալ այնտեղ: Լուրջ մտահոգություն արտահայտվեց հանցանք կատարած անձանց հետ տարվող աշխատանքների որակի վերաբերյալ, ներառյալ նախկին դատապարտյալների ուղղման և վերասոցիալականացման աշխատանքների առնչությամբ, ինչպես նաև ազատազրկման հետ չկապված պատիժ կրելու ընթացքում վերահսկողության և շարունակական ներգործության շուրջ: Մատնանշվեց, որ հանցավոր մշակույթի տարածումը ավելի է հեշտ է վերահսկել փակ տիպի ռեժիմով քրեակատարողական հաստատություններում, եթե իրականացվեն համապատասխան միջոցառումներ:

Մյուս կողմից՝ թեև հնարավոր չէ բոլորին ուղղել, բայց ՔԿՀ աշխատանքից շատ բան է կախված: Փորձագետներից մեկը քրեակատարողական հաստատությունը համեմատեց հյուրանոցի հետ՝ նշելով, որ այն նման են 1-ից 5 աստղանի հյուրանոցի: Փորձագետները հավատացած են, որ ՔԿՀ ներգործությունը կախված է մեկուսարանում դատապարտյալի պահման պայմաններից. արդյոք դատապարտյալը ունի լավ սենյակ, ինչպիսի «վճարովի» ծառայություններից նա կրող է օգտվել: Արդյունքում, հանցավոր օրենքները բավականին տարածված են և եթե անձը չի ենթարկվում այդ օրենքներին, նա լուրջ խնդիրներ կունենա:

Հնչեց կարծիք, որ անձինք ՔԿՀ-ից դուրս են գալիս կա՛մ կոտրված, հիասթափված, կա՛մ էլ կատաղած: Միևնույն ժամանակ նշվեց, որ եթե քրեակատարողական համակարգը, հիմնարկները չլինեին, հանցավորության մակարդակը կտրուկ կբարձրանար: ՔԿՀ ներգործության մասին խոսելիս ընդգծվեց, որ այնտեղ գտնվելը ոչ բոլորի վրա է բացասաբար անդրադառնում: Կարծիք հնչեց, որ եթե դատապարտյալը պատրաստ է ուղղվելու, նրան անպայման կաջակցեն, ու այդ աշխատանքը արդյունավետ կլինի:

Մատնանշվեց, որ քրեակատարողական հիմնարկենորի աշխատակազմի գործունեությունը ավելի շուտ ուղղված են ռեժիմի պահպանությանը, քան դատապարտյալների ուղղմանը: Փորձագետները հավատացած են, որ հսկիչները

կարող են միայն հետևել, որ դատապարտյալները պահպանեն ներքին կանոնակարգը, խախտում չկատարեն:

Նշվեց, որ եզակի դեպքերում ՔԿՀ մասնագետների աշխատանքը կարող է արդյունավետ լինել, եթե որևէ աշխատող վայելի դատապարտյալների վստահությունն ու կարողանա ազդել դատապարտյալների վրա: Միևնույն ժամանակ ընդգծվեց համակարգի անարդյունավետության խնդիրը:

Նկար 2. ՔԿՀ բացասական ներգործությունը

ՔԿՀ սոցիալական աշխատողները դատապարտյալների հետ աշխատում են հետևյալ ուղղություններով՝ զբաղվածության ապահովում, ամուսնություն և ընտանեկան հարաբերությունների կարգավորում, մարզական միջոցառումների կազմակերպում և այլն: Սոցիալական աշխատողները համագործակցում են զբաղվածության գործակալությունների և գործատուների հետ՝ ազատվելուց հետո դատապարտյալներին աշխատանքի տեղավորելու նպատակով: Համագործակցություն կա նաև հասարակական կազմակերպությունների հետ:

Ինչ վերաբերում է ՔԿՀ հոգեբանին, ապա նշվեց, որ մեկ հոգեբանն ի վիճակի չէ արդյունավետ սպասարկելու տվյալ ՔԿՀ-ում գտնվող բոլոր դատապարտյալներին: Խնդրահարույց է նաև այն փաստը, որ հաճախ հոգեբանի հաստիքով աշխատում են հոգեբանի կրթություն չունեցող և ընդամենը հոգեբանության վերաբերյալ դասընթացներ անցած անձինք: Նշվեց, որ թե՛ սոցիալական աշխատողները, թե՛

հոգեբանները սովորաբար իգական սեռի ներկայացուցիչներ են, մինչդեռ ՔԿՀ աշխատանքի և կոնտինգենտի առանձնահատկությունները պահանջում են արական սեռի մասնագետների ներգրավում: Որպես հետևանք՝ ՔԿՀ սոցիալ-հոգեբանական ինստիտուտի նկատմամբ վստահությունը նվազում է և այն վերածվում է ձևական կառույցի:

Մեծ ուշադրություն դարձվեց այն հանգամանքային, որ տույժն ու խրախուսանքը պետք է կիրառվեն համաչափ և նպատակային. պատժվողը պետք է գիտակցի, որ արդարացի է պատժվում: Խրախուսանքը ևս պետք է ըստ արժանվույն լինի:

Փորձագետների հետ անցկացված հարցազրույցների ժամանակ վեր հանվեց նաև դատապարտյալի կողմից իր հանցավոր վարքագծի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցը: Մատնանշվեց, որ ուղղման նպատակներով դատապարտյալի հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը մեծապես կախված են վերջինիս մոտեցումից: Որպես խնդիր հիշատակվեց հանցանք կատարած անձի կողմից պատասխանատվության հերքումը:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում Այլընտրանքային պատիժների կատարման բաժնի կամ ստեղծվելիք պրոբացիոն ծառայության աշխատակիցները ծավալուն աշխատանք ունեն կատարելու: Նրանց աշխատանքի, ինչպես նաև պատժի արդյունավետությունը կախված է պատիժը պայամանակորեն չկիրառելու/ հետաձգելու ընթացքում իրականացված միջոցառումներից՝ ուղղված դատապարտյալի նկատմամբ վերահսկողության ապահովմանը:

7.3 Պատիժը կրող կամ կալանավորված անձնաց հետ հարցազրույցների վերլուծություն

Հարցված իրավախախտների 25,8%-ի հետ հոգեբանն աշխատել է առաջին դատապարտման ժամանակ, իսկ 31,1%-ի հետ՝ երկրորդ դատապարտման ժամանակ: Երկրորդ դատապարտման ժամանակ առավել մեծ թվով դատապարտյալների դրական պատասխանը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ հարցազրույցին մասնակցած որոշ դատապարտյալներ իրենց առաջին պատիժը կրել էին մինչև քրեակատարողական հիմնարկներում հոգեբանի ծառայության ներմուծումը: Հոգեբանի աշխատանքը գնահատելիս հարցվածները հիմնականում նշել են, որ կարող են խոսել, տարբեր հարցեր քննարկել հոգեբանի հետ, իսկ զրույցներից հետո թեթևություն են զգում: Միայն մեկ մասնակից բացասաբար գնահատեց հոգեբանի աշխատանքը՝ ասելով, որ «դրանից օգուտ չկա»:

Ինչ վերաբերում է սոցիալական աշխատողին, ապա վերջինս աշխատել է հարցված առաջին անգամ դատապարտվածների 17,6%-ի հետ և երկրորդ անգամ դատապարտվածների 19,4%-ի հետ: Հարցվածները դրական գնահատեցին սոցիալական աշխատողի աշխատանքը նշելով, որ վերջինս տալիս է օգտակար խորհուրդներ աջակցում տան հետ կապ պահպանելուն:

Ընդգծվեց հոգեբանի, իրավաբանի և սոցիալական աշխատողի կողմից իրականացվող աշխատանքների կարևորությունը, միաժամանակ հավելելով, որ դատապարտյալներն առավել մեծ կարևորություն են տալիս հոգևորականի աշխատանքին: Զգալիորեն բարձր է այն դատապարտյալների տոկոսը, ում հետ աշխատել է հոգևորականը, մասնավորապես՝ առաջին անգամ դատապարտվածների 28,9%-ի և երկրորդ անգամ դատապարտվածների 35,7%-ի հետ: Օրինակ՝ հոգևորականը նախկինում «Աբովյան» ՔԿՀ էր այցելում շաբաթը մեկ անգամ, իսկ ներկայումս, ելնելով պահանջից՝ երկու անգամ: Սակայն հոգևորականի հետ շփումը և հավատին ապավինելը շատ հաճախ իրավիճակային բնույթ են կրում՝ մինչև ազատվելը: Գնահատելով հոգևորականի աշխատանքը՝ հարցված իրավախախտները ավելի շատ դրական բնորոշիչներ նշեցին, այդ թվում՝ հոգեպես հանգստացնում է, հավատք է ներշնչում, աղոթում են: Դատապարտյալներից մեկը նշեց, որ հոգևորականի միջնորդության հիման վրա իրեն պայմանական ազատ են արձակել: Բացասական գնահատական է տվել հարցվածներից միայն մեկը՝ պատասխանելով, որ չի վստահում:

Հարկ է նշել, որ այլընտրանքային պատիժ կրողների համար ընդհանրապես նախատեսված չէ որևէ աշխատանք ո՛չ սոցիալական աշխատողի, ո՛չ հոգեբանի հետ: Մինչդեռ ժամանակի ընթացքում նման մասնագետներ ներգրավելու անհրաժեշտություն է առաջանում: Իրավաբանի խորհրդատվություն նախատեսված է նաև այլընտրանքային պատիժ կրողների համար: Հատկանշական է, որ, չնայած դրան, դատապարտյալների բավական ցածր տոկոսն է նշել, որ իրենց իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվել՝ 23,4% առաջին անգամ դատապարտվածների և 27,5% երկրորդ անգամ դատապարտվածների դեպքում: Հարցվածները դրական են գնահատել իրավաբանի աշխատանքի հետևյալ կողմերը. որոշակի իրավաբանական հարցերի շուրջ պարզաբանում տրամադրելը, բողոքարկելու հարցում աջակցություն ստանալը:

Նկար 3. ՔԿՀ դրական ներգործությունը

VIII. Պրոբացիոն ծառայությունը՝որպես կրկնահանցագործությունը կանխելու միջոց

8.1 Նախնական տեղեկություններ

2014 թ. փետրվարի 4-ին ընդունվել է ՀՀ-ում Պրոբացիայի ծառայության ներդրման մասին հայեցակարգը[27] (այսուհետ՝ հայեցակարգ): Հայեցակարգով կարևորվում է քրեական վերականգնողական արդարադատությունը, որը ապահովում է առավել ճկուն հակազդում հանցագործությանը: Վերականգնողական արդարադատության միջոցով մեծանում է հասարակության դերը՝ որպես հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարի կարևոր գործոն: Բացի այդ, այն հանդիսանում է մատչելի միջոց:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գոյություն չունի պրոբացիայի առանձին ծառայություն, սակայն վերջինիս բնորոշ մի շարք գործառույթներ իրականացնում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման

[27] «Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգ», հավանության է արժանացել ՀՀ ազգային անվտանգության խորհրդի կողմից 2014 թվականի փետրվարի 25-ին:

բաժինը, իր տարածքային բաժանմունքների հետ միասին, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում սոցիալական, հոգեբանական ու իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները:

Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ 2013 թվականին դատարանները քննել են կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու 3172 միջնորդություն: Նշված միջնորդություններից բավարարվել են 3011-ը (94,9%), մերժվել՝ 153-ը (4,85%): Այս ցուցանիշը բավական մտահոգիչ է: 2013 թվականին դատարանները քննել են նաև կալանավորումը գրավով փոխարինելու 576 միջնորդություն, որից բավարարվել են 129-ը (22,4%): Համեմատության կարգով՝ 2012 թվականին դատարանները քննել են կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու 2621 (21%) միջնորդություն, որոնցից բավարարվել են 2497-ը (95,3%) և մերժվել 114-ը (4,3%): Նույն ժամանակահատվածում դատարանները քննել են կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ 441 միջնորդություն, որոնցից բավարարվել են 134-ը (30,3%) և մերժվել 273-ը (62%) (տե՛ս *գծապատկեր 24*):

Գծապատկեր 24. Կալանավորման վերաբերյալ բավարարված միջնորդությունների թիվը



Ինչպես երևում է գծապատկերից, չնայած 0.35%-ով նվազել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերը, սակայն ցուցանիշները դեռևս չափազանց բարձր են:

Նման պայմաններում պրոբացիայի ծառայության ներդրումը կնպաստի ինչպես դատարանների կողմից ազատությունից զրկելու հետ կապված պատիժների անհարկի նշանակման, այնպես էլ մեղադրյալների նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու դեպքերի նվազմանը և կնվազեցնի նաև քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը: Ներկայումս ինչպես մինչդատական վարույթի ընթացքում կալանավորված, այնպես էլ ազատազրկման

դատապարտված անձինք պահվում են քրեակատարողական գերծանրաբեռնված հիմնարկներում:

Բացի այդ, պրոբացիայի ծառայության բոլոր տեսակները և մոդելները ունեն նաև տնտեսական արդյունավետություն: Նախատեսվում է, որ պրոբացիայի ծառայության «վերահսկողության» ներքո գտնվող անձի վրա կատարվելիք ծախսը շատ ավելի քիչ կլինի, քան քրեակատարողական հիմնարկում ազատազրկված անձին պահելը:

Հայեցակարգով նախատեսվում է ընդունել «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենք, որով կկարգավորվի պրոբացիայի ծառայության գործունեության սկզբունքները, լիազորությունները, կառուցվածքը, պրոբացիայի ծառայության ծառայողի իրավական և սոցիալական ապահովման պետական երաշխիքները, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովման, ֆինանսավորման և գործունեության վերահսկման կարգը: Նաև անհրաժեշտություն կլինի այս օրենքից բխող իրավական այլ ակտեր ընդունել, օրինակ՝ ՀՀ կառավարության որոշում, որով կկանոնակարգվի համապատասխան ՊՈԱԿ-ի ստեղծումը և այլն:

Քրեակատարողական ծառայությունում գործող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների և պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող աշխատանքների միջև կրկնողությունից խուսափելու համար հայեցակարգով նախատեսվում է, որ պրոբացիայի ծառայության կողմից կիրականացվեն ազատության մեջ պատիժ կրող դատապարտյալների հետ աշխատանքներ, որը դուրս է քրեակատարողական ծառայության գործառույթներից:

8.2 Պրոբացիոն ծառայությաան հնարավոր դերակատարությունը ռիսկերի կառավարման ոլորտում՝ ըստ հարցված փորձագետների գնահատման

Պրոբացիայի ծառայության արդյունավետ կիրարկման հնարավորությունները կախված են նաև ազգային մշակույթի առանձնահատկություններից և սոցիալ-տնտեսական վիճակից: Պրոբացիան արդյունավետ կլինի կրկնահանցագործությունների կանխարգելման տեսանկյունից, քանի որ անձին հնարավորություններ է ընձեռում, այլ ոչ թե չարացնում: Այն հատկապես արդյունավետ կլինի պատահական հանցագործությունների, տնտեսական հանցագործությունների, խարդախությունների դեպքում, կովարար երիտասարդների հետ աշխատանքում:

Պրոբացիայի համակարգը կնպաստի նաև ՔԿՀ-ների բեռնաթափմանը: Սակայն հատկանշական է, որ մտահոգություն արտահայտվեց մինչդատական փուլում պրոբացիոն ծառայության դերակատարության վերաբերյալ: Այն գնահատվեց որպես սահմանափակ՝ կասկածի տակ դնելով սեղմ ժամկետներում պրոբացիայի

ծառայողների կողմից օբյեկտիվ և համակողմանի զեկույց պատրաստելու հնարավորությանը, երբ անձը բերվում է դատարան՝ քննարկելու համար վերջինիս կալանավորման իրավաչափության և կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու հարցերը: Առկա է նաև կարծիք, որ այդ փուլում նման զեկույցի կարիք չկա: Կան նաև կոռուպցիոն ռիսկեր: Հատկապես խնդրահարույց է Հայաստանի մարզերում պրոբացիայի ծառայության աշխատանքի արդյունավետ կազմակերպումը. համայնքում բոլորն իրար ճանաչում են, և պրոբացիայի ծառայության աշխատողը դժվար թե կարողանա օբյեկտիվ զեկույց պատրաստել՝ հաշվի առնելով նաև համայնքի ճնշումը աշխատողի վրա:

Փորձագետների ճնշող մեծամասնությունը դրական կարծիք արտահայտեց պայմանական վաղաժամկետ ազատման, պատիժը պայմանականորեն չկիրառելու և ազատազրկման հետ չկապված պատիժ կրելու դեպքերում պրոբացիոն ծառայության դերի մասին: Բոլոր փորձագետները համաձայնեցին, որ երբ անձը ազատվում է բանտից անհրաժեշտ է շարունակել վերահսկողությունը և տրամադրել աջակցություն, ինչպես նաև համալիր ծառայություններ:

Առաջին հերթին, առկա է ընդհանուր համաձայնություն, որ հանցանքի կանխարգելմանը ուղղված բազմաթիվ միջոցառումներ կիրառելի են նաև կրկնահանցագործության կանխարգելման նկատմամբ, թեև կան որոշակի առանձնահատկություններ: Քննարկելով կրկնահանցագործության կանխարգելման հնարավորությունները՝ առանձնացվել են հետևյալ գործոնները և անհրաժեշտ միջոցառումները, որ կարող են իրականացվել Պրոբացիոն ծառայության կողմից.

- *անձնային կոնստրուկտիվ որակների զարգացում.*
- *իրավախախտի ընտանիքի հետ աշխատանք, իրավախախտի և իր ընտանիքի անդամների միջև դրական հարաբերությունների ձևավորում և պահպանում.*
- *հանցավոր շրջապատի հետ շփվելու հնարավորությունների սահմանափակում.*
- *ՔԿՀ-ում նախատեսված աշխատանքների լիարժեք իրականացում.*
- *իրավական համակարգի նկատմամբ վստահության վերականգնում.*
- *տույժերի և խրախուսանքների նպատակային կիրառում.*
- *զբաղվածության ապահովում, ինչը ենթադրում է նաև գործատուների իրազեկում նման մարդկանց աշխատանքի ընդունելու անհրաժեշտության մասին.*

- *մասնագիտության ձեռքբերման ուղղությամբ աշխատանքներ.*
- *արվեստի ուղղությամբ աշխատանքներ.*
- *սպորտի ուղղությամբ աշխատանքներ.*
- *ազատվելուց հետո սոցիալական աշխատողի շարունակական աջակցություն.*
- *սոցիալական պայմանների բարելավում, աջակցություն իրավախախտ անձի սոցիալական ապահովության և բարեկեցության մակարդակի բարելավման ուղղությամբ.*
- *դատարանի կողմից պատժի տեսակն ու կրելու ժամկետը սահմանելիս անհատական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտություն, հաշվի առնելով մի շարք գործոններ.*
- *այլընտրանքային պատիժների համակարգի զարգացում և կիրառում, պատիժն ավելի մեղմ միջոցներով փոխարինում:*

Ընդգծվեց, որ հետագա հանցագործություններն արդյունավետորեն կանխելու համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ բոլոր նշված ուղղություններով:

Հանցագործությունների և կրկնահանցագործությունների կանխարգելման տեսանկյունից առաջնային նշանակություն և դերակատարություն տրվեց զանգվածային լրտվամիջոցներին և կրթական հաստատություններին, որոնց ազդեցությունը կարևոր է մասնավորապես անձի դաստիարակության և սոցիալականացման համատեքստում: Կարևորվեց նաև պատանիների և երիտասարդների զբաղվածության ապահովման հարցը:

Այս առումով պակաս կարևոր չէ նաև ծնողների դերը. երբեմն անհրաժեշտ է լինում աշխատանքներ անցկացնել ծնողավարության հմտությունների զարգացման ուղղությամբ:

Անհանգստացնող է պրոբացիայի ծառայության համար անհրաժեշտ մասնագիտական կադրերի ապահովման խնդիրը. պրոբացիան պահանջում է հատուկ կրթություն և պրոֆեսիոնալիզմ ունեցող անձինք, որոնց պակասը զգացվում է ՀՀ-ում: Մյուս կողմից՝ կարևոր է, որ համակարգի ծրագրմամբ և ստեղծմամբ զբաղվեն ոլորտի պրակտիկ աշխատողները, որոնք դատապարտյալների հետ գործնական շփման փորձ ունեն: Հնչեց նաև կարծիք ուժային կառույցների կողմից պրոբացիայի իրականացման անհրաժեշտության մասին, քանի որ համազգեստը հարգանք է առաջացնում: Պրոբացիոն ծառայության անձնակազմի ձևավորման հարցում կարևորվեց աշխատակիցների սեռը՝ ընդգծելով որ պետք է ավելի շատ ներգրավել արական սեռի ծառայողների:

Այս կարծիքի կողմնակիցները նշեցին, որ հաշվի առնելով հայկական մտածելակերպը՝ դժվար է պատկերացնել, որ իրավախախտ տղամարդը կենթարկվի պրոբացիայի կին աշխատողին: Նշվեց նաև, որ եթե պրոբացիոն ծառայությունը հնարավորություն ունենա զբաղվել աշխատանքի ապահովման խնդրով, դա բանականին օգտակար կլինի: Ծառայությունը կարող է նաև օգնել և խորհուրդ տալ անձին՝ ուր դիմել և ինչպես վարվել:

Կարևոր է նաև, որ պրոբացիայի ծառայողն ունենա այն բոլոր սոցիալական երաշխիքները, որոնք ունեն քրեակատարողական համակարգի աշխատակիցները, ինչպես նաև հոգեբանի ծառայություններից օգտվելու հնարավորություն:

Ուշադրության արժանացավ այն հանգամանքը, որ պրոբացիայի համակարգի ներդրման նախորդող նախապատրաստական փուլում անհրաժեշտ է նաև բնակչության իրազեկման միջոցառումներ իրականացնել:

Ընդգծվեց նաև անչափահաս տարիքում հանցանք կատարած անձանց նկատմամբ անհատական մոտեցման կարևորությունը՝ մատնանշելով անչափահասների գործերը վարող դատավորների, դատախազների և քննիչների մասնագիտացման կարիքը:

Պրոբացիայի ծառայության արդյունավետ գործունեության համար կարևոր նախապայման է բարեփոխման հիմքում ընկած հայեցակարգի և գաղափարների պահպանումը և փոխանցումը հայեցակարգը մշակողներից կիրարկողներին, որպեսզի առկա գաղափարները և գործառույթները ընթացքում չխեղաթյուրվեն: Սա ապահովելու համար նույնպես անհրաժեշտ է լուծել կադրային ապահովման խնդիրը:

Հարցազրույցին մասնակցած քրեակատարողական հաստատության աշխատակիցների կողմից վեր հանվեց հետևյալ խնդիրը. «եթե պրոբացիայի ծառայությունը աշխատելու է այն մարդկանց հետ, ովքեր այլընտրանքային պատիժ են կրում դրսում, ապա խնդիր չենք տեսնում, սակայն եթե պրոբացիայի ծառայությունը պետք է լրացուցիչ լծակ հանդիսանա ՔԿՀ վարչակազմի վրա, դա անընդունելի է»:

Նկար 4. Պրոբացիայի ծառայության հնարավորությունները

Նկար 5. Պրոբացիայի ծառայության խնդիրները

8.3 Պատիժը կրող կամ կալանավորված անձանց հետ հարցազրույցների վերլուծություն

Ստորև ներկայացված *աղյուսակ 24-ում* ներկայացված է իրավախախտների կարծիքը կրկնահանցագործության կանխարգելման հնարավորությունների վերաբերյալ, որը հիմնականում համահունչ է փորձագետների հնչեցրած տեսակետներին:

Աղյուսակ 24. Ձեր կարծիքով՝ ի՞նչը կարող է հետ պահել կրկին հանցանք կատարելուց

Պատասխան	Հարցվածներ (%)
Մտածելակերպի փոփոխությունը, սեփական արարքների իմաստի ու հետևանքների գիտակցումը	33,8
Ընտանիքը	21,8
Աշխատանք ունենալը	19,7
Նյութական խնդիրների բացակայությունը, նորմալ եկամուտը	13,4
Պետության կողմից չանտեսվելը, չարհամարհվելը, օրենքի տառի պահպանումը	7,7
Պատիժը, «գաղութի պայմաններն ու կյանքը, վանդակը»	7,7
Հանցավոր վարք ունեցող անձանց հետ չշփվելը	7,0
Ազատության գնահատումը	2,8
Հոգեբանական աջակցությունը	2,8
Հայաստանից մեկնելը, որ այլևս ոստիկանները հետևիցս չընկնեն	2,1
Չխաբվելը մարդկային հարաբերություններում	0,7
Մոլեխաղերից հետ կանգնելը	0,7
Ոչ մի բան	4,2

Հատկանշական է, որ եթե հարցվածների 33.8% նշեց, որ մտածելակերպի փոփոխությունը, ինչպես նաև սեփական արարքի նշանակության և դրա հետևանքների գիտակցումը կարող է հետ պահել կրկին հանցանք կատարելուց, ապա ըստ հարցվածների 4.2%-ի՝ ոչինչ չի կարող օգնել կանխելու կրկնահանցագործությունը:

IX. Եզրակացություն

Վերջին տարիներին Հայաստանում հանցագործությունների ընդհանուր թվաքանակն աճել է: Սրա բացատրություններից մեկը կարող է լինել ոստիկանությունում հանցագործությունների գրանցման պրակտիկայի բարելավումը: Սակայն 2013 թվականին գրանցված հանցագործություններից միայն 66%-ն է բացահայտվել, որը նվազել է 2012 թվականի համեմատությամբ, երբ այդ թիվը կազմում էր 78%: Չնայած հանցագործությունների թվաքանակի աճին՝ վերջին տարիներին նվազել է քրեական պատասխանատվության ենթարկված

անձանց թիվը (2,39%-ով նվազել է քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը 2012 թվականի համեմատությամբ, և 1,48%-ով՝ 2012 թվականին՝ 2011-ի համեմատությամբ):

Բավականին մտահոգիչ է կանանց կողմից կատարվող հանցագործությունների աճը: Այսպես, 2013 թվականին կանայք կատարել են 200-ով ավելի հանցագործություն, քան 2012 թվականին (համապատասխանաբար 1613 և 1420 դեպք): Մինչդեռ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների թիվը 2012-2013 թվականներին նվազել է: Այս նվազման համար մեծ դերակատարություն ունեն ոստիկանության և վերականգնողական կենտրոնների կողմից ձեռնարկված համատեղ ջանքերը:

Գրանցված հանցագործությունների մի մասը կատարել են նախկինում դատապարտված անձինք: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած Հայաստանում հանցագործությունների թվի աճին, նախկինում դատապարտված անձանց կողմից կատարվող հանցագործությունների թիվը նվազել է 2004 թ. դրությամբ: Եթե 2004 թվականին գրանցված հանցագործությունների կառուցվածքում նախկինում հանցանք կատարողների կողմից իրականացված հանցագործությունները կազմում են 18,6%, ապա 2013 թվականին՝ ընդամենը 3,7%: Եթե վերլուծենք բացահայտված հանցագործությունների թիվը, ապա 2013 թվականին բացահայտված հանցագործությունների թվից նախկինում դատապարտված անձանց կողմից կատարվել է հանցագործությունների 5,58%-ը: Սա մտահոգիչ ցուցանիշ է, ինչը ցույց է տալիս, որ ամեն տարի ավելի մեծաթիվ անձինք են ներգրավվում հանցագործությունների մեջ, քանի որ հանցագործությունների ցուցանիշը չի նվազում:

ՀՀ-ում բացահայտված հանցագործությունների գրեթե կեսը կատարվել է 30-49 տարեկան անձանց կողմից: Միևնույն ժամանակ վերջին տարիներին առավել ցայտուն է 18-24 տարեկան անձանց կողմից կատարվող հանցագործությունների թվի աճը՝ 2012 թվականին այդ տարիքային խմբի ընդհանուր բնակչության 1,25%-ից հասնելով 1,31%-ի 2013 թվականին: Սակայն կատարված հանցագործությունների ամենամեծ մասնաբաժինը պատկանում է 25-29 տարիքային խմբին: 2013 թվականին ՀՀ-ում այդ տարիքային խմբին պատկանող անձանց 1,81%-ն է կատարել հանցագործություն:

2013 թվականին նախկինում դատապարտված անձանց կողմից կատարված հանցագործությունների 65%-ը ոչ մեծ (50,22%) և միջին ծանրության (14,46%) հանցագործություններ են: Այս հանցագործությունների մեծ մասն ուղղված է սեփականության դեմ, մասնավորապես, գրանցվել են գողություններ: Երկրորդ խմբում ընդգրկված են թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները (մոտ 10%), որից հետո՝ ծեծը (8%):

Հատկանշական է, որ 2013 թվականին Հայաստանում ոստիկանության կողմից գրանցված հանցագործությունների 46%-ը կատարվել է Երևանում, մինչդեռ երկրորդ տեղը զբաղեցնում է Արմավիրը՝ 7,8%: Բոլոր կրկնահանցագործների 26,6%-ը պատասխանատվության է ենթարկվել Երևանում, 18.3%-ը՝ Լոռիում, 14.4%-ը՝ Շիրակում և 8,3%-ը՝ Կոտայքում:

Պետք է նշել, որ կրկնահանցագործների կողմից կատարված հանցագործությունների ընդհանուր թվի 38%-ը տեղի է ունեցել Երևանում, 15,2%-ը՝ Կոտայքում, 11,5%-ը՝ Լոռիում, 10,6%-ը՝ Շիրակում և 5,1%-ը՝ Արմավիրում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փորձագետների կարծիքով հանցավորությանը մեծապես նպաստում են թե՛ կենսական կարիքները, և թե՛ հանցածին գործոնները, ներառյալ՝ աղքատությունը, մասնագիտական որակավորման/կրթության կամ հմտությունների բացակայությունը, հակահասարակական կեցվածքը, արժեքները և համոզմունքները, ինչպես նաև շրջապատը և միջավայրը, ընտանեկան դրությունը, անձնային որակները և խառնվածքը, ալկոհոլի կամ թմրամիջոցների չարաշահումը և խաղամոլությունը: Թեև նշվել է, որ հանցանք կատարելուն նպաստող գործոնների մեծ մասը ազդում են նաև հանցավոր վարքագծի հետագա պահպանման վրա, կրկնահանցագործության ռիսկերի մեծացման տեսանկյունից փորձագետները մասնավորապես ընդգծեցել են հետևյալ գործոնների ներգործությունը. աղքատությունը, մասնագիտական որակավորման կամ կրթության բացակայությունը, որը հանգեցնում է աշխատաշուկայում անձի անմրցունակության, երբ դա համակցվում է նաև դատվածություն ունենալու հետ, անձնային/անհատական առանձնահատկությունները, հանցավոր ենթամշակույթի ազդեցությունը, ընտանեկան ոչ բարենպաստ պայմանները, ինչպես նաև որոշակի չափով հասարակության վերաբերմունքը և պիտակավորումը: Ընդգծվել է հանցավորությանը և կրկնահանցագործությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների, ինչպես նաև պատիժը կրելու ընթացքում և դրանից հետո աջակցության և կրկնահանցագործության կանխմանն ուղղված ձեռնարկումների բացակայության փաստը:

Միևնույն ժամանակ հարցազրուցին մասնակցած իրավախախտները նշել են, որ նյութական դժվարությունները և աղքատությունը, ներառյալ՝ աշխատանքի բացակայությունը, անձի խառնվածքի առանձնահատկությունները, արարքի նշանակության թյուրըմբռնումը, հասակակիցների և շրջապատի ներգործությունը, խաղամոլության հետ կապված խնդիրները և հասարակության վերաբերմունքը այն գործոններից են, որ նպաստում են հանցավոր վարքի յուրացմանը: Իսկ որպես կրկնահանցագործությանը նպաստող գործոններ նշվեցին աղքատությունը, քրեական ենթամշակույթում կամ շրջապատում ներգրավվածությունը, ինչպես նաև անձի խառնվածքի առանձնահատկությունները:

Դատապարտյալների հետ հարցազրույցների արդյունքում արձանագրվեց, որ նրանց գրեթե 30%-ի մոտ բացակայում է դրական սոցիալական կապը, որն անհրաժեշտ է վերասոցիալականացման համար, քանի որ նրանք պատիժը կրելու ժամանակ ոչ ոքի հետ կապ չեն պահպանում:

Լուրջ մտահոգություն է արձանագրվել դատապարտյալների հետ տարվող աշխատանքների որակի հետ կապված, մասնավորապես այն գործողությունների մասով, որոնք ուղղված են նախկին դատապարտյալների վերաինտեգրմանը և վերասոցիալականացմանը, ինչպես նաև ազատազրկման հետ կապ չունեցող պատիժների դեպքում՝ պարբերական վերահսկողության իրականացմանը: Շեշտվել է, որ նախկինում հանցանք կատարած անձանց վերասոցիալականացման թերի կազմակերպումը և իրականացումը, նրանց կենսական խնդիրների նկատմամբ անուշադրությունը և անտարբերությունը, դրանով պայմանավորված՝ հասարակությունից մեկուսացումը նպաստում են նրանց հոգեբանական օտարացման խորացմանը:

Վերլուծվել են ազատազրկումը և ազատազրկման հետ կապ չունեցող պատիժները: Պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ իրավապահ մարմինները և դատարանները նախընտրում են կալանավորում՝ խափանման միջոցը և ազատազրկման հետ կապ ունեցող պատիժները կիրառել: Այսպես, 2013 թվականին 3829 դատապարտվածներից ազատազրկման է դատապարտվել 2997 անձ (78,4%), ընդ որում, մեղավոր ճանաչվածներից 57%-ը փաստացի ազատազրկում է կրել, իսկ 21,4%-ի դեպքում պատիժը պայմանականորեն չի կիրառվել: 2012 թվականին բոլոր դատապարտված անձանցից ազատազրկման դատապարտվել է 72,1%-ը, մինչդեռ ազատազրկման ձևով պատիժ է կրել 53,5%-ը, իսկ 18,6%-ի դեպքում պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս որ ազատազրկման ազդեցությունը հարցվածների կյանքի բոլոր բնագավառներում էական է և հիմնականում բացասական: Այն ազդում է անձի և նրա ընտանիքի նյութական բարեկեցության և եկամտի վրա, աշխատանքի ձեռքբերման, ինչպես նաև առողջական վիճակի վատթարացման վրա, որին նաև նպաստում է քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածությունը և ոչ բավարար բժշկական աջակցությունը: Բացի այդ, շրջապատի բացասական ազդեցությունը ավելի խիստ է արտահայտվում քրեակատարողական հիմնարկում: Մտահոգություն է արձանագրվել առ այն, որ ազատազրկումը նպաստում է կրկնահանցագործություններին, քանի որ դատապարտյալները շատ բան են սովորում ազատազրկման ձևով պատիժը կրելուց: Կարևոր դեր են խաղում նաև այն կապերը, որոնք անձինք ձեռք են բերում ազատազրկման վայրում պատիժը կրելիս: Սոցիալական բացասական միջավայրի ազդեցությունը հատկապես կարող է ազդեցիկ գործոն լինել անչափահասների

պարագայում: Հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկների ներկայիս հնարավորությունները և ՀՀ-ում առկա պայմանները՝ թվում է՝ ազատազրկումը միայն մեկ նպատակի է ծառայում, այն է՝ անձին հասարակությունից մեկուսացնելուն, այն դեպքում, երբ հասարակությունից մեկուսացնելը պետք է պատժի նպատակների իրականացման նախապայման հանդիսանա: Ազատազրկումը, բոլոր դեպքերում, կարող է առավել ազդեցիկ լինել, եթե այն իրականացնի ոչ միայն զուտ մարդուն մեկուսացնելու գործառույթ, այլև համակցվի անձի ուղղման նպատակ ունեցող աշխատանքներով:

Դատապարտումը, և հատկապես ազատազրկումը, տարբեր կերպ է անդրադառնում կանանց և տղամարդկանց վրա: Կանայք համբերատար սպասում են իրենց ազատազրկված ամուսիններին, մինչդեռ ազատազրկված կնոջ հարաբերություններն իր ընտանիքի հետ հաճախ խզվում են:

Ի տարբերություն ազատազրկման, ազատազրկման հետ չկապված պատժատեսակների կրումը չունի այդքան արտահայտված բացասական ազդեցություն: Ինչ վերաբերում է ընտանիքի եկամտին և բարեկեցությանը, այլընտրանքային պատիժ կրող անձանց մեծ մասը (61,2%-ը) նշել է, որ իրենք են ընտանիքի բարեկեցությունն ապահովում կամ գոնե կախված չեն ընտանիքի կողմից տրվող աջակցությունից: Ազատազրկման հետ չկապված պատժատեսակների կիրառումը ավելի փոքր բացասական ազդեցություն ունի ընկերների, ազգականների և հարևանների հետ հարաբերությունների վրա: Այս պատժամիջոցը միաժամանակ նպաստում է ադեկվատ սոցիալականացմանը՝ կանխելով դատապարտված անձի ինտեգրվելը «գողական» ենթամշակույթին: Այլընտրանքային պատիժների կիրառությունն անհրաժեշտ է ընդլայնել, մանավանդ առաջին անգամ հանցագործություն կատարելու դեպքում, քանի որ դրանք դրական ազդեցություն ունեն թե՛ դաստիարակչական, թե՛ հանցագործությունները կանխելու իմաստով: Սակայն այլընտրանքային պատժատեսակ կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք ամբաստանյալը կարո՞ղ է այդ պատիժը կրել, ո՞ր պատժատեսակն է նրա դեպքում ավելի նախընտրելի, ո՞րը ավելի արդյունավետ կլինի: Տուգանքը և համայնքային աշխատանքը կարող են նպաստել կրկնահանցագործությանը, եթե ռիսկերը ճիշտ չգնահատվեն, և բոլոր գործոնները հաշվի չառնվեն:

Հատկանշական է, որ այլընտրանքային պատիժ կրողների համար ընդհանրապես նախատեսված չէ որևէ աշխատանք ո՛չ սոցիալական աշխատողի, ո՛չ հոգեբանի հետ: Մինչդեռ ժամանակի ընթացքում առաջանում է նման մասնագետներ ներգրավելու և նման աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը: Այլընտրանքային պատժատեսակները պետք է զուգորդվեն նաև մասնագետների (հոգեբանի, սոցիալական աշխատողի, մանկավարժի, իրավաբանի և այլն) կողմից դատապարտյալների հետ կատարվող նպատակային աշխատանքներով և

շարունակական աջակցությամբ, ներառյալ ապահովելով կրթության և աշխատանքի մատչելիությունը: Ամենառիսկային ժամանակաշրջանը ազատվելուց հետո առաջին 3 տարին է:

Նշվում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը կարելի է ավելի հաճախ կիրառել՝ հաշվի առնելով տարբեր հանգամանքներ: Կատարվող աշխատանքների և պատժի կիրառման արդյունավետությունը կախված է այն աշխատանքներից, որոնք իրականացվում են՝ դատապարտյալի նկատմամբ համապատասխան հսկողության իրականացման ապահովման նպատակով: Սակայն այս դեպքում ևս այն անհրաժեշտ է համակցել անձի հետ կատարվող աշխատանքներով, որոնք ուղղված կլինեն կատարված արարքի վտանգավորության, պատժի նպատակների պարզաբանմանը, կընդգրկեն կրթական և զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրեր: Պետք է հստակորեն բացատրել նաև փորձաշրջանի ընթացքում սահմանված կանոնների խախտման հնարավոր բոլոր բացասական հետևանքները: Այլապես տվյալ պատժամիջոցը կարող է նպաստել անձի մոտ անպատժելիության հոգեբանական զգացման ձևավորմանը և որոշ դեպքերում հանգեցնի կրկնահանցագործության:

Պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը արդյունավետ չի աշխատում, համակարգում առկա են լուրջ բացթողումներ: Մտահոգությունների հիմնական խնդիրներից է չափորոշիչների բացակայությունը, որը հնարավորություն կտար գնահատելու դատապարտյալի կողմից կրկնահանցագործության կատարման ռիսկերը: Չափորոշիչների բացակայությունը հանգեցնում է այն խնդրին, որ ներկա պահին որոշումները դատապարտյալների համար կանխատեսելի չեն:

Լուրջ մտահոգություն է արձանագրվել համաներման հիմքով դատապարտյալների ազատման վերաբերյալ: Նշվեց, որ համաներումները զգալիորեն նպաստում են կրկնահանցագործությունների աճին, քանի որ որևէ վերահսկողություն չի իրականացվում ազատված անձանց նկատմամբ: Ի տարբերություն համաներման, պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում անձը ավելի շատ է կաշկանդված հանցագործություն կատարելու առումով, քանի որ դժվարությամբ վաստակած ազատությունը չի ցանկանում կորցնել: Իր դերն է խաղում նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակահատվածում նոր հանցագործություն կատարելու դեպքում պատժի չկրած մասը գումարվում է նոր պատժի ժամկետին, որը նույնպես ունի զսպող դեր:

Ազատազրկման արդյունավետության և ազատազրկված անձի վրա ՔԿՀ ներգործության վերաբերյալ խիստ հակասական կարծիքներ հնչեցին: Նշվեց, որ դատապարտյալները ՔԿՀ-ից դուրս են գալիս կա՛մ կոտրված, հիասթափված, կա՛մ էլ կատաղած: Միևնույն ժամանակ նշվեց, որ եթե քրեակատարողական

համակարգը, հիմնարկները չլինեին, հանցավորության մակարդակը կտրուկ կբարձրանար: Մտահոգություն է հնչել նաև ՔԿՀ աշխատակազմի աշխատանքների, մասնավորապես՝ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող բաժնի աշխատանքների վերաբերյալ: Խնդիր է ոչ միայն այս բաժինների մասնագիտական ցածր կարողությունները, այլ նաև ոչ բավարար մասնագետների առկայությունը: Կարծիք հնչեց, որ մասնագետների աշխատանքը կարող է արդյունավետ լինել, եթե դատապարտյալը պատրաստ է ուղղվելու: Ուղղման տեսանկյունից դատապարտյալների առավել բարդ խումբը նրանք են, ովքեր հարմարվում են ՔԿՀ միջավայրին, պայմաններին, կարգին, նիստուկացին և ձգտում են ետ վերադառնալ: Նշվեց, որ կարևոր են հոգեբանի, իրավաբանի և սոցիալական աշխատողի կողմից իրականացվող աշխատանքները, որոնք ուղղված կլինեն հաշվի առնելու դատապարտյալի անհատական կարիքները: Սակայն նաև նշվել է, որ հոգևորականի աշխատանքը ավելի բարձր է գնահատվում դատապարտյալի կողմից:

Կարծում ենք՝ առաջիկայում պրոբացիայի ծառայության ձևավորումը կարող է իր դրական դերն ունենալ կրկնահանցագործությունների կանխարգելման գործում: Մի շարք միջոցառումների հետ միաժամանակ նաև արձանագրվել է հետևյալ ուղղություններով աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը՝ դատապարտյալի ընտանիքի անդամների հետ աշխատանք, դատապարտյալի և իր ընտանիքի անդամների հետ դրական կապի ապահովում, քրեական միջավայրի հետ շփման հնարավորության սահմանափակում, քրեակատարողական հաստատության կողմից նախատեսված աշխատանքների լիարժեք իրականացում, զբաղվածության ապահովում, որը ներառում է նաև գործատուների իրազեկվածության բարձրացում նման անձանց աշխատանքի ընդունելու համար, գործողություններ, որոնք կխթանեն նոր մասնագիտության ձեռքբերմանը, սոցիալական աշխատողի կողմից շարունակական աջակցություն դատապարտյալին վերջինիս ազատվելուց հետո, ինչպես նաև դատապարտյալի սոցիալական պայմանների, սոցիալական ապահովության և բարեկեցության բարելավմանն ուղղված աջակցություն:

Հավելված 1. Պատիժը կրող հարցված անձանց վերաբերյալ տվյալներ

Հարցված դատապարտյալների 53,1%-ը նշել է, որ առողջ է, մյուսները նշել են, որ ունեն քրոնիկական հիվանդություններ կամ հաշմանդամություն (տե՛ս *աղյուսակ 25*):

Աղյուսակ 25. Ձեր առողջական վիճակը

Առողջական վիճակ	Հարցվածներ (%)
Առողջ եմ	53,1
Ունեմ քրոնիկական հիվանդություն	34,0
Ունեմ հաշմանդամության խումբ	12,9
Ընդամենը	100,0

Հարցման արդյունքների համաձայն՝ մինչև առաջին դատապարտումը հարցվածների 10,6%-ը բնակվել է վարձով, 17,6%-ը՝ ընկերների/ազգականների բնակարանում, 2,1%-ը՝ հանրակացարանում, 2,1%-ը՝ տնակում: Հարցվածների հիմնական մասը (66,9%) մինչև առաջին դատապարտումը բնակվել է բնակարաններում, որոնց սեփականատեր են կամ համասեփականատեր (համապատասխանաբար 36,6% և 30,3%): Սակայն ազատազրկումից հետո սեփական բնակարանում նախատեսում են բնակվել հարցվածների ավելի փոքր տոկոսը, միևնույն ժամանակ աճում է նրանց տոկոսը, ով մտածում է բնակվել վարձով կամ բարեկամների տանը (տե՛ս *աղյուսակ 26*):

Աղյուսակ 26. Որտե՞ղ եք բնակվում

Պատասխան	Մինչև դատապարտվելը (%)	Այժմ (%)	Պատիժը կրելուց հետո (%)
Իմ սեփականություն հանդիսացող բնակարանում	36,6	16,9	31,0
Բնակարանում, որի համասեփականատեր եմ հանդիսանում	30,3	18,3	27,5
Վարձով բնակարանում	10,6	4,9	13,4
Ընկերներիս/ազգականներիս բնակարանում	17,6	8,5	19,0
ՔԿՀ-ում	-	50,7	-
Հանրակացարանում	2,1	0,7	2,1
Տնակում	2,1	-	1,4
Կմեկնեմ երկրից	-	-	1,4
Դժվարանում եմ պատասխանել	0,7	-	4,2
Ընդամենը	**100**	**100**	**100**

Պատիժը որոշելիս դատարանը հաշվի է առնում բազմաթիվ ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանգամանքներ: Ըստ հարցման արդյունքների՝ ծանրացուցիչ հանգամանքներն առաջին անգամ հանցանք կատարելու պարագայում հաշվի են առնվել հարցվածների 2,8%, իսկ երկրորդ անգամ՝ 2,1% դեպքում[28]: Մեղմացուցիչ հանգամանքները դատարանը շատ ավելի հաճախ է հաշվի առել. առաջին հանցանքի դեպքում 37,2%, իսկ երկրորդ հանցանքի դեպքում՝ 33,8% պարագայում: Ընդ որում, եթե ծանրացուցիչ հանգամանքների ցանկը բավական սահմանափակ է (*նախկին հանցանքներ, հանցանքի խմբակային բնույթ, խոշոր վնաս, անչափահասի ներգրավում*), ապա մեղմացուցիչների ցանկը շատ ավելի լայն է (տե՛ս *աղյուսակ 27*):

Աղյուսակ 27. Դատարանի կողմից ձեր նկատմամբ դատավճիռը կայացնելիս ի՞նչ մեղմացուցիչ հանգամանքներ են հաշվի առնվել

Պատասխան	Հարցվածներ %
Անչափահաս երեխայի/ների առկայությունը	44,2
Անչափահաս լինելը	19,7
Հաշմանդամության խումբ/ծանր հիվանդություն ունենալը	18,0
Խնամքին հաշմանդամ և կենսաթոշակառու ծնողի/կնոջ/քրոջ/եղբոր առկայությունը	14,8
Առաջին անգամ հանցանք կատարելը	13,1
Մեղքն ընդունելը	8,2
Պատճառված վնասի փոխհատուցումը	4,9
Ընտանեկան, անձնական դրական բնութագիրը	4,9
Բանակում ծառայելու փաստը	3,3
Կնոջ հղիությունը	1,6
Գողոնն ընկերոջ մոր թաղման ծախսերի համար օգտագործելը	1,6

Աղյուսակ 28. Հարցվածների սեռը.

Համատեքստը	Հարցվածներ սեռը %		
	Արական	Իգական	Ընդամենը
Պատիժը կրում է ազատազրկման վայրում	45.2	68.8	47.9
Կալանքը, որպես խափանման միջոց է կրում	5.6	0.0	4.9
Այլընտրանքային պատիժ է կրում	49.2	31.2	47.2
Ընդամենը	100	100	100

[28] Նշված ցուցանիշները հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ արարքը որակելիս ծանրացուցիչ հանգամանքներ արդեն իսկ հաշվի են առնվել:

Աղյուսակ 29. Հարցվողների կարգավիճակը ըստ սեռատարիքային բնութագրիչի

Համատեքստը	14-17 (%)		18-24 (%)		25-29 (%)		30-49 (%)		50 + (%)		Նշմամ բաց.		Ընդամենը (%)	
	Ա	Ի	Ա	Ի	Ա	Ի	Ա	Ի	Ա	Ի	Ա	Ի	Ա	Ի
Պատիժը կրում է ազատազրկման վայրում	100	0.0	34.8	0.0	44.4	0.0	50	80	40.9	70	50	0.0	**45.2**	**68.8**
Այլընտրանքային պատիժ է կրում	0.0	0.0	56	0.0	50.0	100	45	20	54.5	30	50	0.0	**49.2**	**31.2**
Ընդամենը	100	0.0	100	0.0	100	100	100	100	100	100	100	0.0	**100**	**100**

Հավելված 2. Փորձագիտական հարցազրույցի հարցաշար

Հարգելի զրուցակից, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ-ն իրականացնում է կրկնահանցագործության պատճառների և կանխարգելման հնարավոր ուղիների ուսումնասիրությանն ուղղված հետազոտություն: Տվյալ հարցման արդյունքներն օգտագործվելու են միայն ընդհանրացված ձևով: Խնդրում ենք Ձեզ պատասխանել ստորև բերված հարցերին: Կանխավ շնորհակալ ենք տրամադրված ժամանակի և անկեղծ պատասխանների համար:

Փորձագետի մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրը, աշխատանքային ստաժը, տարիքը, սեռը:

1. Ձեր կարծիքով՝ որո՞նք են **կրկնահանցագործության հիմնական պատճառները**:
2. Խնդրում եմ՝ նկարագրեք Ձեր մասնագիտական պրակտիկայի ընթացքում դիտարկված **մի քանի դեպք՝** *մեկնաբանելով հանգամանքները, պատճառները և դեպքի առանձնահատկությունները*:
3. Ըստ Ձեզ՝ ինչպե՞ս է ազդում **հանցանքի համար նշանակված պատժի տեսակը** կրկնահանցագործության վրա՝ ինչպես **առաջին անգամ,** այնպես էլ հաջորդող դեպքերում:
    1. **Ազատազրկումը (և դրա տևողությունը),**
    2. **պատիժը պայմանականորեն չկիրառելը,**
    3. **պայմանական վաղաժամկետ ազատումը,**
    4. **այլընտրանքային պատժատեսակների կիրառումը**
    5. **համաներումը,**
    6. **ներումը,**

4. Ձեր կարծիքով ինչպե՞ս է ազդում **ՔԿՀ ներգործությունը դատապարտյալների ուղղման վրա**: Մեկնաբանեք Ձեր պատասխանը:

5. Ըստ Ձեզ՝ որքանո՞վ են նպաստում **ՔԿՀ-ում կատարված աշխատանքները** կրկնահանցագործության կանխարգելման վրա:

   - *Կարչակազմի (ՔԿՀ պետ, ռեժիմի պատասխանատու, հսկիչ, տեսուչ և այլն) կողմից տարվող աշխատանքները, տույժերը և խրախուսանքները,*

   - *Հոգեբանի, սոցիալական աշխատողի, իրավաբանի և հոգևորականի* :

6. Պարզաբանվո՞ւմ է արդյոք դատապարտյալներին **պատժի նպատակը** (*ազատազրկման հետ կապված և չկապված*): Եթե այո, ապա ո՞ւմ կողմից և ինչպե՞ս:

7. Իսկ որքանո՞վ է ազդում **“գողական” (հանցավոր) ենթամշակույթի** յուրացումը կրկնահանցագործության վրա: Որո՞նք են “գողական” ենթամշակույթի ձևավորման և տարածման մեխանիզմները: Որքանո՞վ է այն արմատավորված այսօր, և ի՞նչ փոխակերպումների է ենթարկվում: Ինչպե՞ս կարելի է կանխարգելել նշված ենամշակույթի տարածումը:

8. Ըստ Ձեզ՝ ինչպե՞ս է ազդում **հասարակության վերաբերմունքը** (*պիտակավորումը*) կրկնահանցագործության վրա:

9. Ըստ Ձեզ՝ ինչպե՞ս է ազդում **ընտանեկան իրավիճակը** կրկնահանցագործության վրա:

10. Ըստ Ձեզ՝ ինչպե՞ս են ազդում **անձնային որակները** կրկնահանցագործության վրա:

11. Ձեր կարծիքով ի՞նչը կարող է նպաստել **կրկնահանցագործությունների կանխարգելմանը**:

12. Որքանո՞վ եք տեղյակ **պրոբացիոն ծառայության առավելությունների** մասին:

13. Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է նպաստել պրոբացիոն համակարգի ներդրումը Հայաստանում կրկնահանցագործության կանխարգելմանը:

14. Ի՞նչ կցանկանայիք տեսնել պրոբացիոն համարակգում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հավելված 3. Պատիժը կրող անձի հետ հարցազրույցի հարցաշար

Հարգելի զրուցակից, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ-ը իրականացնում է կրկնահանցագործության պատճառների և կանխարգելման հնարավոր ուղիների ուսումնասիրությանն ուղղված հետազոտություն: Տվյալ հարցումն անանուն է, տվյալները օգտագործվելու են միայն ընդհանրացված ձևով: Խնդրում ենք Ձեզ պատասխանել ստորև բերված հարցերին:
Կանխավ շնորհակալ ենք տրամադրված ժամանակի և անկեղծ պատասխանների համար:

<u>Հաջորդիվ հարցերը հարցազրուցավարը լրացնում է հարցազրույցից առաջ</u>

1. **Հարցազրուցավարի** անուն _____ ազգանուն _____

2. **Հարցազրույցի անցկացման ամսաթիվը** _____

3. **Հարցազրույցի անցկացման վայրը.**
   1. ☐ «Արովյան» ՔԿՀ
   2. ☐ «Սևան» ՔԿՀ
   3. ☐ «Վանաձոր» ՔԿՀ
   4. ☐ «Արթիկ» ՔԿՀ
   5. ☐ «Կոշ» ՔԿՀ
   6. ☐ Այլ /նշել / _____

4. **Հարցվողը.**
   1. ☐ Պատիժը կրում է ազատազրկման վայրում
   2. ☐ Պատիժը պայմանականորեն չի կիրառվել
   3. ☐ Կալանքը, որպես խափանման միջոց է կրում
   4. ☐ Այլընտրանքային պատիժ է կրում

5. **Հարցվողի սեռը** 1. ☐ Արական 2. ☐ Իգական

<u>Հաջորդիվ հարցերը լրացվում են հարցվողի պատասխանների հիման վրա</u>

6. **Նշեք, խնդրեմ, Ձեր ծննդյան**
   տարին _____ ամիսը _____ օրը _____

7. **Նշեք, խնդրեմ, Ձեր բնակության վայրը**
   Մարզը_____ Համայնքը_____

8. **Նշեք, խնդրեմ, Ձեր ընտանեկան դրությունը**

1. ☐ Ամուրի 2. ☐ Ամուսնալուծված
3. ☐ Ամուսնացած 4. ☐ Այրի

9. **Ձեր ընտանիքի անդամների թիվը** _____

10. Նրանցից քանի՞սն են՝

1. իգական սեռի ներկայացուցիչ _____
2. անչափահաս _____
3. կենսաթոշակառու _____
4. ունեն հաշմանդամության կարգ _____
5. զբաղված (ունեն աշխատանք) _____

11. Որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի միջին ամսական եկամուտը: _____

12. Որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի միջին ամսական ծախսը: _____

13. Ձեր կրթությունը

1. ☐ Անավարտ միջնակարգ /նշեք/_____
2. ☐ Միջնակարգ
3. ☐ Միջնակարգ–մասնագիտական /նշեք մասնագիտությունը/_____
4. ☐ Բարձրագույն /նշեք մասնագիտությունը/_____
5. ☐ Այլ /նշեք/_____

14. Ձեր առողջական վիճակը (*հարցազրուցավարին՝ հարցվողը կարող է միաժամանակ ընտրել երկրորդ և երրորդ տարբերակները*)

1. ☐ Առողջ եմ
2. ☐ Ունեմ խրոնիկ հիվանդություն /նշեք հիվանդությունը/_____
3. ☐ Ունեմ հաշմանդամության կարգ /նշեք կարգը և հիվանդությունը/_____

15. Դուք ունեք արդյոք (կամ երբևէ ունեցել եք) **կախվածություն ալկոհոլից:**

1. ☐ Այո
2. ☐ Ոչ *(անցնել հարց 17-ին)*

16. Եթե այո, ապա խնդրում եմ՝ պատմեք ե՞րբ և ինչպե՞ս է առաջացել կախվածությունը:

_____

17. Իսկ թմրանյութերից կախվածություն ունե՞ք (կամ երբևէ ունեցել եք)**:**

1. ☐ Այո
2. ☐ Ոչ *(անցնել հարց 21-ին)*

18. Եթե այո, ապա խնդրում եմ՝ պատմեք ե՞րբ և ինչպե՞ս է առաջացել կախվածությունը:

_____

19. Եթե ունեք թմրանյութերից կախվածություն, ապա մասնակցել եք արդյոք մեթադոնային ծրագրին:

1. ☐ Այո *(անցնել հարց 21-ին)*
2. ☐ Ոչ

20. Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

_____

21. Ձեր մասնագիտությունը (*հարցազրուցավարին՝ բիզնեսով զբաղվելը նույնպես դիտարկեք որպես մասնագիտություն և մանրամասնեք՝ ի՞նչ բիզնեսի մասին է խոսքը*)

1. ☐ Չունեմ մասնագիտություն և չեմ ուզում ձեռք բերել
2. ☐ Չունեմ մասնագիտություն, բայց ուզում եմ ձեռք բերել /նշեք/_____
3. ☐ Ունեմ եկամտաբեր մասնագիտություն /նշեք/_____
4. ☐ Ունեմ մասնագիտություն, որը եկամտաբեր չէ /նշեք/_____
5. ☐ Ունեմ մի քանի մասնագիտություն /նշեք/_____
6. ☐ Այլ /նշեք/_____

22. Ձեր զբաղվածությունը *(հարցազրուցավարին՝5,6,7,8 պատասխանների ընտրության դեպքում, նշեք հիմնարկը և պաշտոնը)*

	22.1.Մինչև առաջին դատապարտումը	22.2. Առաջին դատապարտումից հետո	22.3. Այժմ
1. Աշակերտ	1	1	1
2. Ուսանող	2	2	2
3. Գործազուրկ	3	3	3
4. Թոշակառու	4	4	4
5. Պետական հիմնարկության աշխատակից /նշեք/_____	5	5	5
6. Մասնավոր կազմակերպության աշխատակից /նշեք/_____	6	6	6
7. Հասարակական կազմակերպության աշխատակից /նշեք/_____	7	7	7
8. Անհատ ձեռներեց /նշեք/_____	8	8	8
9. Այլ /նշեք/_____	9	9	9

23. Ինչպե՞ս կգնահատեք ընտանիքի անդամների հետ Ձեր հարաբերությունները:

1. ☐ Լավ
2. ☐ Նորմալ
3. ☐ Վատ

24. Եթե վատ, ապա ինչո՞ւ:

_____

25. Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս և որքա՞ն հաճախ եք շփվում Ձեր ընտանիքի անդամների հետ:

	Հաճախ	Հազվադեպ	Երբեք
25.1. Հեռախոսով	1	2	3
25.2. Այցելությունների ժամանակ	1	2	3

26. Ցուցաբերո՞ւմ են արդյոք Ձեր ընտանիքի անդամները Ձեզ որևէ նյութական աջակցություն:

1. ☐ Այո
2. ☐ Ոչ

27. Ընտանիքի անդամներից բացի ո՞ւմ հետ եք շփվում:

_____

28. Որտե՞ղ եք բնակվել մինչ դատապարտվելը, այժմ որտե՞ղ եք բնակվում, և որտե՞ղ եք պլանավորում բնակվել պատիժը կրելուց հետո:

	28.1. Մինչև դատապարտվելը	28.2.Այժմ	28.3.Պատիժը կրելուց հետո
1. Իմ սեփականությունը հանդիսացող բնակարանում	1	1	1
2. Բնակարանում, որի համասեփականատեր եմ հանդիսանում	2	2	2
3. Վարձով բնակարանում	3	3	3
4. Ընկերներիս/ազգականներիս բնակարանում	4	4	4
5. Անօթևան եմ	5	5	5
6. ՔԿՀ-ում	6	6	6

29. Եղե՞լ եք արդյոք հաշվառված ոստիկանությունում անչափահաս տարիքում:

1. ☐ Այո /նշել պառճառը/ _____
2. ☐ Ոչ

30. Ո՞ր տարիքում եք կատարել առաջին հանցանքը:

1. Մինչև 14 տարեկանը
2. 14-15 տարեկանում
3. 16-17 տարեկանում
4. 18-25 տարեկանում
5. 25–ից հետո

31. Ո՞ր տարիքում է կայացվել առաջին դատավճիռը Ձեր նկատմամբ:

1. 14-15 տարեկանում
2. 16-17 տարեկանում
3. 18-25 տարեկանում
4. 25–ից հետո

32. Ո՞ր անգամն եք դատապարտվել:

1. ☐ Երկրորդ
2. ☐ Երրորդ
3. ☐ Չորրորդ
4. ☐ Հինգերորդ և ավելի /նշել/ _____

33. Նշեք, խնդրեմ, քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածներով եք դատապարտված եղել: (*Անհրաժեշտության դեպքում՝ տողեր ավելացրեք:*)

1. Առաջին անգամ _____
2. Երկրորդ անգամ _____
3. Երրորդ անգամ _____
4. Չորրորդ անգամ _____

34. Նշեք, խնդրեմ, պատիժը կրելու թվականները: (*Անհրաժեշտության դեպքում՝ տողեր ավելացրեք:*)

1. Առաջին անգամ _____
2. Երկրորդ անգամ _____
3. Երրորդ անգամ _____
4. Չորրորդ անգամ _____

35. Ի՞նչ պատիժ եք կրում հիմա և ինչպիսի՞ պատիժ եք կրել նախկինում: (*Անհրաժեշտության դեպքում՝ սյունյակներ ավելացրեք:*)

	35.1.Առաջին անգամ	35.2.Երկրորդ անգամ	35.3. Երրորդ անգամ	35.4. Չորրորդ անգամ
1. Ազատազրկում որոշակի ժամկետով	1	1	1	1
2. Ազատազրկում, պատիժը պայմանականորեն չի կիրառվել	2	2	2	2
3. Կալանքը՝ որպես պատիժ	3	3	3	3
4. Տուգանք	4	4	4	4
5. Հանրային աշխատանք	5	5	5	5
6. Այլ (նշել) _____	6	6	6	6

36. Եթե երբևէ եղել եք ազատազրկված, ապա որքա՞ն ժամանակ:(*Անհրաժեշտության դեպքում՝ սյունյակներ ավելացրեք:*)

	36.1.Առաջին անգամ	36.2.Երկրորդ անգամ	36.3.Երրորդ անգամ	36.4.Չորրորդ անգամ
Նշել անազատության մեջ գտնվելու հստակ ժամկետը				

37. Խափանման ի՞նչ միջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ: (*Անհրաժեշտության դեպքում՝ սյունյակներ ավելացրեք:*)

	37.1.Առաջին անգամ	37.2.Երկրորդ անգամ	37.3.Երրորդ անգամ	37.4.Չորրորդ անգամ
1. Կալանավորում	1	1	1	1
2. Գրավ	2	2	2	2
3. Ստորագրություն չհեռանալու մասին	3	3	3	3
4. Այլ (նշել) _____	4	4	4	4

38. Ձեր կողմից կատարված հանցանքները եղե՞լ են խմբակային:
(*Անհրաժեշտության դեպքում՝ սյունյակներ ավելացրեք:*)

	38.1.Առաջին անգամ	38.2.Երկրորդ անգամ	38.3.Երրորդ անգամ	38.4.Չորրորդ անգամ
1. Այո	1	1	1	1
2. Ոչ	2	2	2	2

39. Եթե այո, ապա Դուք հանդիսացել եք:
(*Անհրաժեշտության դեպքում՝ սյունյակներ ավելացրեք:*)

	39.1.Առաջին անգամ	39.2.Երկրորդ անգամ	39.3.Երրորդ անգամ	39.4.Չորրորդ անգամ
1. Կազմակերպիչ	1	1	1	1
2. Դրդող	2	2	2	2
3. Համակատարող	3	3	3	3
4. Օժանդակող	4	4	4	4

40. Հանցանքը կատարելիս եղե՞լ են արդյոք ծանրացուցիչ հանգամանքներ:
(*Անհրաժեշտության դեպքում՝ սյունյակներ ավելացրեք:*)

	40.1.Առաջին անգամ	40.2.Երկրորդ անգամ	40.3.Երրորդ անգամ	40.4.Չորրորդ անգամ
1. Այո	1	1	1	1
2. Ոչ	2	2	2	2

41. Եթե այո, ապա նշեք, խնդրեմ, ինչպիսի՞:_____

42. Դատարանի կողմից Ձեր նկատմամբ դատավճիռը կայացնելիս՝ հաշվի առնվել են արդյոք մեղմացուցիչ հանգամանքներ:
(*Անհրաժեշտության դեպքում՝ սյունյակներ ավելացրեք:*)

	42.1.Առաջին անգամ	42.2.Երկրորդ անգամ	42.3.Երրորդ անգամ	42.4.Չորրորդ անգամ
1. Այո	1	1	1	1
2. Ոչ	2	2	2	2

43. Եթե այո, ապա նշեք, խնդրեմ, ինչպիսի՞:_____

44. Ի՞նչը Ձեզ մղեց կատարել հանցավոր արարք(ներ)ը:
(Անհրաժեշտության դեպքում՝ սյունյակներ ավելացրեք:)

	44.1.Առաջին անգամ	44.2.Երկրորդ անգամ	44.3.Երրորդ անգամ	44.4.Չորրորդ անգամ
1. Նյութական դժվարությունները	1	1	1	1
2. Շրջապատը	2	2	2	2
3. Ձայրույթը, վրեժ լուծելու ցանկությունը	3	3	3	3
4. Հասարակության վերաբերմունքը	4	4	4	4
5. Ես հանցանք չեմ կատարել	5	5	5	5
7. Այլ /նշել/_____	6	6	6	6

45. Ինչպե՞ս փոխվեց Ձեր կյանքը առաջին դատապարտումից հետո (*հարցը տալ, եթե առաջին պատիժը ազատազրկում չէր*):

	Դեպի լավը	Չեն փոխվել	Դեպի վատը
1.Ընտանիքի անդամների հետ հարաբերությունները	1	2	3
2. Ազգականների հետ հարաբերությունները	1	2	3
3. Հարևանների հետ հարաբերությունները	1	2	3
4. Ընկերների հետ հարաբերությունները	1	2	3
5. Նյութական բարեկացությունը	1	2	3
6. Եկամուտը	1	2	3
7. Բնակարանային պայմանները	1	2	3
8. Աշխատանքը	1	2	3
9. Առողջական վիճակը	1	2	3

46. Ինչպե՞ս փոխվեց Ձեր կյանքը առաջին ազատազրկումից հետո:

	Դեպի լավը	Չեն փոխվել	Դեպի վատը
1.Ընտանիքի անդամների հետ հարաբերությունները	1	2	3
2. Ազգականների հետ հարաբերությունները	1	2	3
3. Հարևանների հետ հարաբերությունները	1	2	3
4. Ընկերների հետ հարաբերությունները	1	2	3
5. Նյութական բարեկացությունը	1	2	3
6. Եկամուտը	1	2	3
7. Բնակարանային պայմանները	1	2	3
8. Աշխատանքը	1	2	3
9. Առողջական վիճակը	1	2	3

***47.* Ինչպե՞ս եք հիմա գնահատում կատարվածը:**
(Անհրաժեշտության դեպքում՝ այլնյակներ ավելացրեք:)

	47.1.Առաջին անգամ	**47.2.Երկրորդ անգամ**	**47.3.Երրորդ անգամ**	**47.4.Չորրորդ անգամ**
1. Ես նորից նույն կերպ կվարվեի, դա անհրաժեշտ էր	1	1	1	1
2. Թեև կատարած արարքս բացասական էր, սակայն պատիժը չափազանց խիստ էր	2	2	2	2
3. Զղջում եմ կատարածիս համար, այլևս երբևէ նման քայլի չեմ դիմի	3	3	3	3
4. Այլ /նշել/_____	4	4	4	4

48. Պատժի նպատակը Ձեզ բացատրվե՞լ է:
(Անհրաժեշտության դեպքում՝ պատասխաններ ավելացրեք:)

	48.1.Առաջին անգամ	48.2.Երկրորդ անգամ	48.3.Երրորդ անգամ	48.4.Չորրորդ անգամ
1. Այո	1	1	1	1
2. Ոչ	2	2	2	2

49. Եթե այո, ապա մանրամասնեք՝ ո՞ւմ կողմից և ինչպե՞ս:

_____

50. Պատիժը կրելու ընթացքում Ձեզ հետ աշխատե՞լ է հոգեբանը:
(Անհրաժեշտության դեպքում՝ պատասխաններ ավելացրեք:)

	50.1.Առաջին անգամ	50.2.Երկրորդ անգամ	50.3.Երրորդ անգամ	50.4.Չորրորդ անգամ
1. Այո	1	1	1	1
2. Ոչ	2	2	2	2

51. Եթե այո, ապա նշեք հոգեբանի աշխատանքի դրական և բացասական կողմերը:

51.1.Դրական 51.2.Բացասական

1. _____ 1._____
2. _____ 2._____
3. _____ 3._____

52. Պատիժը կրելու ընթացքում Ձեզ հետ աշխատե՞լ է սոցիալական աշխատողը: *(Անհրաժեշտության դեպքում՝ պատասխաններ ավելացրեք:)*

	52.1.Առաջին անգամ	52.2.Երկրորդ անգամ	52.3.Երրորդ անգամ	52.4.Չորրորդ անգամ
1. Այո	1	1	1	1
2. Ոչ	2	2	2	2

53. Եթե այո, ապա նշեք սոցիալական աշխատողի աշխատանքի դրական և բացասական կողմերը:

53.1.Դրական 53.2.Բացասական

1. _____ 1._____
2. _____ 2._____
3. _____ 3._____

54. Պատիժը կրելու ընթացքում Ձեզ հետ աշխատե՞լ է իրավաբանը:
(Անհրաժեշտության դեպքում՝ պատասխաններ ավելացրեք:)

	54.1.Առաջին անգամ	54.2.Երկրորդ անգամ	54.3.Երրորդ անգամ	54.4.Չորրորդ անգամ
1. Այո	1	1	1	1
2. Ոչ	2	2	2	2

55. Եթե այո, ապա նշեք իրավաբանի աշխատանքի դրական և բացասական կողմերը:

55.1.Դրական 55.2.Բացասական

1. _____ 1._____
2. _____ 2._____
3. _____ 3._____

56. Պատիժը կրելու ընթացքում Ձեզ հետ աշխատե՞լ է եկեղեցականը:
(Անհրաժեշտության դեպքում՝ այլնյակներ ավելացրեք:)

	56.1.Առաջին անգամ	56.2.Երկրորդ անգամ	56.3.Երրորդ անգամ	56.4.Չորրորդ անգամ
1. Այո				
2. Ոչ				

57. Եթե այո, ապա նշեք եկեղեցականի աշխատանքի դրական և բացասական կողմերը:

57.1.Դրական 57.2.Բացասական

1. _____ 1._____
2. _____ 2._____
3. _____ 3._____

58. Վարչակազմի այլ մասնագետներ *(ռեժիմի գծով պատասխանատու, հսկիչ, տեսուչ և այլն)* Ձեզ հետ աշխատաե՞լ են պատիժը կրելու ընթացքում:
(Անհրաժեշտության դեպքում՝ այլնյակներ ավելացրեք:)

	58.1.Առաջին անգամ	58.2.Երկրորդ անգամ	58.3.Երրորդ անգամ	58.4.Չորրորդ անգամ
1. Այո	1	1	1	1
2. Ոչ	2	2	2	2

59. Եթե այո, ապա նշեք ո՞վ է աշխատել և ինչպե՞ս: _____
60. Ասացեք, խնդրեմ, ինչո՞վ եք զբաղվում ազատ ժամանակ: _____
61. Ձեր կարծիքով ի՞նչը կարող է հետ պահել կրկին հանցանք կատարելուց:_____

62. Ինչպե՞ս կգնահատեիք Ձեր վերաբերմունքը:

	62.1. Պետական օրենքներին	62.2. “Գողական” օրենքներին
Լիովին ընդունում եմ	1	1
Ավելի շուտ ընդունում եմ	2	2
Եվ ընդունում եմ, և չեմ ընդունում	3	3
Ավելի շուտ չեմ ընդունում	4	4
Բոլորովին չեմ ընդունում	5	5

Լրացուցիչ նշումներ՝

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ